ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

1988 թվականի փետրվարին Հայաստանում սկսվեց Արցախյան շարժումը:

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(80-րդ տարի) Թիվ-2 (1708) — Փետրվար 2026

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1 - Առաջնորդող

Երկրի իրավատերն ու իշխանության աղբյուրը (էջ 1-2)

2 - Քաղաքական

Տարոն Վլադիկի Հակոբյան
Միացումից անկախացում (Արցախյան շարժման 36-րդ տարեդարձի առիթով) (էջ 3-11)

3 - Պատմաքաղաքական

Անի Մելքոնյան
Փետրվարից փետրվար՝ կամ հայ ժողովրդի փետրվարյան վերածնունդները (էջ 12-15)

4 - Հայ Դատ

Մարի Հովհաննիսյան
Հայության ջարդերը Սումգայիթում (էջ 16-20)

5 - Բնապահպանություն

Արմեն Վարդանյան
Անտեսանելի քիլլերը. Հայաստանը ուռուցքաբանական հիվանդությունների առաջատար երկրների եռյակում (էջ 21-25)

6 - Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Ամբիցիաների վտանգները քաղաքական գործընթացներում (էջ 26-28)

Անժելա Հարությունյան
Լեզվական ինքնություն և թվային իրականություն (էջ 29-31)

7 - Գաղափարական

Արամ Շահնազարյան
Կոմպրադորական բուրժուազիայի անցյալն ու ներկան (էջ 32-34)

8 - Դեմքեր և դեպքեր

Աբերտ Մուշեղյան
Մուրճ կամ զնդան
Ավետիք Իսահակյանի 150-ամյա հոբելյանի առիթով (էջ 35-42)

9 - Թարգմանություն

Էրիգ Սովէ
Ուրիշները ի՞նչ կ՚ըսեն
– Կրնա՞նք ապաքաղաքական ըլլալ եւ, մանաւանդ, ընդունելի՞ ուղի մըն է այդ (էջ 43-44)

Երկրի իրավատերն ու իշխանության աղբյուրը

Վերջին շրջանում առավել մեծ ծավալ ու ագրեսիվ բնույթ է ստացել իշխանության և նրան ծառայող ուժերի հարձակումն ազգային ուժերի դեմ: Քննադատությունները հաճախ համեմվում են կամ վերածվում սպառնալիքների, թե ընդդիմադիր ուժերի հաղթանակի դեպքում խաղաղություն չի լինի, պետությունը կհայտնվի աղետալի իրավիճակների մեջ, և թե իրենք թույլ չեն տա ընդդիմության հաղթանակը: Այլ պարագաներում այս թիմի գործիչների ու արբանյակ ուժերի բերանով հրապարակ է նետվում այն միտքը, թե այս կամ այն կուսակցությանը պետք է արգելել մասնակցելու գալիք ընտրություններին: Փաշինյանական իշխանությունը երբեք էլ ժողովրդավար չի եղել, իսկ «Մենք թույլ չենք տա» արտահայտությունը պարզորոշ փաստում է, որ իրավապահ համակարգը նրա կամքին հլու, բռնապետական իշխանության հետ հանցավոր գործարքի մեջ գտնվող, կույր գործիք է, որն ըստ հրահանգի պետք է արգելի, բանտարկի և այլն:

Բնականաբար, իշխանության թիրախում քաղաքական այն ուժերն են, որոնց հաղթանակի հավանականությունը լրջորեն խուճապի է մատնել իշխող ուժին: Կարող ենք արձանագրել, որ հիմնական մրցակից ուժերի կողմից ընտրություններին մասնակցելու ձևի ընտրությունը հաղթանակի իրական հնարավորություն է ստեղծել, ինչն էլ հունից հանել է իշխանությունը կորցնելու հեռանկարից սարսափող ՔՊ-ին և նրա ղեկավարին: Խոսքն ազգային ընդդիմադիր ուժերի մարտավարության մասին է՝ ընտրություններին մասնակցելու մի քանի առանձին դաշինքներով, իրենց շուրջը հնարավորինս համախմբելով համախոհ փոքր քաղաքական ուժերին՝ մի կողմից մեծացնելով ներուժը, մյուս կողմից՝ կանխելով այս ուժերի ձայների փոշիացումը:

Նախորդ տարվա վերջերին ՀՅԴ Հայաստանի ղեկավարությունը հայտարարեց, որ բանակցում է ազգային ընդդիմադիր հիմնական ուժերի հետ որդեգրելու վերաբերյալ մի քանի սկզբունքներ, մասնավորապես՝ նախընտրական շրջանում խուսափելու միմյանց քննադատելուց, հայտարարելու, որ ընտրություններից հետո չեն համագործակցի ՔՊ-ի հետ, հետընտրական գործընթացներում հաշվի նստելու յուրաքանչյուրի ձեռք բերած արդյունքի հետ և այլն:

Վերապահ մնալով վերջնական եզրահանգումներից, այնուամենայնիվ, թվում է, թե քաղաքական տվյալ ուժերը գնում են այդ սկզբունքները որդեգրելու ճանապարհով, լուրջ կացություն ստեղծելով նախընտրական քաղաքական դաշտում և ցրելով այն մտայնությունը, թե ընդդիմադիր դաշտը պառակտված է: Այս դեպքում կարելի է ասել, որ երկրի ապագայով մտահոգ քաղաքական ուժերը պատրաստ են ընտրական մրցապայքարի գերխնդիր դիտել պետությունն ինքնիշխանությունից զրկելու, այն թուրքադրբեջանական գաղութացման ենթարկելու հեռանկարի կանխումը: Ազգային ուժերի համախոհության մեջ

դրսևորվում է ժողովրդի համար այնքան անհրաժեշտ ազգային միասնականության կայացման հնարավորությունը:

Անկախացման օրերից ցայսօր շատերը ազգային-քաղաքական միասնություն ասելով հասկացել են տարբեր ուժերի և հոսանքների մեխանիկական միավորումը «մեկ կաթսայի մեջ», այսինչ տարբեր գաղափարախոսություններ և քաղաքական ծրագրեր դավանող միավորների նման համախմբումներին սովորաբար հաջորդում են շոնդալի պառակտումները: Իրական միասնությունը կարող է կայանալ միայն տարբեր ուժերի համագործակցությամբ՝ ընդհանուր ծրագրերի և նպատակների շուրջ: Վերևում նշվեց, թե մեր դեպքում որն է ընդհանուր նպատակը: Անհրաժեշտ է, որ քաղաքական ընդդիմադիր դաշտը համադրված գործունեությամբ ընթանա դեպի այդ նպատակի իրագործումը, իսկ թե դրանից հետո որ ուժն առավել մեծ արդյունքի կհասնի և առաջիկա ժամանակաշրջանի համար երկրի ղեկավար կառաջադրի ու ինչ ընդհանուր խճանկար կունենա պետական իշխանության քաղաքական դասավորությունը, կորոշի ընտրողի վերաբերմունքը: Գործող իշխանությանը մերժող ընտրողը հնարավորություն կստանա ընտրություն կատարելու ազգային մի քանի ուժերի միջև: Որքան էլ մեծ լինի թերահավատությունը ընտրական գործընթացի նկատմամբ, սա աշխարհում ընդունված միակ ընդունելի գործընթացն է, որին մասնակցելով էլ ընտրողը պատասխանատու է դառնում երկրի ապագայի համար:

Մյուս կողմից իշխանությունը գործարկել է իր պառակտիչ քարոզչությունն ու քաղաքական դաշտի տարբեր հատվածներում տեղադրել է իր «ականները», որոնք զբաղված են ազգային ընդդիմադիր դաշտի վարկաբեկմամբ: Ակնհայտ է, որ իշխանությունը կշահի, եթե կարողանա ընտրությունների նկատմամբ սերմանել հիասթափության, հուսախաբության և վախի մթնոլորտ ու ապագա ընտրողներին մղել կրավորականության: Պետք է բոլորի համար ակնհայտ լինի, որ գործող իշխանությունն իր փոքրաթիվ ընտրազանգվածով կարող է հաղթել միայն այն դեպքում, երբ ընտրություններին քիչ մարդ մասնակցի: Ինչ վե-

բաբերում է իշխանության վախերին ընդդիմության որդեգրած մարտավարության վերաբերյալ, պատահական չէ, որ ՔՊ-ի ներկայացուցիչները հաճախ են հայտարարում, թե Գյումրիի սցենարը չպետք է կրկնվի:

Ներքաղաքական գործընթացների ղեկը մշտապես ձեռքում պահել փորձող իշխանությունն այժմ տեսնում է, որ նախընտրական զարգացումները գնալով դուրս են գալիս իր վերահսկողության դաշտից և սպառնում են գլորվող ձնագնդի նման անկասելի թափ հավաքել: Իշխանությունը չի կարող մոռանալ, որ ընտրությունների նախօրյակին իր տարիների գործունեության հետևանքը միայն պարտություններն ու ձախողումներն են:

2018 թվականին բռնի իշխանափոխություն իրականացնելու ժամանակ Նիկոլ Փաշինյանն արդարացնում էր իր գործողությունները՝ ասելով, թե գործող իշխանությունը կորցրել է քաղաքական լեգիտիմությունը: Այսօր արդեն ակնհայտ է, որ Երկրի ղեկավարն ու նրա առաջնորդած ուժը կորցրել են ոչ միայն քաղաքական ու բարոյական լեգիտիմությունը, այլև որքան հնարավոր է ոտնահարել ու բռնաբարել են գործող սահմանադրական կարգը: Նիկոլ Փաշինյանը տեսնում է նաև, որ այլևս մարած քարտ է երկրին խաղաղություն բերելու իր գլխավոր փաստարկը: Պարզ հայ մարդը հասկանում է, որ թշնամին Հայաստանի դեմ պատերազմում էր, քանի դեռ հանդիպում էր դիմադրության, բայց եթե նրա բոլոր պահանջները Հայաստանի ղեկավարությունը գլուխը կախ կատարում է՝ էլ ինչի՞ համար պետք է նրա դեմ պատերազմի: Ադրբեջանի նախագահը շարունակում է կրկնել, որ խաղաղության պայմանագիր կկնքի միայն այն դեպքում, եթե Հայաստանը փոխի Սահմանադրությունը: Ուրեմն հիմք ունե՞ն այն հայտարարությունները, թե տարածաշրջանն արդեն թևակոխել է երկարատև խաղաղության ժամանակաշրջան: Երջանիկ ապագայի խոստումով իշխանության վրա վերահաստատված ուժը, ոչ մի դրական ասելիք չունենալով, արդեն իսկ սկսած իր նախընտրական քարոզչությունը կառուցում է մրցակից ուժերի հաղթանակի դեպքում պատերազմի անխուսափելիության վախը տարածելով: Ժողովրդի ներկա տրամադրություններից խուճապահար իշխանությունն անցել է վերջինիս «կաշառելու» գործողությունների՝ նախորդ տարվա վերջին մեկ քառորդով կրճատվեց առանց այն էլ ծառայողների պակաս ունեցող բանակում պարտադիր զինվորական ծառայության ժամկետը, ապրիլ ամսից բարձրացվելու են կենսաթոշակները, կենսաթոշակառուների համար սահմանվել է բժշկական ապահովագրության համակարգ և այլն: Իհարկե, այդ բոլորը ցանկալի քայլեր են, սակայն, հիմնվելով, այդ թվում իշխանությունների նախորդ հայտարարությունների վրա, մասնագետները մտահոգ են, որ առկա ֆինանսական հնարավորությունների պայմաններում նման քայլերն ուղղակի կկաթվածահարեն համապատասխան համակարգերի գործունեությունը: Իշխանության համար, սակայն, գլխավորը ամեն գնով ընտրությունների բեմադրմամբ վերարտադրվելն է: Ինչու բեմադրմամբ, որովհետև վերջին շրջանի հայտարարություններից հետո նրանք ակնկալում են Արևմուտքի հովանավորությունն ամեն տեսակի ընտրակեղծարարությունների համար:

Գայթակղվելով Ուկրաինայի արկածախնդիր իշխանության օրինակից՝ Հայաստանի իշխանությունը ցանկանում է Արևմուտքի վրա ծախել իբրև թե Հայաստանում ռուսական ազդեցության դեմ պայքարելու, Անդրկովկասից վերջինիս դուրս մղելու իր «պատմական առաքելությունը»: Որ այսօրվա հավաքական արևմուտքը աչք է փակում տարիներ շարունակվող ՔՊ-ական անօրինական գործելակերպի վրա և պատրաստակամություն է հայտնում գալիք գործընթացներում լինելու այս ուժի հովանավորը, խայտառակ մի իրողություն է, ինչն ակնառու է բոլորի համար:

Պետք է հասկանալ, որ առաջիկա երեք ամիսների ընթացքում ընդդիմադիր ուժերը հսկայական անելիք ունեն, որը կարելի է անվանել երկխոսություն ժողովրդի հետ: Անհրաժեշտ է ակտիվ քաղաքական դիրքորոշման մղել յուրաքանչյուր հայ մարդու՝ բացատրելով նրան, որ ցանկացած պարագայում ընտրություն տեղի է ունենալու, անմիջականորեն ազդելով իր ու իր զավակների ճակատագրի վրա: Թերահավատության գիտակցությամբ ծանրաբեռնված հայը պետք է հասկանա, որ մեր այս փոքր երկրում որևէ տեղից փրկիչներ չեն հայտնվելու, և, ուզես թե չուզես, ընտրությունը տեղի է ունենալու նրանց միջև, ովքեր հրապարակում են և գլխավորաբար վաղուց ծանոթ են: Մենք այս ժողովրդի մասնիկն ենք և լավ հասկանում ենք, որ երբ տարիների ընթացքում առաջ գնալու փոխարեն մեր կյանքը դեպի ետ է գնում, երբ անարդարություններն ուղեկցել են մեզ անկախության ողջ շրջանում, շատ հասկանալի և պատճառաբանված է թերահավատությունը բոլորի նկատմամբ, սակայն կա ընտրություն երկրի ապագան այն կործանողներին թողնելու և նրանց միջև, ովքեր սխալներով հանդերձ փաստել են իրենց նվիրվածությունը հայ մարդուն, հայոց պետությանն ու համազգային նպատակներին: Մենք հավատացած ենք, որ երբ ժողովրդի մեծամասնությունը ոտքի կանգնի, ո՛չ ներքին և ո՛չ արտաքին թշնամիները ի զորու չեն լինելու կոտրել նրա կամքը կամ գողանալ նրա արդար և ինքնուրույն ընտրության արդյունքը: Եղած թերահավատությամբ հանդերձ ակնհայտ է, որ իրականությունից զզված ժողովուրդը հաղթահարել է վախը և դանդաղորեն ոտքի է կանգնում: Քաղաքական ազգային ուժերի գերխնդիրը պետք է լինի կրկին հուսադրվող ժողովրդի ազատ ընտրության ապահովումը: Գուցե սա մեր ինքնիշխանության առջև ծառացած պատմական մարտահրավերներն հաղթահարելու վերջին հնարավորությունն է, և ազգային ուժերն ավելի կարևոր դաշնակից չեն կարող ունենալ, քան իշխանության աղբյուր և երկրի իրավատեր ժողովուրդն է: ■

Միացումից անկախացում
(Արցախյան շարժման 36-րդ տարեդարձի առիթով)

Տարոն Վլադիկի Հակոբյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակից, դասավանդում է ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում

Ներածություն

Չնայած ԽՍՀՄ գոյության 70-տարիների ընթացքում գործադրված բռնություններին ու հալածանքներին՝ արցախահայությունը երբեք չի դադարեցրել Մայր Հայաստանին միանալու իր համառ պայքարը: Միութենական հանրապետության կարգավիճակ ունեցող Խորհրդային Հայաստանի և նրանից արհեստականորեն տարանջատված ու Ադրբեջանին բռնակցված Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մերձեցման ու վերամիավորման քաղաքական ձգտումները Միացյալ Հայաստանի համար պայքարի յուրօրինակ դրսևորում էին ԽՍՀՄ բռնատիրական վարչակարգի պայմաններում:

Տասնամյակներ շարունակ Խորհրդային Հայաստանում ու Արցախում դիմումների, խնդրագրերի և ժողովրդական հուզումների ձևով արտահայտված այդ համառ պայքարի առանձին դրվագները լռեցվել կամ ճնշվել են խորհրդային ղեկավարության կողմից: Ու միայն 1985 թվականից հետո ԽՍՀՄ-ում ստեղծված համեմատաբար նպաստավոր քաղաքական պայմանները հնարավորություն ընձեռեցին նորից կյանքի կոչելու միացման գաղափարը: Գորբաչովյան, այսպես կոչված, «վերակառուցման» քաղաքականությունը նպաստեց արցախահայության քաղաքական պայքարի ծավալմանը, և ազատագրումն ադրբեջանական բռնատիրությունից դարձավ օրակարգի հարց: Իսկ ավելի ուշ՝ ԽՍՀՄ-ի փլուզման արդյունքում, Շարժման սևեռուն նպատակը՝ «Միացումը», փոխակերպվեց անջատման միջոցով անկախության նվաճման հիմնախնդրի, որը երկարաձգում, բայց ամենևին էլ չի փակում Միացյալին հասնելու ժամկետներն ու ուղիները:

Արցախյան շարժման նոր փուլը սկզբնավորվեց համաժողովրդական զարթոնքի հորձանուտում: Արտաքուստ թվում էր, թե ընդհանուր շարժումը ղեկավարվում է մեկ կենտրոնի կողմից, սակայն վերլուծելով պատմական դեպքերը և քաղաքական իրադարձությունների հաջորդականությունը, կարելի է ենթադրել, որ որքան էլ պարադոքսալ է նրա ղեկավարման հիմքում կանգնած էին իրար ծայրահեղ հակոտնյա երկու քաղաքական ուժեր:

Սույն հոդվածում կփորձենք բացահայտել և համակարգային վերլուծության ենթարկել այնպիսի փոխկապակցված, միմյանց փոխպայմանավորող էական հիմնահարցեր, ինչպիսիք են քաղաքական դաշտի ձևավորման նախադրյալները, քաղաքական ուժերի դիրքորոշումները, ինչպես նաև ներքաղաքական հակասությունների պատճառները:

Խնդրո առարկա հիմնահարցը լուսաբանվել և վերլուծվել է արխիվային նյութերի, տպագիր սկզբնաղբյուրային գրականության, մամուլի հրապարակումների, հետազոտությունում արծարծված հիմնահարցերին վերաբերող գիտական գրականության հիման վրա:

Կարևոր սկզբնաղբյուրներ են իրադարձությունների մասնակիցների և ականատեսների հուշագրությունները, օրագրություններն ու փաստագրությունները: Այս ժանրի գրավոր աղբյուրների արժեքն այն է, որ, պարունակելով մանրամասներ, լրացնում ու հարստացնում են իրադարձությունների մասին պատկերացումները, օգնում ամբողջականորեն հասկանալու դեպքերի զարգացման տրամաբանությունը, դրանց պատճառահետևանքային կապը, պատասխանել բազմաթիվ հարցադրումների:

Ուսումնասիրության մեջ տեղ են գտել քաղաքական տարբեր կողմնորոշումներ ունեցող քաղաքական գործիչների վկայություններ:

Այսպիսով՝ ամբողջությամբ օգտագործված սկզբնաղբյուրները հնարավորություն կտան վերականգնելու ուսումնասիրվող շրջանի քաղաքական գործընթացների ամբողջական պատկերը:

Արցախյան շարժման նոր փուլի սկզբնավորումը

Արցախյան ազգային-ազատագրական շարժումը նոր փուլ թևակոխեց Խորհրդային Միությունում գորբաչովյան, այդպես կոչված, «վերակառուցման» քաղաքականությանն անցնելուց հետո: 1980-ական թվականների կեսերից մտավորականության և ուսանողության շրջանում արդեն սկսել էին բարձրաձայն

քննարկվել ԼՂԻՄ-ում տասնամյակներ շարունակ կուտակված քաղաքական, տնտեսական, մշակութային հիմնախնդիրները՝ մատնանշելով հայկական երկրամասը մայր Հայաստանին վերամիավորելու վաղեմի իղձերի իրագործման ուղիները:

Քննարկվող հարցերի գործնական ընթացքն ապահովելու նպատակով դեռևս 1981 թ. Ստեփանակերտում ստեղծվել էր «Արցախ» ընդհատակյա կազմակերպությունը, իսկ 1986 թ. այն վերանվանվեց «Արցախական միություն»[1] կամ «Արցախյան ազգային միություն»:[2]

Կազմակերպության ստեղծման գործում մեծ դերակատարություն ունեցան Արկադի Կարապետյանը, Հակոբ Խաչատրյանը, Իգոր Մուրադյանը, Արթուր Մկրտչյանը, Մանվել Սարգսյանը, Էմիլ Աբրահամյանը և այլք:[3] Կազմակերպության կենտրոնական կոմիտեի նախագահ ընտրվեց Արկադի Կարապետյանը, իսկ քարտուղար՝ Հակոբ Խաչատրյանը: Միության մեջ ընդգրկված էին նաև երիտասարդ մտավորականներ, ուսանողներ, որոնք ընդհատակյա պայքարի փորձ ձեռք բերեցին ու ազատագրական շարժման կրողները դարձան՝ հետագայում ստանձնելով ուսանողության կազմակերպման, նրանց գաղափարական կողմնորոշման առաքելությունը:

1987 թ. վերջերին – 1988 թ. սկզբներին արցախյան ազգային-ազատագրական պայքարը նոր թափ ստացավ: Շարժման մեջ ներգրավվածները սկզբնական շրջանում հարցի լուծումը փնտրում էին Խորհրդային Միության նոր ղեկավարության հետ ակտիվ շփումների մեջ: Շարժման ղեկավարությունն ամեն առիթով փորձում էր մոսկովյան ատյաններում արցախցիների պայքարը ներկայացնել վերակառուցման և հրապարակայնության գաղափարների լույսի ներքո՝ դրան օրինական տեսք տալու համար:

Դրա առաջին դրսևորումը դարձավ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու 1987 թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին տեղի ունեցած ստորագրահավաքը: Կազմակերպության ջանքերով հավաքվում էին Արցախի և Ադրբեջանի տարածքում հայության իրավունքների ոտնահարումը և «սպիտակ ցեղասպանությունը» հաստատող փաստեր:

1988 թ. փետրվարի սկզբին կազմակերպությունը լուծարվում է՝ անդամների քաղաքական տարաձայնությունների պատճառով:[4]

Շարժման մեջ, բացի ազգային-ազատագրական պայքարի գաղափարով առաջնորդվող հայրենասիրական ուժերից, ներգրավվեցին նաև կոմունիստական կուսակցական ակտիվը, ինչպես նաև հիմնարկ ձեռնարկությունների ղեկավարները: Միաժամանակ նշենք նաև, որ գոյություն ունի կարծիք, թե և՛ Արցախում, և՛ Հայաստանում արդեն թափ հավաքած շարժման մեջ ընդգրկվեցին խորհրդային հատուկ ծառայությունների գործակալներ, ովքեր կարողացան շարժման վերահսկողությունը վերցնել իրենց ձեռքը՝ փոխելով դրա ընթացքը և ուղղությունը՝ ազգային նպատակներից անցնելով Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) ժողովրդավարացման համար ընդհանուր պայքարի: Այսօր նրանց գործունեության պատմությունը դեռևս լուսաբանված չէ:

1988 թ. փետրվարի կեսերին «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրատանը ստեղծվում է մի նոր նախաձեռնող խումբ, որի ղեկավար ընտրվեց Արկադի Մանուչարովը:[5] Քիչ անց, 1988 թ. մարտի 1-ին ստեղծվեց «Կոռնկ» հասարակական-քաղաքական կազմակերպությունը կամ կոմիտեն: Հիմնադիր ժողովում ընտրվեց խորհուրդ՝ հետևյալ կազմով. Արկադի Մանուչարով (նախագահ), Ռոբերտ Քոչարյան, Վարդան Հակոբյան, Մաքսիմ Միրզոյան (տեղակալներ), Գուրգեն Գաբրիելյան, Հրաչյա Բեգլարյան, Ժաննա Գալստյան, Համլետ Գրիգորյան, Արկադի Կարապետյան, Վալերի Մարության, Համլետ Մովսիսյան, Յուրի Ներսիսյան, Բենիկ Օվչյան:[6] Կոմիտեն իր աշխատանքները կանոնավոր հունի մեջ դնելու նպատակով ստեղծում է հանրահավաքների կազմակերպման, լոզունգների պատրաստման, ֆինանսների, քաղաքական հարցերի, գաղթի և արտագաղթի, լրատվության, հասարակական կարգի պահպանման, անվտանգության և քարտուղարության հանձնաժողովներ:[7]

1988 թ. մարտի 24-ին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշեց լուծարել «Կոռնկ» կոմիտեն, արգելել ցույցերը, գործադուլները և հանրահավաքները: Կոմիտեն անցավ ընդհատակ, իսկ 1988 թ. հուլիսի 29-ին տրոհվեց, վերջինիս հենքի վրա ստեղծվեցին «Տնօրենների խորհուրդ» և «Միացում» կազմակերպությունները:[8] «Տնօրենների խորհուրդ» կազմակերպությունը գլխավորեց Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի տնօրեն Բորիս Առուշանյանը,[9] իսկ «Միացումը»՝ Ռոբերտ Քոչարյանը: Սակայն այս նոր մարմիններն ի զորու չէին Արցախի ողջ տարածքում համակարգել օրեցօր թափ առնող ազատագրական պայքարը:

Դրան զուգահեռ, 1988 թ. փետրվարի 24-ին «Արցախյան ազգային միություն» կազմակերպության հիմքի վրա ստեղծվում է «Հայոց Ընկերվարական Արցախական Կուսակցությունը» (ՀԸԱԿ):[10] Սկզբնական շրջանում այն ավելի շատ դեկլարատիվ բնույթ

էր կրում՝ չուներ ծրագիր և կանոնադրություն: 1988 թ. սեպտեմբերի 17-ին հրավիրված ընդհանուր ժողովը հաստատում է կուսակցության ծրագիրը և կանոնադրությունը:[11] Ծրագրի առանցքը կազմում էր Հայ Դատը: Որպես գործունեության սկզբունք ՀԸԱԿ-ը որդեգրել էր ապակենտրոնացումը, հաշվի առնելով հայության և մասնավորապես՝ արցախահայության ազգային ու քաղաքական իրականության առանձնահատկությունները: Կազմավորվեց ղեկավարություն հետևյալ կազմով՝ Հակոբ Խաչատրյան (նախագահ), Լևոն Ավանեսյան (քարտուղար), Արկադի Կարապետյան (մարտական գործերի պատասխանատու), Գենադի Ներսիսյան, Աշոտ Սարգսյան, Վարդան Արզումանյան, Ալեքսանդր Ավետիսյան: ՀԸԱԿ բյուրոյին կից գործում էին գաղափարախոսության-քարոզչության, մարտական, տնտեսական և հատուկ բաժինները[12]:

ՀԸԱԿ-ը հրատարակում է «Վերածնունդ» պաշտոնաթերթը: ՀԸԱԿ-ը գտնում էր, որ հարցի լուծման, այսպես կոչված, քաղաքական՝ խաղաղ տարբերակը ցանկալի է, բայց ոչ իրատեսական, ուստի կոչ էր անում արցախահայությանը համախմբվել, զինվել և նախապատրաստվել ինքնապաշտպանության: Նույնիսկ Սումգայիթյան եղեռնագործությունից հետո ՀԸԱԿ ղեկավարությունը որոշում է արյանը արյամբ պատասխանել՝ պատժիչ գործողություն իրականացնել ադրբեջանաբնակ Ջամիլու գյուղում: Արցախի քաղաքական այլ ուժերը տեղեկանալով այդ մասին, կանխում են՝ «համոզելով», որ նման գործողությունը կվնասի ազգային-ազատագրական պայքարի քաղաքական ոգուն:[13]

Ղեկավար մարմնի հրահանգով ստեղծվեցին գաղտնի ինքնապաշտպանական ջոկատներ, որի կազմակերպման և զինման գործառույթները դրվեցին Արկադի Կարապետյանի և Աշոտ Ղուլյանի վրա (Բեկոր): Ինքնապաշտպանական ջոկատների հիմնական զինանոցը ինքնաշեն զենքերն էին: Այդ ժամանակ Արցախում լայն թափ էր ստացել ինքնաշեն զենքերի արտադրությունը: 1988 թ. նոյեմբերին փորձարկվում են Աշոտ Ղուլյանի նախագծած ականներն ու նռնակները, ինչպես նաև ականանետը:

Այսպիսով, վերոնշյալ սպառնալիքների պայմաններում՝ 1988 թ. փետրվարյան բուռն իրադարձությունների բովում ծնված զինված ազատագրական, ինքնապաշտպանական պայքարի գաղափարը դարձավ հրամայական անհրաժեշտություն: Սակայն վերոնշյալ կազմակերպությունները չէին կարող լիարժեք ստանձնել ազգային-ազատագրական պայքարի առաջատարի դերը, քանի որ չունեին քաղաքական ու զինված պայքարի փորձ և մշակված ռազմավարություն, այսինքն՝ այն, ինչ պահանջում է ազգային-ազատագրական շարժման տրամաբանությունը: Նշված դերակատարությունները կարող էին ստանձնել միայն փորձառու ազգային կուսակցությունները, որոնք, ավելի ուշ միացան շարժմանը:

Ստեղծված իրավիճակում ՀԸԱԿ ղեկավարությունը քաղաքական որոշում կայացրեց խորհրդակցություններ իրականացնել հայաստանյան քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ, որի նպատակն էր ձևավորել ազգային-ազատագրական պայքարի տրամաբանությանը համահունչ միասնական քաղաքական օրակարգ, ինչպես նաև համագործակցության ուղիներ:

Այս համատեքստում 1989 թ. ապրիլին Երևանում գաղտնի խորհրդակցություններ են տեղի ունեցել ՀՅԴ ներկայացուցիչների հետ: Երկարատև քննարկումներից հետո ՀԸԱԿ ներկայացուցիչները ՀՅԴ բյուրոյի հետ համաձայնության եկան այդուհետ հանդես գալու որպես ՀՅԴ Արցախի կառույց: ՀԸԱԿ ծրագիրն ու գործելաոճը շատ մոտ էին վերջինիս գաղափարական ու կազմակերպական նախասիրություններին:[14]

1989 թ. մայիսի 3-ին ՀՅԴ Բյուրոյի որոշմամբ հատուկ շրջաբերականով ստեղծվեց ՀՅԴ Արցախի «Անտառ» կոմիտեն՝ հետևյալ կազմով. Հակոբ Խաչատրյան, Լևոն Ավանեսյան, Արկադի Կարապետյան, Գենադի Ներսիսյան, Աշոտ Սարգսյան:

ՀՅԴ բյուրոյի որոշմամբ Արցախ է գործուղվում բյուրոյի գործիչ Վարանդ Փափազյանը: Նրա ցուցումներով և ակտիվ գործունեության շնորհիվ վերակազմվում են նախկին կուսակցական (ՀԸԱԿ) խմբերը, ստեղծվում են նորերը:[15]

Հետագայում ներքին տարաձայնությունների պատճառով Հակոբ Խաչատրյանը և մի շարք նախկին ՀԸԱԿ անդամներ դուրս եկան ՀՅԴ շարքերից: Վերջիններս 1990 թ. հիմնադրեցին «Հայ ազգայնական ճակատ» կազմակերպությունը,[16] որի գաղափարական հիմքը Գարեգին Նժդեհի կողմից մշակված Ցեղակրոն գաղափարախոսությունն էր: «Հայ ազգայնականության ճակատ» կազմակերպությունը, բացի քաղաքական թևից, ուներ նաև ռազմական թև, որը կոչվել է «Ցեղակրոն» կամավորական ջոկատ: Այն կազմավորվել է 1990 թվականի օգոստոսի 11-ին: Ջոկատում հիմնականում ընդգրկվել են ուսանողներ:[17] 1990–1993 թվականներին ջոկատը մասնակցել է Արցախի Հանրապետության Մարտունու (Ղարադաղլու), Ասկերանի (Փառուխ, Դահիրազ, Սառնաղբյուր), Շուշիի (Բերդաձորի ենթաշրջան), Մարտակերտի (Տոնաշեն, Թալիշ, «Պուշկինյալ» և հեռուստաաշտարակի բար-

ձունքների, Դրմբոն, Առաջաձոր) շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Արցախյան առաջին ազատամարտի ժամանակ ջոկատը տվել է 27 զոհ: 1992–1993 թթ. Արցախում ստեղծված ներքաղաքական բարդ իրավիճակում (ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության և Պաշտպանության պետական կոմիտեի միջև ծագած քաղաքական հակամարտության շրջանում) ջոկատի մի մասը ստանձնել է ԼՂՀ ԳԽ շենքի և նախագահության անդամների պահպանությունը: 1993 թվականին ջոկատը լուծարվել է: Արցախում ստեղծված քաղաքական նոր իրողության պայմաններում ջոկատի մարտիկների մի մասը նույնպես ձերբակալվեց քաղաքական հայացքների պատճառով: Նրանք անցան խոշտանգումների միջով, սակայն հանցակազմի բացակայության պատճառով ազատ արձակվեցին: Նույն բախտին արժանացավ նաև Հակոբ Խաչատրյանը:[18] Վերջինս բանտից ազատվելուց հետո ունեցավ հոգեբանական լուրջ խնդիրներ և մինչև մահկանացուն կնքելը չկարողացավ համակերպվել արժեհամակարգային փոփոխության իրողության հետ: Միաժամանակ նշենք, որ Հակոբ Խաչատրյանը չարժանացավ պետական որևէ ուշադրության:[19]

Քաղաքական գործընթացների հետագա ծավալումը Արցախում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ձևավորումը

ՀՅԴ-ն լինելով ազգային-ազատագրական պայքարի գաղափարակիր՝ նոր մարտահրավերներին դիմակայելու նպատակով անմիջապես իր վրա վերցրեց Արցախում ինքնապաշտպանական ջոկատների ստեղծման և զինման գործը:

Ընդառաջ գնալով օրվա հրամայականին՝ ՀՅԴ գործիչները, տեղի ազգային ուժերի հետ միասին, առաջին գործնական քայլերը ձեռնարկեցին ինքնապաշտպանության ջոկատները միավորելու ուղղությամբ: 1990 թ. կեսերից Արցախում արդեն գործում էր կենտրոնական շտաբ: Արցախի պաշտպանության կազմակերպման գործընթացը սկսեց համակարգվել մեկ կենտրոնից: Շտաբի ձևավորման գործընթացում մեծ դերակատարություն ունեցան Սամվել Աղայանը՝ Մուրադ Պետրոսյանը և այլն: Շտաբի պետ և ինքնապաշտպանության ուժերի առաջին հրամանատար դարձավ Արկադի Կարապետյանը (Դաշնակ Ագո):[20] Հետագայում հետախուզության պետ նշանակվեց Վալերի Բալայանը:[21] Յուրաքանչյուր շրջան ուներ իր հրամանատարությունը, որոնք ենթարկվում էին կենտրոնական շտաբին՝ բացառությամբ մի քանի ջոկատների:[22] Ինքնապաշտպանական ուժերը մարտական առաջին մկրտությունը ստացան Հյուսիսային Արցախում և Հադրութում:

Շարժումը ղեկավարելու և քաղաքական գործընթացները համակարգելու նպատակով կենտրոնական շտաբին կից ստեղծվեց 7 հոգուց բաղկացած՝ այսպես կոչված՝ «Կոորդինացիոն խորհուրդ», որի կազմում ընդգրկված էին Արցախում գործող քաղաքական ուժերի ներկայացուցիչները (Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյան, Գեորգի Պետրոսյան, Վալերի Բալայան, Ժաննա Գալստյան, Սերժ Սարգսյան, Ռոբերտ Քոչարյան, Մուրադ Պետրոսյան): Միաժամանակ նշենք, որ Կոորդինացիոն խորհրդի ստեղծմամբ փորձ կատարվեց համախմբել այդ ժամանակաշրջանում Արցախում գործող հակոտնյա երկու քաղաքական ուժերը: Խորհուրդը, հատկապես Շարժման առջև կանգնած դիվանագիտական բնույթի հարցերի լուծման գործում, ոչ միայն ցուցաբերում էր մեծ ակտիվություն, այլև դարձել էր գործողությունների օրինական, իրավական հիմքերի մշակման կենտրոն:

Մինչև ԼՂՀ հռչակումը և ԳԽ ընտրությունները, Արցախում որոշ չափով պահպանվում և գործում էին խորհրդային իշխանության մարմինները, սակայն մարզում ստեղծված իրադրությամբ և դեպքերի զարգացման ընթացքով թելադրված հիմնախնդիր-

ները լուծելու գործում վերջիններս ցուցաբերում էին երկչոտություն, ինչը բացասական ազդեցություն էր թողնում մարզի կառավարման համակարգի արդյունավետության վրա: Ստեղծված իրավիճակով պայմանավորված Կոորդինացիոն խորհուրդը մասամբ իր վրա վերցրեց կառավարման համակարգի լիազորությունները:

Արցախահայության վիճակն ավելի ծանրացավ ԽՍՀՄ լուծարման նախաշեմին: 1991 թ. օգոստոսից հետո՝ ԽՍՀՄ-ի փլուզման գործընթացի արագացման համատեքստում ստեղծվեց քաղաքական նոր իրադրություն. օգտվելով նպաստավոր պայմաններից՝ ԽՍՀՄ տարածքում գտնվող ազգային միավորումները հռչակեցին իրենց անկախությունը, որպեսզի չմնան կայսրության փլատակների տակ:

Մինչ այդ, ԽՍՀՄ պետական բարձրագույն օրենսդիր ատյանը 1990 թ. ապրիլի 3-ին ընդունել էր «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետությունների դուրս գալու հետ առնչվող հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքը: Այս օրենքը հստակեցնում էր ոչ միայն բոլոր միութենական հանրապետությունների, այլև ինքնավար կազմավորումների, անգամ ինքնավար շրջանների, և հոծ ապրող ազգային խմբերի՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու իրավական հիմունքները: Օրենքի 3-րդ հոդվածում ասվում էր. «Իր կազմում ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր ու շրջաններ ունեցող միութենական հանրապետություններում հանրաքվեն անց է կացվում յուրաքանչյուր ինքնավարության հաշվով առանձին: Ինքնավար հանրապետությունների և կազմավորումների ժողովուրդներին է մնում ԽՍՀՄ-ում կամ դուրս եկող միութենական հանրապետությունում մնալու, ինչպես նաև իր պետական կարգավիճակի հարցը դնելու իրավունքը: Այն միութենական հանրապետությունում, որտեղ կան տվյալ վայրի բնակչության մեծամասնություն կազմող և հոծ թվով բնակվող ազգային խմբերի տարածքներ, հանրաքվեն հանրագումարելիս քվեարկության արդյունքները հաշվի էին առնվում առանձին»:[23]

Այդ օրենքի ընդունման օրից հոծ բնակվող ազգային խմբերը ԽՍՀՄ-ի լուծարման պարագայում ԽՍՀՄ պետական իրավունքի կրողներ էին դարձել:

Բայց հիմք ընդունելով հենց 1990 թ. ապրիլի 3-ի օրենքը՝ Ադրբեջանի ԳԽ-ն 1991 թ. օգոստոսի 30-ին ընդունում է «Ադրբեջանի Հանրապետության անկախության վերականգնման մասին» հռչակագիր, որով Բաքուն հրաժարվում է Ադրբեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդությունից և վերականգնում 1918-1920 թթ. գոյություն ունեցած ԱՀ-ի պետականությունը: Իսկ հոկտեմբերի 18-ին ընդունվեց Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության մասին սահմանադրական ակտը, որով Բաքուն ամրագրեց իր հրաժարումը Ադրբեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդությունից:

Պետք է ընդգծել, որ Բաքուն, վերադառնալով 1918-1920 թթ. իրողություններին, վերականգնեց Ազգերի լիգայի կողմից դե-յուրե չճանաչված մուսավաթական

Արթուր Մկրտչյան

ԱՀ-ի պետականությունը, որը չուներ ճանաչված, լեգիտիմ սահմաններ և չէր վերահսկում ոչ Լեռնային Ղարաբաղը, ոչ էլ Նախիջևանը: Նկատենք նաև, որ Ադրբեջանի անկախությունն ընդունվեց ոչ թե հանրաքվեի արդյունքում, այլ հայտարարվեց հանրապետության գերագույն օրենսդիր մարմնի կողմից, որի կազմի մեջ չկար ներկայացուցիչ ոչ ԼՂԻՄ-ից, ոչ էլ հայաբնակ այլ տարածքներից: Մյուս կողմից էլ՝ Հայաստանի ՀՀՇ-ական իշխանությունը լիովին չէր կողմնորոշվել Արցախի վերամիավորման՝ համայն հայության պահանջի հարցում: 1991 թ. սեպտեմբերի 2-ին Մոսկվայում կայացած ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ նստաշրջանում Լ. Տեր-Պետրոսյանը պահանջեց միայն բարձրացնել ինքնավար մարզի կարգավիճակը:[24]

Ստեղծված անորոշության պայմաններում և հաշվի առնելով Հայաստանի հետ վերամիավորման պահանջի բավարարման անհնարինությունը՝ ԽՍՀՄ-ում ու միջազգային որոշ կազմակերպություններում, ինչպես նաև նկատի ունենալով խնդիրը որպես Ադրբեջանի նկատմամբ Հայաստանի տարածքային հավակնություն դիտելու վտանգը, ինչը կարող էր անկասելի դարձնել հայ-ադրբեջանական պատերազմը, ԼՂ իշխանություններն ընտրեցին միակ ճիշտ, հանգրվանային տարբերակը՝ սեպտեմբերի 2-ին ընդունելով ԼՂՀ անկախության մասին հռչակագիր: Դրանով ԼՂ-ն մի կողմից՝ իրեն հայտարարեց Ադրբեջանից դուրս, մյուս կողմից՝ առերես հրաժարվեց Հայաստանի հետ վերամիավորումից: Այդ պահից փոխվեց Արցախյան շարժման բնույթը, և այն ընդունեց անկախ պետականություն կերտելու շեշտված ուղղվածություն: Այսպիսով, ԽՍՀՄ-ի լուծարման հետևանքով նախկին Ադր. ԽՍՀ-ի տարածքում կազմավորվեցին երկու անկախ պետություններ՝ ԼՂՀ-ն և Ադրբեջանի Հանրապետությունը (ԱՀ):

Պետական ինստիտուտների կազմավորման սկիզբը

ԼՂՀ հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր մարմնի՝ ԳԽ-ի ձևավորման գործընթացը: Պետական և ռազմական շինարարության խնդիրները լուծվում էին չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ում, որը հետագայում անվանվեց ԼՂՀ խորհրդարան (այժմ՝ ԼՂՀ Ազգային ժողով), պետք է ընտրվեր 81 պատգամավոր: Ընտրությունների օրը նշանակվեց 1991 թ. դեկտեմբերի 28-ը: Կազմավորվեց 81 ընտրատարածք:[25]

1991 թ. դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ ԳԽ ընտրությունները, որոնք անցկացվեցին մեծամասնական ընտրակարգով՝ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ:

Հանրապետության ԳԽ ընտրությունների մասին տեղյակ էր պահվել Շուշիի, ինչպես և ադրբեջանաբնակ մյուս բնակավայրերի բնակիչներին: Ադրբեջանցիները կատարեցին ԱՀ Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի հրամանը և չմասնակցեցին ընտրություններին, ինչպես որ չէին մասնակցել հանրաքվեին[26]:

ԼՂՀ ԳԽ ընտրություններից հետո՝ 1992 թ. հունվարի 6-ին, Ստեփանակերտում՝ նախկին մարզխորհրդի նիստերի դահլիճում, 80 դիտորդների ու լրագրողների ներկայությամբ, «Հայր մեր» տերունական աղոթքով իր աշխատանքներն սկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը: Նույն օրն ընդունվեց «ԼՂՀ պետական անկախության հռչակագիրը»:[27]

Հանրապետության սահմանները պաշտպանելու և բնակչության անվտանգությունն ապահովելու համար հենց առաջին նիստում որոշվեց ստեղծել հանրապետության իշխանության բարձրագույն մարմիններին ենթակա սեփական ռազմական ուժեր, հասարակական կարգի պահպանության ու պետական անվտանգության մարմիններ և բոլոր ռազմական ուժերը միավորել մեկ հրամանատարության ներքո:

Հունվարի 7-ի նիստում պատգամավորները ձեռնամուխ եղան ԳԽ նախագահի ընտրության հարցի քննարկմանը: Առաջադրվեցին 7 թեկնածուներ՝ Լեոնարդ Պետրոսյան, Օլեգ Եսայան, Ռոբերտ Քոչարյան, Արթուր Մկրտչյան, Լևոն Մելիք-Շահնազարյան, Արկադի Մանուչարով և Շահեն Մեղրյան: Թեկնածուներից հինգը ինքնաբացարկ հայտարարեցին, և մնացին Արթուր Մկրտչյանն ու Լեոնարդ Պետրոսյանը: Մի քանի անգամ քվեարկություն կատարելուց հետո 42 ձայնով ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ ընտրվեց ՀՅԴ անդամ, պատմական գիտությունների թեկնածու, 33-ամյա Արթուր Մկրտչյանը:

Արթուր Մկրտչյանի ընտրությունը շատերի համար անսպասելի էր: Ըստ ԼՂՀ առաջին գումարման ԳԽ պատգամավոր, «Արցախի ժողովրդական ճակատ» կազմակերպության ղեկավար Մուրադ Պետրոսյանի. «Ոչ ոք կասկածի տակ չէր դնում, որ նախագահի պաշտոնը պետք է զբաղեցնի Քոչարյանը, որին, ամեն ինչից բացի, աջակցում էր պաշտոնական Երևանը: Բայց Ռոբերտը մինչև նիստն սկսվելը հայտարարում է. «Նախագահի պաշտոնի համար առաջադրվելու է Լեոնարդ Պետրոսյանը»: Ինչքան էլ որ նրան բացատրեցինք, որ «Լեոնարդը չի անցնի», անօգուտ եղավ: Մեր կանխագուշակումը հաստատվեց. Պետրոսյանն ընդամենը 8 ձայն հավաքեց: Քոչարյանն ու շատերը շոկի մեջ էին ոչ միայն Մկրտչյանի սենսացիոն ընտրությունից: Պարզվեց, որ խորհրդարանի պատգամավորների կեսը Դաշնակցության անդամներ են»:[28]

ՀՅԴ-ի հաղթանակը քաղաքական ցնցում հանդիսացավ նաև Հայաստանի նոր իշխանության համար, որը տակավին չէր հասցրել հասկանալ, թե ինչ է կատարվում Արցախում: ՀՀ իշխանությունները չշնորհավորեցին ԼՂՀ նորընտիր իշխանություններին: Պատճառը պարզ էր. Արցախում իշխանության էին եկել Հայաստանի Հանրապետության ՀՀՇ-ական ղեկավարության համար ոչ ցանկալի ուժեր: Փաստորեն, պաշտոնական Երևանը ԼՂՀ-ի համար այդ դժվարին պայմաններում գնաց բացահայտ քաղաքական առճակատման Ստեփանակերտի հետ: Դրա արտահայտությունը դարձան ԼՂՀ իշխանությունների նկատմամբ ՀՀ ղեկավարության հետագա վերաբերմունքն ու ձեռնարկած քայլերը:

Ստեղծվեց նաև Նախարարների խորհուրդ (ՆԽ), որի նախագահ հաստատվեց Օլեգ Եսայանը, իսկ տեղակալ՝ Բորիս Առուշանյանը: Ընտրված պատգամավորների մեծամասնությունը ՀՅԴ անդամներ էին, սակայն ԳԽ նախագահի ընտրություններում հաղթանակ տանելով՝ ՀՅԴ-ն որոշում ընդունեց երկրում ներքաղաքական կայունությունը պահպանելու նպատակով մի շարք կարևոր ղեկավար պաշտոններ, այդ թվում՝ ՆԽ նախագահի պաշտոնը, հանձնել մյուս քաղաքական ուժերին: ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Մկրտչյանի առաջարկով ԼՂՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալի պաշտոնի համար առաջադրվեց Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը, սակայն փակ գաղտնի քվեարկության ժամանակ թեկնածուն անհրաժեշտ քվեներ չստացավ: Նախագահի առաջին տեղակալի պաշտոնը մնաց թափուր[29]:

Հունվարի 11-ին տեղի ունեցան ԼՂՀ ԳԽ պատգամավորների լրացուցիչ ընտրություններ. 11 թափուր տեղի համար ընտրվեց 9 պատգամավոր, որոնց իրավունքները հաստատվեցին ԳԽ նստաշրջանի հունվարի 17-ի նիստում: Նույն օրը ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալ ընտրվեց ՀՅԴ անդամ Գեորգի Պետրոսյանը, քարտուղար՝ պատմական գիտությունների թեկնածու, անկուսակցական Վլադիկ Հակոբյանը[30]:

ԳԽ նստաշրջանն ընդունեց «Արտակարգ դրության մասին» օրենքը: Ապա կազմավորվեցին ԳԽ մշտական հանձնաժողովները և հետևյալ խումբ-խմբակցությունները՝ ՀՅԴ խմբակցություն, «Արցախի ժողովրդական ճակատ» պատգամավորական խումբ, «Մարտակերտցիների խումբ», «Միացում» պատգա-

մավորական խումբ, չեզոք անդամներ ու զինվորականներ:

ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Մկրտչյանը հունվարի 26-ից փետրվարի 2-ը կատարեց իր առաջին պաշտոնական այցը Երևան: Պաշտոնական տեղեկագրերում մանրամասներ չեն պահպանվել այդ այցի վերաբերյալ, սակայն գոյություն ունեն տեսակետներ այն մասին, թե ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը Արթուր Մկրտչյանին ընդունել է խիստ սառը և պահանջել հրաժարական տալ:[31]

Իսկ ռազմական իրադրությունը ԼՂՀ-ում շարունակում էր շիկանալ: Օրեցօր սաստկացող մարտական գործողությունները հրամայաբար պահանջում էին կատարելագործել ոչ միայն ինքնապաշտպանական ուժերի (ԻՊՈՒ) կառուցվածքային ու մարտական հնարավորությունները, այլ նաև կառավարման համակարգը: Մարտի 4-ի ԳԽ նախագահության նիստում Արցախի ԻՊՈՒ հրամանատար նշանակվեց գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը: Նույն օրը նախագահությունը որոշեց, ԼՂՀ ԳԽ 1992 թ. հունվարի 9-ի որոշմանը համապատասխան, հաստատել ԼՂՀ պաշտպանության խորհրդի (ՊԽ) կազմը:[32]

Այնուհետև ԳԽ նախագահությունը ձեռնամուխ եղավ նաև կառավարության մի շարք պաշտոնների նշանակմանը, ԼՂՀ ՆԽ կազմը հաստատելուն, ԼՂՀ կառավարության անհատական կազմի մասին որոշումների նախագծերի քննարկմանը:[33] «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան հաստատվեց ԼՂՀ կառավարությունը, և առաջնորդվելով «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքով՝ հանձնարարվեց վերջինիս անցնել իր լիազորությունների կատարմանը:

Այսպիսով, ոչ վերջնականապես, բայց ձևավորվեց ԼՂՀ գործադիր իշխանությունը, որը պետք է լուծեր երկրին վերաբերող սոցիալ-տնտեսական և մի շարք այլ հարցեր: Սակայն պետք է նշել, որ կազմավորելով ԼՂՀ կառավարությունը՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը գործադիր իշխանության կարևորագույն լիազորություններն իրեն վերապահեց մինչև 1992 թ. օգոստոս (Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը): Դա մեծապես պայմանավորված էր նրանով, որ իրադրությունը ռազմաճակատում դեռևս անչափ լարված էր և հնարավորություն չէր տալիս ԳԽ նախագահությանն ավարտել իշխանական լիազորությունների օպտիմալ բաշխումը, կառավարման համակարգի կենտրոնացումն ու կատարելագործումը:

Ելնելով ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրությունից և ղեկավարվելով «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածով՝ հանրապետության անվտանգության և պաշտպանության ապահովման անհետաձգելի միջոցառումների մշակման ու իրագործման շրջանակներում մինչև ԼՂՀ պաշտպանության նախարարության կազմավորումը՝ 1992 թ. մարտի 26-ին, ԼՂՀ ՆԽ-ին առընթեր ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության կոմիտե (ՊԿ):[34]

Հանրապետությունում ներքին կայունություն պահպանելու նպատակով՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը, ներքին պայմանավորվածության համաձայն, ստիպված որոշում կայացրեց ՊԿ-ի նախագահ նշանակել Սերժ Սարգսյանին: ԼՂՀ ԳԽ նախագահության և ինքնապաշտպանության ուժերի հրամանատարության ազդեցիկ ղեկավարների մեծամասնությունը դեմ էր Սերժ Սարգսյանին այդ պաշտոնում նշանակ-

մանը: Վերջինիս նշանակման գործընթացում մեծ դերակատարություն ունեցավ նաև այդ ժամանակ ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը: Ըստ ԼՂՀ ԳԽ նախագահության որոշ անդամների վկայությունների՝ ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանը, ՊԿ-ի նախագահի ընտրության նիստի ժամանակ ԼՂՀ ղեկավարության և ինքնապաշտպանության ուժերի հրամանատարության վրա ազդելու նպատակով օգտագործել է այնպիսի գործիքակազմեր, որոնք դուրս են քաղաքականության մեջ երկխոսության և բանավեճերի ընդունված նորմերից:[35]

Այդ որոշումից հետո ԳԽ նախագահությունը նպատակահարմար գտավ, որ ԼՂՀ ԳԽ նախագահը մի անգամ ևս հանդիպի ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ՝ երկկողմ հարաբերությունների բարելավման նպատակով: Ա. Մկրտչյանը Երևան մեկնեց մարտի 30-ին և հաջորդ օրը հանդիպեց ՀՀ նախագահի հետ: Զրույցի ընթացքում ՀՀ նախագահը Արթուր Մկրտչյանին նորից հասկացրել է, որ նա իր տեղը պետք է զիջի ՀՀՇ-ական որևէ մեկին, հակառակ դեպքում Հայաստանը կարող է դադարեցնել ռազմական օգնության ցուցաբերումը Արցախին:[36]

ԼՂՀ ԳԽ նախագահության և ԻՊՈՒ հրամանատարության ազդեցիկ ղեկավարների մեծամասնությունը դեմ էր նախագահի պաշտոնից Ա. Մկրտչյանի հնարավոր հրաժարականին: Մինչդեռ առանց ՀՀ-ի ամենաբարձր մակարդակով օգնության՝ հնարավոր չէր պաշտպանել Արցախը: Փաստորեն, ԼՂՀ ԳԽ նախագահը կանգնած էր երկընտրանքի առջև: Եվ այդ ժամանակ էլ Արցախում արդեն նշմարվում էր երկիշխանության ուրվականը:

Այս համատեքստում չենք կարող չհիշատակել մի իրադարձություն, որը տեղի ունեցավ Արցախում մինչև Արթուր Մկրտչյանի մահը: Արտաքին ուժերի ազդեցության ներքո փորձ կատարվեց մասնատել նորաստեղծ պետականությունը, և այդ գործընթացի սկիզբը դրվեց Մարտակերտում: Հարկ է նշել, որ այս իրադարձության վերաբերյալ նշված ժամանակաշրջանի քաղաքական գործիչների շրջանակներում մինչ օրս էլ կան իրարամերժ կարծիքներ: Սակայն երևի այդ իրադարձությունից դրդված՝ ապրիլի 3-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը դիմում հղեց ԼՂՀ բնակչությանը, որում, մասնավորապես, ասվում էր. «…Հայրենակիցներ, մենք Ձեզ կոչ ենք անում սթափ և սառնասիրտ գնահատել Արցախի ներկա իրավիճակի ողջ բարդությունը, չենթարկվել խուճապահարույց սադրանքների: Ժամանակի հրամայականն է՝ դիմակայել ցանկացած դավերի: Մեր ինքնապաշտպանական ուժերը հրաշքներ են գործում: Անհավասար կռվում հայրենիքի անձնվեր զավակների թափած արյան գնով թիզ առ թիզ ազատագրվող այս սուրբ հողը չենք զիջի ոչ մեկին: Մեկ անգամ ևս հիշենք. անարգ ու բիրտ ուժին բոլորս միասին դիմագրավենք՝ որպես մեկ հոգի և մեկ մարմին: Պատմության օրենքն է՝ ազատությունը ձեռք է բերվում ուժերի գերագույն լարումով, վերանձնական զոհողությամբ, տքնաջան աշխատանքով և կազմակերպվածությամբ:

Մեր պայքարը խարսխվում է մեր անդառնալի որոշման, անկոտրում կամքի վրա, որոնք կռվաններն են մեր հուսալի ապագայի: Այդ ապագան մեզ է վիճակված կերտելու՝ ի պահ սերունդների»:[37]

Հակված ենք կարծելու, որ ԼՂՀ-ում Արթուր Մկրտչյանի և ՀՅԴ-ի կողմից պատերազմական իրադրությունում ժողովրդավարական պետություն կառուցելու ուղղություն ընտրելը և իշխանության մի շարք կարևոր պաշտոններ ընդդիմադիր գործիչներին հանձնելն ամենևին էլ ճիշտ հաշվարկված քայլ չէր: Նման ռազմավարությունն իրեն կարդարացներ, թերևս, արտաքին միջամտության բացակայության դեպքում: Քանզի հետագայում կնկատենք, որ Ա. Մկրտչյանի մահից հետո պետության ներսում ստեղծվեց քաոսային իրավիճակ:

Այսպիսի ծայրաստիճան լարված ռազմաքաղաքական իրադրություն էր տիրում հակամարտության գոտում, երբ տեղի ունեցավ ԼՂՀ ներքաղաքական կյանքի ամենաողբերգական իրադարձությունը, որը շրջադարձային կետ հանդիսացավ ԼՂՀ պետական շինարարության գործընթացում. ապրիլի 14-ի երեկոյան զոհվեց ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը:

Մինչ օրս դժվար է պատասխան տալ այն հարցին, թե արդյո՞ք մտատանջություններն ու հուսահատական ապրումները դարձան կատարված ողբերգության պատճառը: Պատմական փաստն այն է, որ Արթուր Մկրտչյանն իրենից հետո թողեց քաղաքական ու բարոյական բարձր չափանիշեր. նա ավանդույթներ ստեղծեց, որոնք պահպանվեցին մինչև Գ. Պետրոսյանի հրաժարականը, որը տեղի ունեցավ արդեն պաշտոնական Երևանի հետ ծանր պայքարի պայմաններում:

Ժամանակակիցների վկայությամբ՝ նույն օրը տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության և պաշտպանության խորհրդի համատեղ արտակարգ նիստ: Մինչև նիստի բացումը որոշ քաղաքական ուժերի կողմից տարբեր հասցեներով մեղադրականներ հնչեցին պատահարի առնչությամբ: Ստեղծվել էր պայթյունավտանգ իրավիճակ, երբ ամեն մի անզգույշ քայլ կարող էր ապակայունացնել ներքաղաքական իրադրությունը և հանգեցնել անկանխատեսելի հետևանքների: Լիակատար պատրաստականության էին բերվել ԻՊ ուժերում գտնվող ՀՅԴ զինված կազմավորումները, որոնց մեծ մասը կենտրոնացել էր Ստեփանակերտում: ԼՂՀ ՆԳ նախարարի պաշտոնակատար Ա. Իսագուլովի առաջարկությամբ՝ մինչև հետաքննության նախնական եզրակացությունը ԳԽ նախագահության անդամների և Ա. Մկրտչյանի ընտանիքի պահպանությունն ուժեղացնելու նպատակով, ներքին կարգով, համալրվեց ԳԽ պահակախումբը (մեծամասնությունը՝ ՀՅԴ զինված կազմավորումներից): Միաժամանակ ԳԽ նախագահության անդամներին առաջարկվեց մնալ շենքում: Այդ միջոցառումների իրականացման պատասխանատվությունը դրվեց ԼՂՀ ԳԽ պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի նախագահ Վալերի Բալայանի վրա:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը, ելնելով ստեղծված իրավիճակից և առաջնորդվելով «ԼՂՀ ԳԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 5-րդ կետով, ԼՂՀ ԳԽ նախագահի պարտականությունների իրականացումը դրեց ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալ Գեորգի Պետրոսյանի վրա:[38]

ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Մկրտչյանի ողբերգական մահից հետո ստեղծված ներքաղաքական անկայուն իրադրությունը չսասանեց ԼՂ պետականության հիմքերը, ավելին՝ ԼՂՀ իշխանությունների վճռականության շնորհիվ 1992 թ. մայիսին ԻՊ ուժերը կարողացան ազատագրել Շուշին և Լաչինի շրջանի մի մասը՝ ցամաքային կապ հաստատելով հայկական երկու պետությունների միջև: Դա կարելի է համարել հայոց ազատագրական պայքարում արցախահայության ռազմական ու քաղաքական ամենամեծ նվաճումներից մեկը և կարևոր գրավական ԼՂ-ի պետականության ամրապնդման համար:

Եզրակացություն

Այսպիսով՝ ԽՍՀՄ-ի գոյության 70-տարիների ընթացքում՝ չնայած արցախահայության հանդեպ գործադրված բռնություններին ու հալածանքներին՝ երբեք չդադարեց Մայր Հայաստանին միանալու համար նրա անհավասար պայքարը: Իսկ 1985 թվականից հետո ԽՍՀՄ-ում ստեղծված նպաստավոր քաղաքական պայմանները հնարավորություն ընձեռեցին նորից կյանքի կոչելու Մայր Հայաստանի միացման գաղափարը:

Ազատագրական պայքարում ներգրավված ուժերը, հաղթահարելով իրենց առջև ծագած վայրիվերումները, շրջանցելով քաղաքական և գաղափարական տարաձայնությունները, վճռականության շնորհիվ կարողացան շարժվել ժամանակի քաղաքական պահանջներին համահունչ՝ իրենց հետ տանելով նաև ազատագրական պայքարի կազմակերպման ողջ ծանրությունը:

ԼՂՀ հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների ձևավորման գործընթացը: Այդ կառույցների ստեղծումը, չնայած ռազմաքաղաքական դժվարին կացությանը, անցավ միջազգային ժողովրդավարական չափանիշներին լիովին համապատասխան: Արցախում պետական շինարարության առանձնահատկությունն այն է, որ նույնիսկ նկատվող ներքաղաքական բարդ իրադրության և սաստկացող ռազմական գործողությունների պայմաններում իշխանության գլուխ անցած նոր ուժերը, անկախ կուսակցական պատկանելությունից, փորձեցին ինքնուրույնաբար ստեղծել հիմքերն իրավական և ժողովրդավարական մի պետության, որին վիճակված էր դիմակայել Ադրբեջանի ագրեսիային և պահպանել իր անկախությունը: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտների:

Հղումներ

1 Տես https://aparaj.am/hyd-arcaxyan-karuyci-himnadrumeh-e%D6%82-nra-dereh-arcaxyan-paterazmi-naxapatrastman-gortcum (մուտք՝ 26.04.2024):
2 Տես **Հակոբյան Վ.,** անձնական արխիվ:
3 Տես **Հակոբյան** 2022, 221:
4 Տես https://aparaj.am/hyd-arcaxyan-karuyci-himnadrumeh-e%D6%82-nra-dereh-arcaxyan-paterazmi-naxapatrastman-gortcum/ (մուտք՝ 26.04.2024):
5 Տես **Աբրահամյան** 2007, 36:
6 Տես **Բալայան** 2012, 287:
7 Տես **Բալայան** 2012, 287:
8 http://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_ Krunk_Komite (մուտք՝ 28.04.2024):
9 Տես **Բալայան** 2012, 292:
10 Տես **Հակոբյան Վ.,** անձնական արխիվ:
11 «Կաճառ» գիտական կենտրոն ՀԿ-ի արխիվ, ֆոնդ 8, ցուցակ 1, գործ 2, 1–25 թ.:
12 Տես https://aparaj.am/hyd-arcaxyan-karuyci-himnadrumeh-e%D6%82-nra-dereh-arcaxyan-paterazmi-naxapatrastman-gortcum/ (մուտք՝ 28.04.2024):
13 Տես https://aparaj.am/hyd-arcaxyan-karuyci-himnadrumeh-e%D6%82-nra-dereh-arcaxyan-paterazmi-naxapatrastman-gortcum/ (մուտք՝ 28.04.2024):
14 Տես https://aparaj.am/hyd-arcaxyan-karuyci-himnadrumeh-e%D6%82-nra-dereh-arcaxyan-paterazmi-naxapatrastman-gortcum/ (մուտք՝ 28.04.2024):
15 Տես https://aparaj.am/hyd-arcaxyan-karuyci-himnadrumeh-e%D6%82-nra-dereh-arcaxyan-paterazmi-naxapatrastman-gortcum/ (մուտք՝ 28.04.2024):
16 Տես Հակոբյան Վ., անձնական արխիվ:
17 Տես https://aparaj.am/patmuthyuneh-patzhum-e-nranc-ovkher-moranum-en-ir-dasereh %e2%80%a4-aporini-dzerbakaluthyunner-1990-akannerin/ (մուտք՝ 26.04.2024):
18 Տես **Հակոբյան Վ.,** անձնական արխիվ:
19 Տես https://aparaj.am/patmuthyuneh-patzhum-e-nranc-ovkher-moranum-en-ir-dasereh/_(մուտք՝ 30.04.2024):
20 Ինքնապաշտպանության ուժերի առաջին հրամանատար Արկադի Կարապետյանի զրույցի գրառում:
21 Տես http://www.nankr.am/hy/2372:
22 Տես **Հակոբյան** 2019, 66:
23 Տես «Արցախ», 26.08.1993:
24 Տես **Բալայան Վ.,** 2012, 299:
25 Տես **Օհանջանյան Մ.,** 1998, 12:
26 Տես **Հակոբյան Տ.**, 2011, 35:
27 **Տես Арутюнян В.,** События в Нагорном Карабахе, хроника, часть IV, Январь 1991 г.- январь 1993, Ер., «Гитутюн» НАН РА,1994, էջ 109:
28 Տես **Հակոբյան Թ., 2011, 181-182:**
29 Տես **Հակոբյան Տ.,** 2011, 37:
30 Տես **Աբրահամյան Հ.,** 2001, 152:
31 Տես **Հակոբյան Տ.**, 2011, 39-42:
32 Տես ԱՀ պետարխիվ, Ֆոնդ 254, ցանկ 1, պահպանման միավոր 2, կապ 1, թերթ 5-6:
33 Տես նույն տեղում, թ. 11-14:
34 Տես ԱՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՆԽ 1992 թ. մարտի 26-ի նիստի արձանագրություն, N 3:
35 Տես ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նախագահ Վալերի Բալայանի հետ զրույցի գրառում:
36 Տես **Աբրահամյան Հ.**, 2001,160:
37 Տես ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 1, պ.մ 2, կ.1, թ.36-37:
38 Տես նույն տեղը, թ. 52:

Փետրվարից փետրվար՝ կամ հայ ժողովրդի փետրվարյան վերածնունդները

Անի Մելքոնյան
Պատմաբան

Փետրվարը նշանավորվում է հայ կյանքի՝ հատկապես կարևոր պատմական երկու իրադարձություններով՝ 1921 թ. Փետրվարյան ապստամբությամբ և 1988 թ. փետրվարի 20-ից սկիզբ առած Արցախյան շարժմամբ:

Ինչպես գիտենք, 1920 թ. դեկտեմբերի 2-ին, արտաքին անբարենպաստ հանգամանքների ճնշման տակ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը իշխանությունը խաղաղ ճանապարհով հանձնել էր բոլշևիկներին:

Սպասվում էր, որ դրանից հետո պետք է գար խաչապաշտ ռուսը, բայց փոխարենը, Հայաստան եկավ Հեղկոմը, մի քանի բոլշևիկ հայերի ղեկավարությամբ. «Հակառակ որ ժողովուրդը և նախկին իշխանության մարդիկ խիստ բարյացակամ վերաբերում ցույց տվին և պատրաստակամություն հայտնեցին ամեն բանով աջակցելու նոր կառավարությանը, Հեղկոմը առաջին օրից իսկ թշնամական դիրք բռնեց դեպի երկրի բոլոր ոչ բոլշևիկ տարրերը և իրեն պահում էր ճիշտ այնպես, ինչպես պահում էր թշնամի երկիրը մտնող նվաճող մի բարբարոս ուժ»:[1]

Չեղյալ հայտարարվեց դեկտեմբերի 2-ին Դրոյի և Լեգրանի միջև կնքված դաշնագիրը, իսկ դեկտեմբերի 6-ին կազմվեց և գործի անցավ Չեկան, սկսվեցին ձերբակալությունները՝ «Իրար ետևից բանտարկվեցին նախկին վարչապետ Համո Օհանջանյանը, նախկին նախարար Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Չիլինգարյան), Խորհրդարանի անդամներ բժ. Հ. Տեր Դավթյանը, Վահ. Նավասարդյանը, Վ. Բաբայանը, Գ.Վարշամյանը, Երևանի Քաղաքային խորհրդի անդամ Ա. Աստվածատրյանը, Սոցիալ-դեմոկրատ, պարագլուխ Բ. Իշխանյանը, խմբապետ Համազասպը և ուրիշներ: Քիչ վերջը բանտ նետվեցին Խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը, առողջապահության և գյուղատնտեսության նախարարների օգնականներ բժ. Հ. Տեր Միքայելյանը և Թ. Տոչյանը, Խորհրդարանի անդամ բժ. Ա. Ղազարյանը և շատ ուրիշներ»:[2]

Այս թեմայով «Դրօշակ»-ը գրում է. «Համաձայնագրի և ոչ մի կէտ չիրագործուեց: Երկրի անկախութիւնը ջնջուեց: Սահմանների ընդարձակում չեղաւ: Թուրքերը դուրս չեկան Ալէքսանդրապօլից: Հանրապետութեան շրջանի գործիչները ենթարկուեցին վայրագ հալածանքի, և բանտերը լցուեցին հազարաւոր մտաւորականներով: Հայկական բանակը լուծուեց, և սպայութիւնը, ավելի քան 1500 հոգի, խաբէութեամբ աքսորուեց Ռուսաստանի ներսերը: Ծայր տուին անվերջ բռնագրաւումներ, թալան, հարստահարութիւն ու սպանութիւններ: Դրուեցին անօրինակ տուրքեր, և գիւղերն ուղարկուեցին պատժիչ զորամասեր տուրք չտուող գիւղացիներին պատժելու համար»:[3]



Դեկտեմբերի վերջերին՝ հայկական բանակի 70 սպա աքսորվեց Բաքու:

Հունվարի 10-ին Ռուսաստան աքսորվեց Դրոն՝ իր զինակից սպաների հետ:

Սա, դեռ ամենը չէր. «1921 թ. հունվարի 15-ին ստեղծվում է գերագույն հեղափոխական տրիբունալ: Տրիբունալի որոշումները վերջնական էին և ի կատար էին ածվում 48 ժամվա ընթացքում, բացի մահապատիժ նախատեսող դատավճիռներից, որոնք ենթակա էին Հայհեղկոմի հաստատմանը»:[4]

Բոլշևիկյան բռնություններն արտահայտվեցին 1921 թ. հունվարի 24-ին հայկական բանակի 1400 սպաների Ռյազան արտաքսմամբ.

«Նրանց մեջ էին ՀՀ զինված ուժերի գլխավոր հրամանատար Թ. Նազարբեկյանը, գեներալ-լեյտենանտ Գամազովը, գեներալ Ա. Բեյ-Մամիկոնյանը, գնդապետներ Մելիք-Աղամալովը, Բաբաջանով եղբայրները, Մելիք-Շահնազարովը և ուրիշներ»:[5]

Սակայն Հայհեղկոմի համար արդյունքները գոհացուցիչ չէին, ինչին անդրադառնում է Հայկոմկուսի և Հայհեղկոմի ռուսալեզու «Կոմունիստ» պաշտոնաթերթն իր 1921 թ. հունվարի առաջնորդող համարում, գրելով.

«Տակավին գոյություն ունեն և գործում են դաշնակները: Խորհրդային իշխանության առաջնահերթ խնդիրը պետք է լինի դաշնակների լիկվիդացումը՝ կիսամիջոցները չեն օգնի: Հարկավոր է խիստ և անողոք լինել պրոլետարական հեղափոխության թշնամիների հանդեպ»:[6]

Այս ամենով, իհարկե բռնություններն ու հալածանքները չսահմանափակվեցին, ավելին, նոր թափ առան.

«Հայաստանի բանտերը բերնեբերան լցվեցին կալանավորներով:

Բանտարկվեցին նաև Լևոն Շանթը, Հովհ. Քաջազնունին, Նիկոլ Աղբալյանը, Երևանի քաղաքագլուխ Մ. Մուսինյանը և հարյուրավոր այլ մարդիկ:

Բանտարկյալները պահվում էին անտանելի պայմաններում, գնդակահարության մշտական սպառնալիքի տակ»:[7]

Բոլշևիկները զանգվածային բռնություններ կիրառելու գործում այնքան հեռուն էին գնացել, որ բանտարկում էին անգամ կանանց, 1921 թ. փետրվարին Չեկայի նախագահ Շ. Ամիխանյանը Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին խնդրում է թույլ տալ ձերբակալել «դաշնակների», «մաուզերիստների» և «հակահեղափոխականների» ընտանիքների անդամներին:

«Ձերբակալվել և բանտ էին նետվել դաշնակցական մի շարք գործիչներ՝ Լևոն Ջառաֆյանի, Հակոբ Իրազեկի, Եփրեմ Սարգսյանի կանայք, Կարո Սասունու տիկինը՝ բանաստեղծ Միսակ Մեծարենցի զարմուհի Հռիփսիմե (Լոլա) Մեծատուրյան-Սասունին. բանտարկվածների թվում եղել են անգամ հղի կանայք, իսկ փետրվարի 16-ին Երևանի կենտրոնական բանտում բոլշևիկների կողմից գնդակահարվել է հայտնի կին դաշնակցական Նատալիա Ամիրխանյան-Մուրատյանը և ուրիշներ»:[8]

Այս ամենը ուղեկցվում էր անհաշիվ ու անհիմն բռնագրավումներով՝ «Հեղկոմը ձեռնարկեց անխնա և վճռական բռնագրավումներ, առանց խտրության և առանց դասակարգային սկզբունքի....: Անկարգ կերպով բռնագրավում ու պետականացվում էր ամեն ինչ...»:[9]

Բոլշևիկների քաղաքական հակառակորդ «Դաշնակցության դեմ պայքար»ի անվան տակ, սկսվել էր հայ մտավորականության բնաջնջում, և չնայած Օրջոնիկիձեի հորդորներին՝ Դաշնակցության դեմ պայքարը չվերածել մտավորականության դեմ պայքարի, այնուամենայնիվ, Հեղկոմը գնաց հայ մտավորականության գիտակցաբար ոչնչացման. «Խորհրդային իշխանութիւնն էլ գիտեր, որ հանցանք է, ոճիր ամէն մի մտաւորականի «հակայեղափոխական» և «խափանարար» հռչակել և հանձնել Չեկա կոչուած գազանին: Բայց քաջ գիտեր և այն, որ անգլուխ և անղեկավար զանգուածներն աւելի հեշտ են կառավարվում»:[10]

Հեղկոմը ձախողեց նաև արտաքին դիվանագիտությունը. «Իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո, Հայաստանի Հեղկոմը, իրար հետևից, մի շարք հեռագրերով պահանջեց, որ վրացիները հեռանան հայկական հողերից և վրացական զորքերը հետ քաշվեն Լոռիի չեզոք գոտուց: Վրացիները բնավ կարևորություն չտվին այդ պահանջներին»:[11]

Խնդրի լուծմանը չօգնեց նույնիսկ Խորհրդային Ռուսաստանի միջնորդությունը. վրացիները մնացին անդրդվելի:

Ավելի հաջող չէր հարաբերությունները նաև «եղբայրական» Խորհրդային Ադրբեջանի հետ, չնայած որ վերջինիս ղեկավար Ն. Նարիմանովը Հայաստանի Հեղկոմին ուղարկված հեռագրով հայտնել

Նատալիա Ամիրխանյան-Մուրատյան

էր, որ «Հայաստանի և Ազրբեջանի միջև ամեն վեճ վերջացած է, և Խորհրդ. Ազրբեջանը եղբայրաբար զիջում է Ղարաբաղը Հայաստանին»:[12]

Սա, իհարկե Հայաստանի ժողովրդին մոլորեցնելու մի հնարք էր, իրականում՝ Արցախը կցվեց Ադրբեջանին, Նախիջևանն էլ մնաց թուրք-բոլշևիկյան հսկողության տակ, ավելի ուշ փոխանցվեց Ադրբեջանին:

Բոլշևիկ հայերի գործերը պակաս վատ չէին, Թուրքիայի հետ հարաբերություններում, վերջիններս համոզում էին, որ հայերի նկատմամբ թուրքերի ատելությունը հետևանք է դաշնակցականների նկատմամբ ատելության, և բավական է, որ Դաշնակցությունը հեռանա իշխանությունից, և թուրքական բանակը անմիջապես դուրս կգա Ալեքսանդրապոլից ու Կարսից, սակայն ինչպես պարզվեց. «Հեղկոմը շատ մեծ հույսեր էր կապում «աշխատավոր Թուրքիայի» հետ: «Հասարակական Թուրքիան» մեկից ավելի անգամներ է ցույց տվել իր «համակրանքը» հայերին ու Հայաստանին»:[13]

Հայաստանը «ռուսական հացով» լցնելու խոստումներն էլ մնացին օդում կախված:

Նորահռչակ խորհրդային իշխանության այս քայլերը զուգորդված «ռազմական կոմունիզմի» քաղաքականության հետ՝ պատճառ դարձան Հայաստանի բնակչության շրջանում հակախորհրդային խմորումների: Սրանց գումարվեց նաև այն, որ. «Փետրուարի 16-ի առաւօտեան «Օրիանտ» հիւրանոցի մուտքի դրանը փակցուած էր Չէկայի կողմից Երեւանի բանտում 22 գնդակահարուած բանտարկեալների ցանկը, որի մէջ Չեկան սպառնում էր նաև ենթարկել սպանուածների վիճակին այն բոլոր քաղաքացիներին, որոնք կը յանդգնին «հակայեղափոխական» շարժման՝ սովետական իշխանութեան դէմ»:[14]

Այսպիսով, ընդամենը երկուսուկես ամսում Հեղկոմն այնպես լցրեց հայության համբերության բաժակը, որ պայթեց փետրվարյան ապստամբությունը: 1921 թ. փետրվարի 10-ին Կոտայքի Ձառ գյուղում քննարկվեց ապստամբության նախապատրաստումը, փետրվարի 13-ին տեղի ունեցած խորհրդակցությունը որոշեց ապստամբությունը սկսել փետրվարի 16-ի գիշերը:

Ապստամբական ուժերի հրամանատար նշանակվեց Կուռո Թարխանյանը:

Փետրվարի 17-ին ապստամբները գրավեցին Աշտարակը, Էջմիածինը, Գառնին, Հրազդանը և այլն:

Փետրվարի 18-ին ապստամբները Կուռո Թարխանյանի և Բաշգառնեցի Մարտիրոսի գլխավորությամբ մտան Երևան:

Բանտերից ազատվեցին Հ. Քաջազնունին, Լ. Շանթը, Ն. Աղբալյանը և մի շարք այլ մտավորականներ:

«Կարծես հրաշագործ մի ձեռքով Երևանի բոլոր շենքերը զարդարվեցին եռագույն դրոշակներով և գույնզգույն գորգերով ու կարպետներով: Ժողովուրդը խռնված էր փողոցներում նմանը չտեսնված խանդավառության մեջ և ցնծությամբ անվերջ «կեցցե»-ներով, և ծափահարություններով ողջունում էր օրվա հերոսներին և բանտից ու Չեկայի նկուղից ազատվածներին»:[15]

Փետրվարյան ապստամբությունը համաժողովրդական ցասման պոռթկում էր. «Դաշնակցությունը միայն վերջին վայրկյանին ստանձնեց այդ անկազմակերպ շարժման ղեկավարությունը և իր դերը կատարեց փայլուն կերպով»:[16]

Փետրվարյան ապստամբությունն ապացուցեց, որ խորհրդային իշխանությունը Հայաստանում գոյության իրավունք չուներ՝ «որովհետև բոլշևիկյան ամբողջ տիրապետության ընթացքին ոչ մի ժողովուրդ այնպես բուռն ու համառ չի կռվել իր կյանքի և արժանապատվության համար, որքան հայերը 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին»:[17]

Ասվածի վկայությունն է նաև, դրանից 67 տարի անց՝ 1988 թ. փետրվարի 20-ին հուժկու ցնցումով պայթած Արցախյան շարժումը:

Լեռնային Արցախը լինելով պատմական Հայաստանի անբաժանելի մասը՝ խորհրդային կարգերի հաստատումից հետո, Ստալինի 1921 թ. հուլիսի 5-ի ապօրինի որոշումով բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին (Ադրբեջանական ԽՍՀ): Քանի որ արցախահայությունը չէր հաշտվում այս անարդար որոշման հետ, 1923 թ. հուլիսի 7-ին, Ադրբեջանի կենտգործկոմը ընդունեց հռչակագիր «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կազմավորման մասին»: Սակայն նորաստեղծ մարզի սահմանների մեջ չընդգրկվեցին հարթավայրային (դաշտային) Արցախի մեծ մասն ու արևմտյան լեռնային շրջանները (ԼՂՀ պաշտպանության բանակի կողմից ազատագրված տարածքները, որոնք 2020 թ. նոյեմբերի 9-ի դավաճանական կապիտուլյացիայի համաձայնագրով կրկին հանձնվեցին Ադրբեջանին): Ադրբեջանը փորձված և խորամանկ միջոցներով դիվանագիտորեն վարում էր ԼՂԻՄ-ը հայաթափելու, այն թուրքացնելու հետևողական քաղաքականություն, որի պատճառով բնակչության ընդհանուր թվաքանակում արագորեն իջնում էր հայության տոկոսը: Այդ ամենը չէր կարող առաջ չբերել հայ ժողովրդի մտավորականության բացահայտ դժգոհությունը:

Արցախի հարցում ճակատագրական էր հատկապես 1988 թ., երբ տարիներ շարունակ կուտակված դժգոհությունն ու արցախցիների տասնամյակների ընդվզումներն ի վերջո համազգային պայքարի բնույթ ստացան:

ԼՂԻՄ-ում «Ոտքի ելած մարզի բովանդակ հայության ազատագրական շարժումն աստիճանաբար առաջ քաշեց մի ոչ պաշտոնական կոլեկտիվ ղեկավարություն, որի մեջ էին Արկադի Մանուչարյանը, Համլետ Գրիգորյանը, Վարդան Հակոբյանը, Ռոբերտ Քոչարյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Մաքսիմ Միրզոյանը, Վասիլի Աթաջանյանը, Մուրադ Պետրոսյանը, Ռոլես Աղաջանյանը, Արկադի Կարապետյանը, Բորիս Առուշանյանը և ուրիշներ[18]»:

Մոսկվան և Բաքուն օր օրի սաստկացնում էին ճնշումը արցախցիների դեմ: Փետրվարի 14-ին Ստեփանակերտ տեղափոխվեց 12 միավորից բաղկացած տանկային մի շարասյուն: Հաջորդ 2-3 օրերին մեծաթիվ զինվորներ կուտակվեցին քաղաքում: Փետրվարի 15-ին ԼՂԻՄ կուսմարզկոմի 1-ին քարտուղար Բորիս Կևորկովը, հանդիպելով շարժման ակտիվիստների հետ, ընթերցում է Մոսկվայից ստացված մի փաստաթուղթ, ըստ որի «ղարաբաղյան շարժման առաջնորդները ճանաչվում են որպես ծայրահեղականներ» և խստագույնս պատժվելու էին: Փետրվարի 19-20-ը անցկացված ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդի նստաշրջանը պահանջեց հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան և որոշում ընդունել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ միավորելու մասին: «Փետրվարի 20-ի առավոտյան հրավիրվեց Ստեփանակերտի քաղխորհրդի 20-րդ գումարման չորրորդ արտահերթ նստաշրջանը, որին մասնակցում էր 98

մարդ: Նստաշրջանում որոշվեց. «Խնդրել ԼՂԻՄ-ի մարզխորհրդի գործկոմին նստաշրջանում քննարկել ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից հանելու և Հայաստանին միավորելու հարցը»:[19]

Նիստը սկսվեց երեկոյան ժամը 20 անց 20 րոպեին, երբ հայտնի դարձավ, որ մարզխորհրդի 149 պատգամավորներից ներկայացել են 110-ը: Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանին հրաժարվեցին մասնակցել ադրբեջանցի պատգամավորները: Նստաշրջանի գումարումը խափանելու իշխանությունների բոլոր փորձերը ձախողվեցին:

1988 թ. փետրվարի 20-ի օրվա վերջին Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակում և նրան հարակից փողոցներում հավաքված արցախցիների թիվը հասել էր ավելի քան 50 հազարի: Նստաշրջանում ելույթ են ունենում 44 պատգամավորներ, որոնք բոլորն էլ արտահայտվում են ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու անհրաժեշտության մասին: Մարզխորհրդի շենքի դիմաց հավաքված 50.000-ից ավելի արցախցիներն ի վերջո լսեցին մարզխորհրդի այդքան սպասված որոշումը, որում ասվում էր. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին ու Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»:[20]

Արցախցիների արդարություն պահանջող ձայնը հուժկու արձագանք գտավ մայր Հայաստանում: Երևանի Թատերական հրապարակում, Մատենադարանի առջև տեղի ունեցող հանրահավաքներում ու ցույցերում ելույթներ էին ունենում գիտության ու արվեստի նշանավոր գործիչներ, բանվորներ, ծառայողներ, պատերազմի ու աշխատանքի վետերաններ:

Շարժումն ընդարձակվում ու ծավալվում էր: Արցախյան շարժումը Հայաստանում և Արցախում համակարգելու նպատակով Իգոր Մուրադյանի նախաձեռնությամբ մարտի սկզբներին ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեն:

Հանրապետության գրեթե բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում, շրջաններում և քաղաքներում սկսեցին ստեղծվել «Ղարաբաղ» կոմիտեներ, ինչը շարժմանը կազմակերպչական նոր ձև տվեց:

Երկար կանգ չառնելով Արցախյան շարժման վրա, ասենք միայն, որ այդ շարժումը դարձավ Հայաստանի Հանրապետության անկախության հիմնաքարը, հուժկու կերպով ցնցելով խորհրդային բռնապետության հիմքերը:

Համազգային շարժումը բերեց Արցախի ազատագրմանը և Հայաստանի ու Արցախի հանրապետությունների հռչակմանը:

Եվ չնայած 2020-2023 թթ. Հայաստանի ղեկավարության դավաճանության հետևանքով Արցախի հանձնմանն ու այդ իշխանության Արցախյան շարժման էջը փակելու քարոզներին, Արցախյան շարժումն ու հաղթանակը հայոց պատմության վերջին հազարամյակի մեծագույն ձեռքբերումներից էին, որն իհարկե հնարավոր է վերականգնել, ազգային շահերով առաջնորդվող իշխանություն ունենալու դեպքում:

Ա՛յն, որ հայ ժողովուրդը, երբևէ չի վախեցել հանուն հայրենիքի, հանուն հավատի ու արդարության կայսրությունների դեմ համառ պայքարից, ապացուցում են նաև 1921 և 1988 թթ. Փետրվարյան վերածնունդները, որոնք կարո՛ղ են և անկասկած բերելու են նոր, ավելի մեծ վերածնունդի, միայն թե հայ ժողովուրդը պետք է դուրս գա իրեն պարտադրված նվաստի ու թույլի կարգավիճակից և ներքին ու արտաքին թշնամուն վճռականորեն ցույց տա, որ իր հայրենիքի ու ճակատագրի տերը ինքն է, ոչ թե ադրբեջանական շահերի սպասարկու փաշինյանական վարչակազմը:

Որքան շուտ հայ ժողովուրդն անի իր վճռական քայլը, այնքան քիչ կլինեն անդառնալի կորուստները, այնքան թեթև կլինի սերունդներին թողնվող հարատև պայքարը: ■

Ծանոթագրություններ

1. Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, Եր., 2022, էջ 169:
2. Նույնը, էջ 170:
3. Ստեփանյան Խ., 1921 թ. փետրվարյան հակաբոլշևիկյան ապստամբությունը Հայաստանում., Եր., 2021, էջ 20-21:
4. Նույնը, էջ 19-20:
5. Կարապետյան Մ., Գևորգյան Է., Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին, Եր., 2007, էջ 182:
6. Հակոբյան Ա., Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությունը լուծարելու հայկոմկուսի փորձերը, 1920-ական թվականներ, Եր., 2020, էջ 18:
7. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 543:
8. Հակոբյան Ա., նշվ., աշխ., էջ 22:
9 Բորյան Բ., Հայաստան, դիվանագիտություն և Խորհրդային Միություն, Բ հատ., Մոսկվա 1929, էջ 126:
10. Նժդեհ Գ., Ազատ Սիւնիք, Հայրենիք, Պոսթըն,1925 յուլիս, էջ 84:
11. Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, էջ 178:
12. Նույնը, էջ 182:
13. Բորյան Բ., նշվ., աշխ., էջ 151:
14. Աշխատունի Ջ., Դրուագներ մեր ազատութեան պայքարից, Հայրենիք, Պոսթըն, 25 յուլիս, էջ 135:
15. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 560:
16. Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, էջ 195:
17. Նունը, էջ 198:
18. Հայոց պատմություն, բուհական դասագիրք., խմբ., Հր. Ռ., Սիմոնյան, Եր., 2012, էջ 711:
19. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ, գիրք 3, Ստեփանակերտ 2007, էջ 17-18:
20. Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ., Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, Եր., 2001, էջ 132-133:

Հայության ջարդերը Սումգայիթում

Մարի Հովհաննիսյան
Քաղաքագիտության մագիստրոս

1988 թվականի փետրվարի 27-ից 29-ը Խորհրդային Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում տեղի հայության դեմ իրագործված ոճրագործությունը դարձավ խորհրդային տարածքում էթնիկ զտումների և զանգվածային բռնությունների առաջին դրսևորումը, որը կանխորոշեց ողջ տարածաշրջանում գործընթացների հետագա զարգացումը տասնամյակներ շարունակ: Այդ իրադարձությունները ոչ միայն սկիզբ դրեցին հայ-ադրբեջանական հակամարտության բացահայտ բռնի փուլին, այլև ի ցույց դրեցին խորհրդային պետական մեքենայի կատարյալ անկարողությունը կամ, որոշ դիտանկյուններից, հանցավոր անգործությունը սեփական քաղաքացիների կյանքի իրավունքը պաշտպանելու հարցում:[1] Սումգայիթի ջարդերը, որոնք իրենց բնույթով, իրականացման մեթոդաբանությամբ և պետական հովանավորչության աստիճանով համապատասխանում են ցեղասպանական գործողությունների միջազգային բնորոշումներին, կազմակերպվել էին որպես կանխամտածված պատասխան Արցախի հայության ինքնորոշման սահմանադրական արդարացի և խաղաղ պահանջին:[2]

Սույն հոդվածը ներկայացնում է ողբերգության նախադրյալները, իրագործման մեխանիզմները և մարդկային կորուստների վիճակագրությունը՝ հիմնվելով արխիվային նյութերի և վերապրողների վկայությունների վրա:

Պատմական համատեքստը և էթնիկ ակունքները

1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշեց դիմել Հայաստանի և Ադրբեջանի Գերագույն խորհուրդներին՝ ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու խնդրանքով:[3] Արցախահայության այդ իրավական քայլն Ադրբեջանի իշխանություններն օգտագործեցին հակահայկական տրամադրություններ բորբոքելու և էթնիկ զտումների մեխանիզմ գործարկելու համար: Որոշումը դիտարկվեց որպես ոտնձգություն Ադրբեջանի տարածքային ամբողջականության նկատմամբ, և պատասխանն ընտրվեց ոչ թե իրավական, այլ բիրտ ուժի և զանգվածային բռնության կիրառման ձևով:[4]

Սումգայիթ քաղաքը, որը գտնվում էր Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից ընդամենը 25 կիլոմետր հեռավորության վրա, հիմնադրվել էր որպես խորհրդային ինդուստրիալիզացիայի և «ժողովուրդների բարեկամության» ցուցադրական խորհրդանիշ: Սակայն 1980-ականների վերջին քաղաքի սոցիալ-ժողովրդագրական պատկերը խիստ խնդրահարույց էր: Քաղաքում բնակվում էր շուրջ 17.000-18.000 հայ, որը զգալի ներդրում ուներ քաղաքի տնտեսական և մշակութային կյանքում: Էթնիկ լարվածության հիմքում ընկած էին մի քանի խորքային գործոններ, որոնք աստիճանաբար վերածվեցին բացահայտ թշնամանքի: Հայերը Սումգայիթում ներկայացնում էին որակյալ աշխատուժը և մտավորականության զգալի հատվածը, ինչը տեղի ադրբեջանցի վերաբնակների շրջանում առաջացնում էր սոցիալական նախանձ և անհանդուրժողականություն:[5]

Ջարդերի կազմակերպված բնույթը և պետական մարմինների մասնակցությունը

Սումգայիթի ջարդերը տարերային անկարգություններ չէին, այլ մանրակրկիտ ծրագրված գործողություն, որոնք իրականացվում էին պետական կառույցների անմիջական աջակցությամբ կամ լռությամբ: Բազմաթիվ փաստեր վկայում են նախապատրաստական լայնածավալ աշխատանքների մասին:[6]

Հասցեների ցուցակների կազմումը

Ջարդերից շաբաթներ առաջ տնային կառավարչությունների (ԲԷՄ) աշխատակիցները տարբեր պատրվակներով այցելել էին բնակարաններ և ճշտել բնա-

կիչների ազգությունը: Ականատես Վրեժ Հայրյանը պատմում է, որ իրենց տուն է եկել մի երիտասարդ՝ իբր ծխնելույզները ստուգելու, բայց իրականում գրանցել է անուն-ազգանունները: Յուրի Դանիելյանը վկայում է, որ ջարդերից մեկուկես ամիս առաջ գրանցել են ընտանիքի բոլոր անդամներին՝ իբր «ընտրություններ-ի համար», սակայն ոչ մի ընտրություն չի եղել: Ջարդերի օրերին մարդասպանների խմբերը հստակ գիտեին, թե որ մուտքի որ հարկում է ապրում հայ ընտանիք, ինչը թույլ էր տալիս թիրախավորել նրանց նույնիսկ բազմազգ շենքերում:[7]

Զենքի պատրաստումը և բաշխումը

Հանցագործության գործիքները չեն բերվել դրսից, այլ պատրաստվել են Սումգայիթի գործարաններում: Քաղաքի խողովակագլանման գործարանում աշխատանքային ժամերին զանգվածաբար պատրաստվել էին մետաղյա ձողեր (արմատուրա), դանակներ և կացիններ: Սումգայիթի քաղկոմի նիստերի անդամները հետագայում ընդունել են, որ գործարանի ղեկավարությունը թույլ է տվել, որ այդ գործիքները պատրաստվեն և բաժանվեն «խուլիգանական տարրերին»: Ավելին, ականատեսների վկայությամբ՝ ջարդարարները հատուկ խմբերի կողմից ստացել են հոգեմետ նյութեր և ոգելից խմիչքներ ագրեսիվության ավելացման նպատակով:[8]

Պայմանական նշանների կիրառումը

Ջարդերի ընթացքում ադրբեջանցիները կիրառում էին հատուկ պայմանանշաններ՝ հայերին տարբերելու համար: Օրինակ, ադրբեջանական բնակարաններում լույսերը միացված էին թողնում, որպեսզի ջարդարարները չհարձակվեն: Մեքենաների վարորդները ձեռքերը հանում էին պատուհանից կամ հատուկ ազդանշաններ տալիս՝ ցույց տալով, որ մեքենայի մեջ հայ չկա: Այս կազմակերպվածությունը ևս վկայում է այն մասին, որ սումգայիթյան ջարդերը եղել են նախապես ծրագրված և համակարգված:[9]

Իրադարձությունների ժամանակագրությունը. Երեք օրվա սարսափը (փետրվարի 27-29)

Սումգայիթի ջարդերը կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի, որոնցից յուրաքանչյուրը բնութագրվում էր բռնության աճող մասշտաբներով և պետական մարմինների ակնհայտ անգործությամբ:

Փետրվարի 27. նախերգանք

Երեկոյան հանրահավաքից հետո առաջին խմբերը սկսեցին հարձակումները հայերի վրա: Ոստիկանությունը ներկա էր, բայց չէր միջամտում: Հայ բնակիչները սկսեցին զանգահարել իրավապահ մարմիններին, սակայն ստանում էին պատասխաններ, թե «ամեն ինչ գիտենք, մի՛ դիմադրեք»:

Փետրվարի 28. արյունալի գագաթնակետը

Սա ամենաողբերգական օրն էր: Ամբոխը, որն արդեն հասնում էր հազարների, ներխուժում էր տներ: Մարդկանց դուրս էին նետում պատշգամբներից, ողջակիզում փողոցներում: Ականատեսները նկարագրում են դեպքեր, երբ 50-80 հոգանոց խմբերը հարձակվում էին մեկ բնակարանի վրա, որտեղ հայերը փորձում էին ինքնապաշտպանվել կենցաղային իրերով: Այդ օրը տեղի ունեցան զանգվածային բռնաբարություններ և սադիստական խոշտանգումներ:

Փետրվարի 29. բանակի ուշացած միջամտությունը

Չնայած խորհրդային զորքերը քաղաք էին մտել դեռևս փետրվարի 28-ի երեկոյան, նրանց հրամայված էր չմիջամտել: Միայն փետրվարի 29-ի երեկոյան, երբ արդեն հարյուրավոր մարդիկ սպանվել կամ վիրավորվել էին, զորքերը ստացան վճռական գործողությունների հրաման: Հաստատվեց պարետային ժամ, և սկսվեցին ձերբակալությունները, սակայն հիմնական կազմակերպիչներն արդեն հասցրել էին թաքնվել կամ մնալ անձեռնմխելի:[10]

Իրադարձությունների զարգացման դինամիկան

Ամսաթիվ	Գործողությունների բնույթը	Պետական արձագանքը
Փետրվարի 26-27	Հանրահավաքներ, առաջին հարձակումներ	Լիակատար անգործություն, սադրանքների խրախուսում
Փետրվարի 28	Զանգվածային ջարդեր, սպանություններ, թալան	Զորքերի ներկայություն՝ առանց միջամտության իրավունքի
Փետրվարի 29	Բռնությունների շարունակություն, ողջակիզումներ	Վճռական գործողությունների մեկնարկ միայն երեկոյան
Մարտի 1	Պարետային ժամի հաստատում, տարհանում	Հայ բնակչության մնացորդների տեղափոխում ակումբներ

Բռնության մեթոդաբանությունը և մարդկային ճակատագրերը

Սումգայիթի ջարդերն աչքի ընկան բացառիկ դաժանությամբ, որն ուղղված էր ոչ միայն հայ բնակչության ֆիզիկական ոչնչացմանը, այլև զոհերի արժանապատվության լիակատար ոտնահարմանը: Վերապրողների վկայություններն այս ոճրագործության փաստագրական ամենաազդեցիկ աղբյուրն են:

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունեն Հրայր Ուլուբաբյանի, Սուրեն Ջոլյանի և Աղասի Արշակյանի համահեղինակած «Սումգայիթ... Գենոցիդ... Գլասնոս՞տ» և Սամվել Շահմուրադյանի

խմբագրած «Սումգայիթի ողբերգությունը. հայերի դեմ ջարդերը Խորհրդային Ադրբեջանում» աշխատությունները: Այս ժողովածուներում ամփոփված տասնյակ վկայությունները բացահայտում են ոճրագործության սարսափելի մանրամասներ:

Օրինակ, ականատեսներից Շահեն Ֆրիդոնի Սեյրանյանը նկարագրում է Սաշա և Լոլա Ավագյանների սպանությունը. Լոլային մերկացրել և դուրս են հանել շքամուտքից, ապա 500 մետր քարշ տվել փողոցով ու վերջնականապես սպանել թեյարանի մոտ: Մեկ այլ սահմռկեցուցիչ վկայություն փաստում է ողջակիզումների մասին, երբ զոհը փորձում էր դուրս գալ կրակից, սակայն ջարդարարները մետաղյա ձողերով նրան հետ էին հրում դեպի խարույկը: Այս վավերագրական նյութերն ապացուցում են, որ բռնությունը կրել է ոչ թե պատահական, այլ նպատակաուղղված սադիստական բնույթ:[11]

Իրավապահ մարմինների և շտապօգնության հանցավոր մեղսակցությունը

Սումգայիթի ջարդերի առանձնահատկություններից մեկն այն էր, որ պետական ծառայությունները, որոնք կոչված էին փրկելու մարդկանց, դարձան հանցագործության մասնակից կամ լռակյաց դիտորդ:

Իրավապահ համակարգի անգործությունը

Ականատես Իվան Վանյանը նշում է, որ ոստիկանությունից իրեն պատասխանել են. «Մի՛ փորձեք նրանց դիմադրել»: Պանտելեյ Մելիքովը վկայում է, որ շատ ոստիկաններ քայլում էին ամբոխի հետ: Կոնստանտին Պխակադզեն տեսել է, թե ինչպես են զինվորականները բռնում զինված ջարդարարներին, իսկ տեղի ոստիկանները նրանց անմիջապես ազատ են արձակում: Սա վկայում է այն մասին, որ տեղի ուժային կառույցները գտնվել են ջարդարարների հետ նույն համակարգում:[12]

Շտապօգնության ծառայության մերժումը

Բուժօգնությունը ևս հասանելի չէր հայերին: Ականատես վերապրողներից Իրինա Վահրամովան պատմում է, որ շտապօգնությունից պատասխանել են. «Ձեզ հենց այդպես էլ պետք է»: Կային դեպքեր, երբ շտապօգնության մեքենաները ժամանել են միայն այն ժամանակ, երբ վիրավորներն արդեն մահացել էին: Վերոբերյալ վկայությունը մեկ անգամ ևս փաստում է, որ սումգայիթյան ջարդերը եղել են կազմակերպված և համակարգված տեղի իշխանությունների կողմից:[13]

Կորուստների վիճակագրական վերլուծությունը և նյութական վնասը

Սումգայիթի ջարդերի հետևանքով կորուստները ներառում են ինչպես մարդկային կյանքեր, այնպես էլ հսկայական նյութական և մշակութային վնաս: Խորհրդային պաշտոնական վիճակագրությունը փորձել է նվազեցնել զոհերի թիվը՝ ողբերգությունը «տեղայնացնելու» նպատակով:

Մարդկային կորուստներ

ԽՍՀՄ Դատախազության պաշտոնական տվյալներով սպանվել էր 32 մարդ, որից 26-ը՝ հայ: Սակայն անկախ աղբյուրները և ականատեսների վկա-

յությունները թույլ են տալիս ենթադրելու, որ զոհերի իրական թիվը տատանվում է 200-ից 500-ի սահմաններում: Վիրավորների թիվը գերազանցում էր հազարը, իսկ բռնաբարության դեպքերը, որոնք հաճախ չէին արձանագրվում ամոթի կամ վախի պատճառով, հարյուրավոր էին:[14]

Նյութական և տնտեսական վնաս

Ջարդերի ընթացքում թիրախավորվել էր հայերի գույքը.

- **Բնակարաններ**. 200-ից 900 բնակարան ամբողջությամբ թալանվել կամ այրվել է:
- **Տրանսպորտ**. Շուրջ 100 անձնական մեքենա ոչնչացվել է:[15]

Խորհրդային արդարադատության ձախողումը և անպատժելիության մթնոլորտը

Սումգայիթի ջարդերի իրավական գնահատականը կրում էր ձևական բնույթ: ԽՍՀՄ իշխանությունները նպատակ ունեին թաքցնել հանցագործության էթնիկ և կազմակերպված բնույթը: Միխայիլ Գորբաչովը 1988 թ. հուլիսի 18-ի նիստում հայտարարեց, որ ջարդերն իրականացրել են «հասարակության թափթփուկները», և հրաժարվեց որակել այն որպես ցեղասպանություն:[16]

Գործի մասնատումը

Միասնական քրեական գործի փոխարեն, դատախազությունը գործը բաժանեց 80 առանձին դրվագների: Սա թույլ տվեց յուրաքանչյուր սպանություն դիտարկել որպես «խուլիգանական դրդապատճառներով» կատարված արարք, այլ ոչ թե մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Հիմնական կազմակերպիչները, քաղաքային իշխանությունները և իրավապահները մնացին անպատիժ: Միայն մի քանի տասնյակ պատահական անձինք դատապարտվեցին: Ադրբեջանի նախկին դատախազ Իլիաս Իսմայիլովը 2003 թ. խոստովանել է, որ Սումգայիթի ջարդերը հրահրողները հետագայում զբաղեցրել են պատգամավորական աթոռներ Ադրբեջանի խորհրդարանում:[17]

Միջազգային իրավական գնահատականները և բանաձևերը

Սումգայիթի ջարդերը լայն արձագանք գտան աշխարհում, սակայն աշխարհաքաղաքական իրողությունները թույլ չտվեցին համարժեք պատժամիջոցներ կիրառել:

Եվրոպական խորհրդարանի դիրքորոշումը

1988 թ. հուլիսի 7-ին Եվրոպական խորհրդարանն ընդունեց բանաձև, որով Սումգայիթի իրադարձությունները որակեց որպես «հակահայկական պոգրոմներ»:[18]

Անդրեյ Սախարովի և ԱՄՆ կոնգրեսի արձագանքը

Մարդու իրավունքների պաշտպան Անդրեյ Սախարովը զգուշացնում էր, որ հայ ժողովուրդը կանգնած է նոր ցեղասպանության վտանգի առաջ, և Սումգայիթը դրա սկիզբն էր: ԱՄՆ Սենատը 1989 թ. հուլիսին պաշտոնապես ճանաչեց Սումգայիթի սպանությունները որպես «պոգրոմներ»:[19]

Արմենոֆոբիան որպես Ադրբեջանի պետական գաղափարախոսություն

Սումգայիթի ջարդերից հետո Ադրբեջանում ձևավորվեց մի համակարգ, որում հակահայկականությունը դարձավ պետականության հիմնասյուներից մեկը:

Ադրբեջանական դպրոցներում հայատյացությունը դասավանդվում է որպես պաշտոնական պատմություն: Հայ լինելը շատ դեպքերում օգտագործվում է որպես վիրավորանք, ինչը հանգեցնում է դատական հետապնդումների:[20]

Մշակութային ժառանգության ոչնչացումը

Սումգայիթի և Բաքվի ջարդերից հետո Ադրբեջանն անցավ հայկական մշակութային հետքի ջնջմանը: Սա ներառում է եկեղեցիների քանդումը կամ դրանց «ալբանացումը», գերեզմանների պղծումը և հուշարձանների ոչնչացումը: Այս երևույթը որակվում է որպես մշակութային ցեղասպանություն, որի նպատակն է զրկել հայերին տարածաշրջանում բնիկ լինելու իրենց պատմական իրավունքից:[21]

Եզրակացություն

Սումգայիթի հայության կոտորածները ցեղասպանական գործողությունների դասական օրինակ են, որոնցում պետական հովանավորչությունը, նախապես ծրագրված լինելը և անպատժելիությունը միահյուսված էին: Գիտական հետազոտությունն ապացուցում է, որ այս իրադարձությունները ոչ թե պատահական անկարգություններ էին, այլ Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքն ուժով ճնշելու առաջին լայնամասշտաբ փորձը:

Պատմական վերլուծությունը ցույց է տալիս, որ Սումգայիթի ջարդերի իրական կազմակերպիչների անպատժելիությունը կանաչ լույս վառեց հետագա էթնիկ զտումների համար: Այն, ինչ տեղի ունեցավ 1988 թ. Սումգայիթում, կրկնվեց 1990 թ. Բաքվում, 1991 թ. «Օղակ» գործողության ժամանակ և վերջապես 2023 թ. Արցախի ամբողջական հայաթափման ընթացքում:

Միջազգային իրավունքի տեսանկյունից Սումգայիթի հարցը մնում է չլուծված, քանի դեռ չկա հստակ քաղաքական և իրավական գնահատական, որով կճանաչվի այս ոճրագործությունը որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Պատմական ճշմարտության վերականգնումը և պատասխանատվության հարցի բարձրացումը ոչ

միայն հարգանքի տուրք է զոհերի հիշատակին, այլև կարևորագույն քայլ՝ կանխելու նմանատիպ ոճրագործությունների կրկնությունը ապագայում: Կայուն խաղաղությունը տարածաշրջանում հնարավոր է միայն արդարադատության և անցյալի ոճիրների լիակատար ճանաչման պարագայում: ■

Հղումներ

1 Samvel Shahmuratian, ed., *The Sumgait Tragedy: Pogroms Against Armenians in Soviet Azerbaijan*, trans. Steven Jones, vol. 1 (New Rochelle, NY: Aristide D. Caratzas, 1990), 12; Գայանե Հովհաննիսյան, «Վերապրելով Սումգայիթը. հայ բնակչության ջարդերը ականատեսների աչքերով», *Ցեղասպանագիտական հանդես* 13, no. 2 (2025); 171; UN General Assembly, *Letter dated 27 February 2023*, A/77/867–S/2023/287 (2023), 2; Thomas de Waal, *Black Garden: Armenia and Azerbaijan Through Peace and War*, 10th anniversary ed. (New York: New York University Press, 2013), 40:

2 Գայանե Հովհաննիսյան, «Վերապրելով Սումգայիթը. հայ բնակչության ջարդերը ականատեսների աչքերով», *Ցեղասպանագիտական հանդես* 13, no. 2 (2025); 170: Samvel Shahmuratian, ed., *The Sumgait Tragedy: Pogroms Against Armenians in Soviet Azerbaijan*, trans. Steven Jones, vol. 1 (New Rochelle, NY: Aristide D. Caratzas, 1990), 45; Edita Gzoyan et al., "The Sumgait Massacres: Concerning Their Characteristics and Definitions," *International Journal of Armenian Genocide Studies* 8, no. 1 (2023): 60; UN General Assembly, *The Premeditated Massacre in Sumgait*, A/72/780–S/2018/200 (2018); European Parliament, *Resolution on the Situation in Soviet Armenia*, July 7, 1988, OJ No C 235, 12.9. 1988, 106:

3 Samvel Shahmuratian, ed., *The Sumgait Tragedy: Pogroms Against Armenians in Soviet Azerbaijan*, trans. Steven Jones, vol. 1 (New Rochelle, NY: Aristide D. Caratzas, 1990), 10; UN General Assembly, *The Premeditated Massacre in Sumgait*, A/72/780–S/2018/200 (2018), 2; «Սովետական Ղարաբաղ», 21 փետրվարի, 1988:

4 Վահրամ Բալայան, *Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը*, 2-րդ լրամշակված հրատարակություն (Երևան: «Զանգակ-97», 2011), 265:

5 Shahmuratian, The Sumgait Tragedy,8-9; De Waal, *Black Garden*,31-33:

6 Грайр Улубабян, Сурен Золян и Агаси Аршакян, *Сумгаит… Геноцид… Гласность?* (Ереван: Общество «Знание» Армянской ССР, 1989), 11; Gzoyan et al., «The Sumgait Massacres,», 75; UN General Assembly, A/77/867–S/2023/287, 2:

7 Shahmuratian, *The Sumgait Tragedy*, 1:26, 46; Հովհաննիսյան, «Վերապրելով Սումգայիթը», 177-178:

8 Shahmuratian, *The Sumgait Tragedy*, 1:110; Հովհաննիսյան, «Վերապրելով Սումգայիթը», 181; UN General Assembly, A/77/867–S/2023/287, 2:

9 Հովհաննիսյան, «Վերապրելով Սումգայիթը», 178-179; Shahmuratian, *The Sumgait Tragedy*, 1:42, 71; Улубабян, Золян и Аршакян, *Сумгаит… Геноцид… Гласность?*, 11:

10 Shahmuratian, *The Sumgait Tragedy*, 1:12-15; UN General Assembly, A/77/867–S/2023/287, 2:

11 Shahmuratian, *The Sumgait Tragedy*, 1:18-21:

12 Հովհաննիսյան, «Վերապրելով Սումգայիթը», 182-183; Shahmuratian, *The Sumgait Tragedy*, 1:111:

13 Հովհաննիսյան, «Վերապրելով Սումգայիթը», 182-183; Shahmuratian, *The Sumgait Tragedy*, 1:22:

14 UN General Assembly, A/77/867–S/2023/287, 2.

15 Shahmuratian, *The Sumgait Tragedy*, 1:12:

16 «ՍՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության նիստը», *Գրական թերթ* շաբաթաթերթ, 22 հուլիսի 1988, է; Բալայան, *Արցախի պատմությունը*, 265-266:

17 UN General Assembly, A/77/867–S/2023/287, 2-3

18 European Parliament, *Resolution on the Situation in Soviet Armenia*, July 7, 1988, Official Journal of the European Communities No C 235, September 12, 1988, 106:

19 Andrei Sakharov, letter to the editor, *The New York Times*, November 26, 1988; U.S. Senate, Amendment 2690 to H.R. 4782, July 1989, *Congressional Record* 135, no. 100, daily ed. (July 20, 1989); UN General Assembly, *The Premeditated Massacre in Sumgait*, A/72/780–S/2018/200 (2018), 2:

20 Գառնիկ Դավթյան, *Հայատյացությունը Ադրբեջանի պետական գաղափարախոսության հիմքում* (Երևան, 2019), 12; Armenian Bar Association, *Letter to the United Nations High Commissioner for Human Rights regarding Online Hate Speech*, June 22, 2023; International Court of Justice. *Application Instituting Proceedings: Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan).* September 16, 2021, para.3-4:

21 Vahram Balayan et al., *The Tangible Cultural Monuments of the Republic of Artsakh* (Yerevan: Spiritual Artsakh NGO, 2026), 1:45; Սեդա Պարսամյան և Հայաստան Մարտիրոսյան, «Անցանկալի ինքնության ջնջումը. հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը և/կամ կերպափոխումը թուրքական և ադրբեջանական իշխանությունների կողմից», *Ցեղասպանագիտական հանդես* 13, no. 2 (2025), 112:

Անտեսանելի քիլլերը. Հայաստանը ուռուցքաբանական հիվանդությունների առաջատար երկրների եռյակում

Արմեն Վարդանյան
Լրագրող

Օդի որակի խնդիրը հանքարդյունաբերության մեծ ծավալներ ունեցող Հայաստանում, հատկապես դեռ խորհրդային տարիներից քիմիական և հանքաշահագործման արդյունաբերության կենտրոնի վերածված Երևանում, միշտ օրախնդիր է եղել: Պատահական չէ, որ նորանկախ Հայաստանում ընդունված առաջին օրենքներից մեկը վերաբերել է հենց օդի մաքրությանը: 1994 թվականի մայիսին՝ արցախյան առաջին հաղթական ազատամարտից հետո, ԱԺ-ն ընդունեց «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքը, որը սակայն նախագահի կողմից դիտողություններով հետ վերադարձվեց և վերջնականորեն ուժի մեջ մտավ նույն տարվա հոկտեմբերի 11-ին:

Օրենքի հիմնական սկզբունքներն էին՝

- կրճատել աղտոտող արտանետումները,
- տնկել ծառեր ու վերականգնել կանաչ տարածքները,
- կրթել հասարակությանը այս կարևոր խնդրի հարցում:

Մայրաքաղաքի օդի աղտոտվածության խնդիրը բարձրացվել է դեռ խորհրդային տարիներին, նաև՝ արտասահմանում:

Այսպես՝ դեռ 1985 թվականին «Լոս Անջելես Թայմս» ամերիկյան պարբերականը ծավալուն հրապարակում էր արել օդի աղտոտվածության խնդրով՝ «Սովետական Հայաստանում, ինչպես Լոս Անջելեսում, ծխի գագաթը չի երևում» վերտառությամբ: Հոդվածում նշվում է, որ խորհրդային ղեկավարությունը լուրջ միջոցառումներ է ձեռնարկում Երևանում օդի աղտոտվածության դեմ պայքարի ուղղությամբ, թե խնդրահարույցն այն էր, որ այդ տարիներին Երևանում 60.000 մասնավոր ավտոմեքենա էր շահագործվում:

1987 թ. Զորի Բալայանը «Երևանը տառապում է» վերնագրով հոդվածում գրում է «Երևանի սուր էկոլոգիական պայմանները վատթարացնում են բնակիչների առողջությունը»:

1999 թվականին ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական քաղաքականության հանձնաժողովն արձանագրել էր, որ որոշ աղտոտիչների արտանետումները հաճախ գերազանցում են սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) սահմանը:

Մայրաքաղաքի օդի աղետալի որակի պատճառները

Այսօր լրջագույն հիմնահարց է դարձել մայրաքաղաքի օդի որակը: Շահագործվող մեքենաների թվի բազմապատկմանը զուգահեռ ավելացել են նաև որոշիչ այլ գործոններ: Երևանում և նրա անմիջական մերձակայքում գոյություն ունի 39 հանքավայր, դրանցից շահագործվող են 29-ը՝ իրենց ողջ բացասական հետևանքներով: Չշահագործվող հանքերն էլ նույն ծավալով լուրջ վնաս են հասցնում շրջակա միջավայրին, քանի որ սահմանված կարգով կոնսերվացված և ռեկուլտիվացված չեն:

Սրան զուգահեռ մայրաքաղաքում հետխորհրդային տարիներին տասնապատիկ անգամ կրճատվել են կանաչ տարածքները և հատվել մեծաաղարթ ծառերը: Վերջին գործընթացը մեծ ծավալներ ստացավ Երևանի գործող քաղաքապետ Տիգրան Ավինյանի օրոք և շարունակվում է մինչ օրս:

Սրան գումարվում են շինարարության աննախադեպ ծավալները: Ավինյանի թիմն այսօր դրական է գնահատում և որպես ձեռբերում ներկայացնում խոշոր շինթույլտվությունների դիմաց համայնքի բյուջեի մուտքերը նախատեսվածից ավել հավաքագրելու փաստը:

Այսպես՝ 2025 թվականին միայն շինթույլտվությունների համար մոտ 18.7 մլրդ դրամի՝ նախատեսվածից 1 մլրդ դրամ ավել գումար է մուտքագրվել համայնքային բյուջե:

Երևանում՝ 2014 թվականին տրվել է 1430 շինթույլտվություն, իսկ 2024-ին՝ մոտ երեք անգամ ավել՝ 4236: ՔՊ-ական իշխանությունները քաղաքը վերածեցին

բետոնե կառույցների՝ «ջունգլիների», հիմնականում կանաչ տարածքների հաշվին, կառուցապատման նորմատիվ պահանջների խախտմամբ: 2025 թվականին Երևանի քաղաքապետարանը հավանություն է տվել 110 խոշոր քաղաքաշինական ծրագրի նախագծի, որոնցից յուրաքանչյուրի դեպքում տասնյակ բազմաբնակարան շենքեր են կառուցվում:

Օդի աղտոտվածության ոչ բավարար և համակարգված մոնիթորինգը

Շրջակա միջավայրի նախարարությունը Երևանում կատարում է փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան:

Մայրաքաղաքի տարբեր հատվածներում, տարբեր օրերին դիտվել են մթնոլորտային օդում համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ) փոշու ու ազոտի երկօքսիդի պարունակությունների գերազանցումներ: Օդի որակը վատանում է ուշ աշնան և ձմռան ընթացքում: Նոյեմբերին փոշու օրական կոնցենտրացիաները՝ ՍԹԿ-ները, միջինում գերազանցում են համապատասխանաբար՝ 1.1-6.3 անգամ, ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան՝ 1.1-2.0 անգամ: Ծծմբի երկօքսիդի և գետնամերձ օզոնի գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ից չեն դիտվում:

Իսկ ինչպիսին է պատկերը ՀՀ մյուս խոշոր քաղաքներում:

Գյումրիում գործում է 1 անշարժ և 24 շարժական դիտակետ: Հանրապետության երկրորդ քաղաքում սովորաբար արձանագրվում է ՍԹԿ-ից մոտավորապես 14 անգամ փոշու կոնցենտրացիայի գերազանցում:

Վանաձորում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 3 անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ: Խոր աշնան և ձմռան ամիսներին քաղաքի տարբեր հատվածներում, տարբեր օրերին դիտվում են փոշու պարունակության գերազանցումներ ՍԹԿ-ից: Փոշու օրական կոնցենտրացիան միջինը ՍԹԿ-ն գերազանցում է 1.1-1.6 անգամ: Ծծմբի և ազոտի երկօքսիդների գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ից չեն դիտվում:

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 1 անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետ: Այստեղ փոշու կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցում է 1.1-3.5 անգամ:

Հանքարդյունաբերության կենտրոններից մեկում՝ Ալավերդիում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Գործում է 3 անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ: Աշնանը և ձմռանը հատկապես փոշու կոնցենտրացիան գերազանցում է ՍԹԿ-ն՝ 1.1-3.0 անգամ: Պղնձաձուլարանի փակումից հետո վերջին տարիներին ծծմբի և ազոտի երկօքսիդների գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ից չեն դիտվում, այն դեպքում երբ նախկինում այնտեղ ծծմբի անձրևներ էին տեղում:

Քաջարան և Կապան քաղաքների մթնոլորտային օդում համապատասխանաբար 15 և 11 շարժական դիտակետերում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ և պարբերաբար արձանագրվում են գերազանցումներ, Կապանում՝ ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդների, Քաջարանում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաների մասով:

Մայրաքաղաքում մթնոլորտային օդի որակի խնդիրը գնալով ահագնանում է: Հատկապես ձմռան ամիսներին Արարատյան դաշտում և Երևանում օդի աղտոտվածությունն ավելանում է, քանի որ ցածրադիր գոտում առաջանում է ինվերսիոն շերտ՝ այսպես կոչված «կեղև», որը խոչընդոտում է օդի աղտոտվածության հեռացմանը, և այն երկար ժամանակ կուտակվում ու պահպանվում է մթնոլորտում:

2013-2014 թթ. ձմեռն աչքի է ընկել երկարատև ինվերսիոն ռեժիմի պահպանմամբ և համապատասխանաբար օդի աղտոտվածության բարձր ցուցանիշներով: 2016-2017 թթ. ձմռանը, երբ ինվերսիոն շերտը պահպանվեց 90 օրից ավելի, Երևան քաղաքում արձանագրվել է փոշու միջին օրական ՍԹԿ-ի գերազանցում 10-12 անգամ: Ներկայում փոշու միջին օրական ՍԹԿ-ի առավելագույն գերազանցումը դիտվում է 3-4 անգամ, ինչը Հայաստանում գործող կարգավորումներով համարվում է անբարենպաստ:

Տարվա մյուս եղանակներին մայրաքաղաքի և հարակից բնակավայրերի օդի որակը մի փոքր բարելավվում է ոչ այն պատճառով, որ աղտոտման աղբյուրներն են նվազում, կամ դրանցից արտանետումներն են պակասում, այլ տարվա այդ եղանակին Սևանա լճից՝ հատկապես երեկոյան ժամերին, քամիներ են փչում, որոնք քշում տանում են աղտոտված օդը:

Մթնոլորտային օդի աղտոտվածությունը՝ ուռուցքաբանական հիվանդությունների խթանիչ

Մարդկանց և շրջակա միջավայրի վրա ծայրահեղ բացասական ազդեցություն ունեցող այս հիմնա-

հարցը հնչեղություն ստացավ մի քանի տարի առաջ, երբ հասանելի դարձան Երևանի օդի աղտոտվածության վերաբերյալ շվեյցարական տեխնոլոգիական IQAir ընկերության կայքի տվյալները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանը խոշոր կառուցապատողներին պարտադրեց շինհրապարակներում օդի որակի 152 սարք տեղադրել, որոնց միջոցով դիտարկվում է փոշու մանր մասնիկների՝ PM2.5-ի և PM10-ի պարունակությունը:

Այդ սարքերը նախատեսված են լրացնելու ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ճշգրիտ մեթոդներով աշխատող սարքերին, օդի որակի վերաբերյալ տարածական առումով ավելի շատ տեղեկատվություն ունենալու համար: Սակայն շինարարների տեղադրած սարքերն էականորեն զգայուն են արտաքին պայմանների՝ բարձր խոնավության, բարձր կամ ցածր օդի ջերմաստիճանի, մեծ աղտոտվածության հանդեպ, ինչի հետևանքով սարքերի ճշգրտությունը կազմում է ±10-40 %: Բացի այդ, վերոնշյալ սարքավորումները դեռևս չունեն միջազգային ստանդարտացման ինստիտուտի կողմից հաստատված ստանդարտ մեթոդներ, հետևաբար, դրանց ինքնուրույն, առանց այլ սարքերի կիրառման ստուգաճշտել հնարավոր չէ:

Իսկ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը, ինչպես վերը նշեցինք, մթնոլորտային օդում դիտարկում է միայն ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, գետնամերձ օզոնի և ըստ բաղադրության չտարբերակված փոշու պարունակությունը: Այլ կերպ ասած՝ փոշու մանր մասնիկները՝ PM2.5-ը և PM10-ը, ճշգրիտ հաշվարկող սարքեր չունենք, և, հետևաբար, հնարավոր չէ գնահատել դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա, մինչդեռ այդ մանր մասնիկները լրջագույն վնաս են հասցնում մարդուն՝ համարվելով ծանր մետաղների և այլ վնասակար նյութերի տարածման ու օրգանիզմ ներթափանցման միջոց:

Այս պայմաններում Առողջապահության նախարարությունը չի կարող գնահատել փոշու ազդեցությունն առողջության վրա, քանի որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը որպես գնահատման հիմք առաջարկում է PM2.5 և PM10 ցուցանիշները, մինչդեռ դրանց չափումներ լիազոր մարմինը՝ ՇՄՆ-ն, չի իրականացնում, իսկ քաղաքապետարանի պարտադրանքով տեղադրված սարքերն էլ ճշգրիտ և սերտիֆիկացված չեն:

Գործող իրավանորմատիվային չափորոշիչներով մթնոլորտի աղտոտվածության մակարդակները դասակարգվում է հետևյալ դասերի.

բարենպաստ – աղտոտումը չի գերազանցում յուրաքանչյուր աղտոտող նյութի համար սահմանված միջին օրական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ),

անբարենպաստ – աղտոտումը գերազանցում է յուրաքանչյուր աղտոտող նյութի համար միջին օրական ՍԹԿ-ն մինչև 19 անգամ,

վտանգավոր – աղտոտումը գերազանցում է յուրաքանչյուր աղտոտող նյութի համար միջին օրական ՍԹԿ-ն 20-29 անգամ,

արտակարգ - աղտոտումը գերազանցում է յուրաքանչյուր աղտոտող նյութի համար միջին օրական ՍԹԿ-ն 50 և ավելի անգամ:

ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը Երևան քաղաքում գործող կայաններով դիտարկումների արդյունքների մինչև 5%-ում հայտնաբերում է ազոտի երկօքսիդի, 1%-ում՝ ծծմբի երկօքսիդի գերազանցումներ և առյուծի բաժինը՝ մինչև 30%, դիտվել են չտարբերակված փոշու գերազանցումները սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից:

Բժիշկ-մասնագետներն անընդհատ ահազանգում են, որ Երևանում ալերգիաներով պացիենտների քանակն ավելացել է: Մեծացել է նաև թոքի խրոնիկ օբստրուկտիվ հիվանդությամբ հիվանդների քանակը, մարդիկ գանգատվում են արցունքահոսությունից:

Երևանում առաջնային հիվանդություններն են ավելացել ու կավելանան, նաև հղիների համար է աղտոտվածությունը շատ վտանգավոր, քանի որ այն ազդում է նաև պտղի վրա: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով վաղաժամ ծննդաբերությունը, նորածինների փոքր քաշը, հետագայում երեխաների մոտ լեյկոզի զարգացումը մեծապես պայմանավորված է օդի աղտոտվածությամբ:

Աղտոտման ահռելի աղբյուր է Նուբարաշենի աղբավայրը: Այնտեղից անջատվող գազերը հաճախ հրդեհի բռնկման պատճառ են դառնում, և այդ ժամանակ այրումից արտանետվում են ԱՀԿ-ով սահմանված հիմնական բազմաթիվ աղտոտիչներ՝ դիօքսին, ազոտ, ածխածին: Այդ մասնիկները, լինելով շատ փոքր և վտանգավոր, անցնում են կենսաբանական խոչընդոտները: Դրանք նպաստում են օնկոլոգիական հիվանդությունների զարգացմանը, ինչի հետևանքով 153 երկրների շարքում Հայաստանը գտնվում է առաջին-երկրորդ տեղերում՝ թոքերի, կրծքի և ենթաստամոքսային գեղձի քաղցկեղի ցուցանիշներով:

Բազմաթիվ մարդիկ արդեն հասկանում են, որ օդի աղտոտվածությունն աղետալի է մարդկանց և կենդանիների առողջության համար: Սակայն շատ ավելի քչերն են տեղյակ, թե որքան կործանարար ազդեցություն է այն ունենում բույսերի վրա: Մինչդեռ բույսերը նպաստում են մաքուր օդի, կենսաբազմազանության և կլիմայական կայունության պահպանմանը:

Փոշին ուղիղ փոխկապակցված է մահացության ցուցանիշների հետ՝ դառնալով ինսուլտներից և ինֆարկտներից մահացության դեպքերի շուրջ 25 տոկոսի պատճառ: Շնչառական համակարգի հիվանդությունների մոտ 43 տոկոսը և թոքերի քաղցկեղի շուրջ 30 տոկոսը պայմանավորված են հենց փոշով:

Աշխարհի բժշկական հանրույթը փոշին անվանում է «անտեսանելի քիլլեր» իսկ Երևանում և մյուս խոշոր քաղաքներում այն այնքան շատ է, որ տեսանելի է նաև անզեն աչքով:

Օդի աղտոտվածության դեմ պետության վարած անարդյունավետ պայքարը

Կառավարությունն ամեն տարի գրեթե 200-300 մլն դրամ է հատկացնում օդի որակի դիտակայաններ ձեռք բերելու և դիտարկումների արդյունավետությունը բարձրացնելու համար, բայց դրանք բավարար չեն մարդու առողջության վրա վնասակար ազդեցության ճշգրիտ դիտարկման, գնահատման և վնասակար հետևանքները մեղմելու համար:

Այս իրավիճակում գործադիր իշխանությունը պարբերաբար դիտարկում է մթնոլորտային օդի պահպանության ուղղությամբ իրականացված և ընթացիկ վերահսկողական աշխատանքների արդյունքները՝ արձանագրված իրավախախտումների և կիրառված վարչական միջոցների համատեքստում, ինչպես նաև Երևան քաղաքում օդի որակի վրա առավել բացասական ազդեցություն ունեցող աղբյուրների գույքագրման ընթացքը և դրանցով պայմանավորված աղտոտվածության նվազեցման ուղղությամբ առաջարկվող միջոցառումները:

Պարբերաբար քննարկվում են նաև ավտոտրանսպորտային միջոցներից արտանետումների կանխարգելման վերահսկողական միջոցառումները՝ դրանց տեխնիկական զննության շրջանակում շարժիչի արտանետումների չափման գործընթացի ամբողջական թվայնացման, զննության կայանների տեխնիկական վերազինման և վերահսկողության էլեկտրոնային գործիքների կիրառման ուղղությամբ մշակվող առաջարկությունները, սակայն դրանք շոշափելի արդյուք չեն տալիս:

2025 թ. դեկտեմբերի 26-ին միայն մթնոլորտային օդի պետական մոնիթորինգի և օդի որակի տվյալների տրամադրման կարգը հաստատելու մասին նախագծով կառավարությունը սահմանեց մոնիթորինգի իրականացման, տվյալների հավաքման, վերլուծության, գնահատման և հանրությանը տրամադրման ընթացակարգերը: Բայց փոփոխությունն ուժի մեջ մտնելու ժամկետ է սահմանվել 2028 թվականի հունվարի 1-ը:

Այս խնդրի լուծման համար նաև միջազգային դոնորներից է գումար ներգրավվում, սակայն այն իրացվում է հիմնականում՝ անարդյունավետորեն: Օրինակ ՀՀ և Ճապոնիայի միջև «Տնտեսական և սոցիալական զարգացում» դրամաշնորհի համաձայնագրով նախատեսվում է ՀՀ կառավարությանը տրամադրել 250.0 մլն ճապոնական յեն դրամաշնորհ (շուրջ 1.6 մլն ԱՄՆ դոլար)՝ ՇՄ Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ի օդի՝ որակի մոնիթորինգի կայանների համար սարքավո-

րումներ ձեռք բերելու նպատակով: Դրամաշնորհի շրջանակում նախատեսվում էր արդիականացնել դիտացանցի 3 դիտակայան՝ ժամանակակից ավտոմատ չափում ապահովող (ճապոնական Horiba) սարքավորումներով, բայց կրկին փոշու մանր մասնիկների չափման կարողություններ չեն ներդրվում:

Այստեղ տեղին է հիշել, որ մոտ 15 տարի առաջ Ճապոնիայի կառավարությունը ծրագիր ներկայացրեց՝ սեփական միջոցներով մայրաքաղաքի ամենախոշոր՝ Նուբարաշենի աղբավայրի՝ գործնականում հողածածկման և այնտեղից այրվող գազերի ստացման վերաբերյալ, որպեսզի չեզոքացնեն աղբավայրից արտանետվող ծայրահեղ վնասակար նյութերի ազդեցությունը: Սակայն ծրագիրը կյանքի չկոչվեց, քանի որ աղբավայրը որոշ շրջանակների համար խոշոր բիզնեսի և եկամուտի աղբյուր է՝ ոչինչ, որ այն երևանցիների և հարակից բնակավայրերի բնակիչների, բառիս բուն իմաստով, կյանքի հաշվին է գոյատևում, իսկ ճապոնացիներն այդպես էլ չկարողացան հասկանալ, թե իրենց իսկ միջոցներով բնակչության առողջության համար օգտակար նման կարևորագույն ծրագրի իրականացումն ինչու տապալվեց ՀՀ պատասխանատուների կողմից:

Նուբարաշենը սանիտարական աղբավայր չէ, այն ոչ մի նորմի չի համապատասխանում: Ներկայում Երևանի քաղաքապետարանում կա որոշում, որ մասնավոր-համայնք համագործակցության շրջանակում աղբի վերամշակման գործարան հիմնելու ուղղությամբ աշխատանք տարվի, որի համատեքստում տեղավորվելու է նաև Նուբարաշենի աղբավայրի փակումը: Որոշվել է ներգրավել միջազգային կազմակերպություններին, որոնք կօգնեն երկու մրցույթի տեխնաաջադրանքների ստացմանը՝ լավագույնին ընտրելու համար: Երկփուլ մրցույթն այս տարվա գարնանը կհայտարարվի:

Երևանի քաղաքապետարանն էլ նոր-նոր է սկսել օդի աղտոտվածության նվազեցման քառամյա ծրագրի մշակումը: Զմռանն աղտոտվածության հիմնական աղբյուրներին ավելանում է ջեռուցման նպատակով վառելիքի տարբեր տեսակների այրումը: Քաղաքապետարանի ներկայացուցիչները և ՇՄՆ ստորաբաժանումները պարբերաբար քաղաքացիներին հորդորում են զերծ մնալ արտադրության, սպառման կամ տերևաթափից առաջացած թափոնները բնական միջավայրում, բնակավայրերում այրման համար չնախատեսված վայրերում կամ վառարաններում այրելուց՝ տեղեկացնելով, որ դա առաջացնում է «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքի 85.1 հոդվածով նախատեսված տույժեր: Խախտումների վիճակագրության դիտարկումից էլ պարզվում է, որ դրանք շատ քիչ են և ձևական բնույթ են կրում: Ավելին՝ աշնան ամիսներին նույն քաղաքապետարանի աշխատակիցներն են իրականացնում տերևների այրման գործողություններ:

Ինչ պետք է անել առողջապահական այս աղետը կանխելու համար

Պետք է կրճատել աղտոտող արտանետումները, նվազեցնելով դրանց աղբյուրները, մինչդեռ մայրաքաղաքում և ՀՀ մյուս քաղաքներում շարունակաբար մեծանում է չկանոնակարգված շինարարությունը, շենքերի արտաքին հատվածներում տեղադրված փոշեկլանիչ ցանցերը հիմնականում ձևական բնույթ են կրում: Հարյուրավոր նորակառույցների պարագայում եզակի են դեպքերը, երբ շինարարությունը, իրոք, մեկուսացվում է փոշին կլանող բազմաշերտ ցանցերով:

Պետք է տնկել ծառեր ու վերականգնել կանաչ տարածքները: Այս կարևորագույն հրամայականի պայմաններում մայրաքաղաքում շարունակվում է մեծ սաղարթ ունեցող ծառերի հատումը և դրանք նորերով փոխարինումը, որոնք կամ չեն ունենալու այնքան անհրաժեշտ փոշեկլանիչ մեծ սաղարթ, կամ տասնյակ տարիներ են պետք նախկին մեծության սաղարթը վերականգնելու համար:

Երևանի քաղաքապետարանի մշակած օդի աղտոտվածության նվազեցման գործողությունների քառամյա պլանով նախատեսվել են տրանսպորտից, շինարարությունից, հանքերից արտանետումների նվազեցման միջոցառումներ: Նախատեսվում է նաև կանաչ և ջրային տարածքների ավելացում: Այս ամենը սակայն քաղաքապետարանը չի պատրաստվում սեփական միջոցներով անել և կրկին հայցում է միջազգային դոնոր կազմակերպությունների՝ Ասիական զարգացման բանկի, ՄԱԶԾ, Բելգիայի դեսպանատան աջակցությունը, այն դեպքում, երբ խնդրի դեմ պայքարի արդյունավետ լծակները պետության ձեռքում են:

Արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է ընդամենը ճիշտ օգտագործել առկա գործիքակազմը և նորմատիվ-իրավական դաշտով սահմանափակել օդի մարդածին աղտոտման աղբյուրները, ինչը հնարավոր չէ իրականացնել գործող կառավարության օրոք, քանի որ վերջին տարիների գործողություններն ավելի են խորացրել հիմնահարցը: Նոր, գիտակ կառավարությունը պետք է կանգնեցնի այս աղետի ընթացքը, որը մոտենում է անդառնալիության կետի: ■

Ամբիցիաների վտանգները քաղաքական գործընթացներում

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

Առհասարակ, պարզ մարդկային ցանկությունների և հավակնությունների միջև եղած սահմանը թափանցիկ է: Հեշտ չէ շատ արագ որոշել, թե ինչն է հավակնություն և ինչը՝ պարզ մարդկային ձգտում: Որպես կանոն՝ հավակնությունները կամ օտար բառով ասած՝ **ամբիցիաները** իրենց գոյության սկզբնափուլում ունենում են ընդունելի ու հասկանալի տեսք: Մի՞թե վատ է, երբ մարդն ուզում է բարձրակարգ կրթություն ստանալ, հասնել լավ վարձատրության, ունենալ կարգավիճակ, շրջապատի մարդկանց համար դառնալ հեղինակություն, ունենալ ամուր դիրքեր հասարակության մեջ և այլն: Իհարկե՝ ոչ: Ցանկացած մարդու ինքնաիրացումն անցնում է նաև այս ամենի միջով: Հավակնությունը, ասես, մարդու վառելիքն է, այն նրան մղում է ակտիվ գործունեության և ստիպում լինել համառ ու աշխատասեր: Առանց հավակնությունների մարդը հնարավոր է դոփի տեղում, ուստի նա դրա շնորհիվ իր առջև դնում է առավել բարձր նպատակներ ու պայքարում է նոր բնագծեր նվաճելու համար: Ամբիցիան նաև շարժիչ ուժ է, որն անհատի պոտենցիալը վերածում է ուժի: Օրինակ, բիզնեսում հավակնոտությունը բարձր է գնահատվում: Այն մարդու ակտիվության հոմանիշն է: Սակայն խոսքը չափավոր ամբիցիոզության մասին է, այլապես չափն անցած հավակնոտությունը սկսում է ապականել բիզնես ծրագրերը, կտրում է իրականությունից և ամեն ինչ տանում փակուղի: Ամբիցիոզությունը հաճախ ասոցացվում է հպարտության, էգոիզմի և ագրեսիվության հետ: Այն կարող է իր հետևից թողնել ավերակներ՝ դառնացնել ընտանիքի անդամներին, ընկերներին և օտարել մարդուն մերձավորներից: Հավակնությունների գերության մեջ հայտնված մարդը նաև մի կողմ է դնում իր սկզբունքները, ավելի ստույգ՝ դրանք թողնում է անցյալում: Օրինակ, շատ դեպքերում քաղաքական գործիչները գիտեն միայն ամբիցիայի լեզուն: Նրանք այլ լեզու չգիտեն ու նաև անասելի սևեռված են իրենց նպատակների բարեհաջող իրականացման վրա և աշխատում են չթուլանալ: Դա, բնականաբար, ստեղծում է պատնեշներ՝ մարդկային նկարագրի և հոգևոր որակների միջև: Մարդն այլևս զգայուն և կարեկից չէ իրեն շրջապատողների հանդեպ: Այս մարդիկ ակնհայտորեն ունեն թերարժեքության տեսանելի և քողարկված բարդույթներ: Եթե այս բարդույթները չլինեին, նրանք այդքան ակնհայտ ամբիցիոզ չէին լինի: Մի խոհեմ մարդ, որի անունը, ավա՜ղ, չեմ մտապահել, այսպես է բնութագրել ամբիցիա երևույթը. «**Ամբիցիոզությունը ոսկեջրած դժբախտություն է, թաքնված թույն, քողարկված համաճարակ, ստերի ակունք, նախանձ ծնող, բազում արատների սկզբնաղբյուր: Այն նաև**



սրտեր է կուրացնում և բուժիչ դեղը վերածում հիվանդության»: Կույր ամբիցիաները ստիպում են, որ մարդը վաճառի իր հոգին, զոհաբերի սկզբունքները: Նա պատրաստ է օգտագործել բոլորին, ովքեր կհայտնվեն իր ճանապարհին: Եթե հնարավոր լիներ ամբիցիաների հարցում ստեղծել մի մոտավոր վիճակագրություն, ապա բոլորս կսարսռայինք դրանց սոսկալի հետևանքներից: Հենց այս որակներն էին, որ ստեղծեցին չինգիզխաններ, հուլիոսկեսարներ, ներոններ, նապոլեոններ, հիտլերներ, լենին-ստալիններ, քադաֆիներ, սադամհուսեիններ և դեռ շարունակում են ստեղծել ու ստեղծել: Հոգեպես թույլ և մտքով տկար մարդիկ իրենց ձեռքում հայտնված իշխանության ուժով գնացին մեկը մյուսից զզվելի ոճրագործությունների, դարձան միլիոնավոր անմեղ մարդկանց կործանման պատճառ, ապականեցին մարդկության կյանքը, արյան մեջ թաթախեցին ամեն լուսավոր բան: Եվ պետք է իմանալ, որ սերն ու ամբիցիան չեն կարող ապրել կողք կողքի: Կամ մեկը պիտի լինի, կամ՝ մյուսը: Տարիներ առաջ առիթ եմ ունեցել կարդալու մի կիսագաղտնի փաստաթուղթ, որում ասվում էր, թե հատկապես ինչ որակներ ու նկարագիր պետք է ունենան գաղտնի ծառայությունների կողմից ընտրվող և օգտագործվող գործակալները: Ըստ այդ ուղեցույցի՝ այդպիսի մարդիկ պետք է լինեն ներքին ուժից զուրկ, մարդկային ազնվությունից հեռու, հոգևոր ատաղձ չունեցող խեղճ, բայց պարտա-

դիր ամբիցիոզ անձեր, որովհետև նրանց կառավարելը և ամենատհաճ, կեղտոտ գործերի մեջ ներգրավելը հեշտ է: Նրանք նաև մատաղացու գառներ են՝ ցանկացած պահի զոհաբերվելու հարմար: Երբ չկան ներքին հոգևոր զսպանակներ, նրանք շատ հանգիստ դառնում են, թե՛ ազգուրացներ, և թե՛ իրենց սկզբունքների վաճառականներ:

Մեր երկրի Ազգային Ժողովում նստած մի հոծ զանգված՝ ՔՊ անունով, ուղղակիորեն հաստատում է ասվածը: Իզուր չէ, որ ժողովրդի մեջ շրջանառվում է «**քրչապետ**» բառը: Այո, հատկապես **«քաղաքական քրչերի»** վերածված մի զանգված, որն ամեն ինչի համաձայն է՝ մանդատը մի քիչ էլ գրպանում պահելու համար: Ասում են, որ վարչապետը այս մարդկանց դեմ զանազան կոմպրոմատներ ունի: Հավատում ենք, բայց առավել ճշգրիտ է այն միտքը, որ դրանք ինքնակամ ճորտության հանձնված, իրենց խղճուկ ամբիցիաներին գերի դարձած մարդիկ են, ուստի պետք չէ նրանց անհարկի գունազարդել, ասելով, թե նրանք դրության տերը չեն: Ամբիցիաների հիմքում իշխանության անհագուրդ ծարավն է: Դուք չեք գտնի իր գործում լիովին կայացած մի մարդու, որը հիվանդագին հակում ունենա իշխանության հանդեպ: Դա նրա ինչ-ինչ է պետք: Նրա կիրքը և մղումն իր մասնագիտությունն է: Ճարտարապետը ապրում է իր նախագծած շենքի խնդիրներով, լավ բժշկի խնդիրը հիվանդին ոտքի կանգնեցնելն է, մանկավարժը սիրում է իր սաներին և փորձում լավ սերունդ դաստիարակել և այլն: Կայացած մասնագետների համար իշխանության կաբինետներում նստելը ձանձրալի բան է, իսկական տանջանք: Իսկ իրենց գիտելիքներով և նախասիրություններով քաղաքական կյանքի ձգտող անհատները սիրում են քաղաքական գործով ծառայել մարդկանց և այդ բանն անում են այնպես, ինչպես կանեին ցանկացած այլ գործ: Ամբիցիոզ մարդկանց դեպքում այդպես չէ, նրանք իրենց և կյանքը չեն ընդունում այնպիսին, ինչպիսին կա: Էգոն չի թողնում, որ նրանք հաշտ լինեն կյանքի և իրենք իրենց հետ: Նրանք ճգնում են լինել ավելին, ավելի հզոր, ազդեցիկ, ամեն գնով իշխանություն հաստատել այլոց վրա, մտածելով, որ այդ կերպ կդառնան դրության լիակատար տերը: Ամբիցիոզ ղեկավարի աճի բարձրակետը բռնապետ դառնալն է: Ամբիցիաների տենդախտն անխուսափելիորեն հանգեցնում է դրան: Բոլոր բռնապետների դեպքում գործընթացներն ու օրինաչափությունը նույնն են՝ ճիշտ կողմնորոշվել խառնակ օրերին, գնահատել սեփական հնարավորությունները և ճոճիմ մղումները, թույլ տրված սխալների համար անվերջ մեղավոր նշանակել ուրիշներին, ոչնչացնել կամ չեզոքացնել հակառակորդներին, շուրջը համախմբել իրենց կուրորեն նվիրված անդեմ և թուլակամ մարդկանց, հորինել դատարկ կարգախոսներ ու խորհրդանիշներ և իհարկե՝ լինել նպատակասլաց, անզիջում և դաժան: Նրանք սկզբում ձևանում են թունդ ժողովրդասեր, ժողովրդապաշտ գործիչներ, հետո ոտքերը սրբում են իրենց իշխանության բերողների վրա: Սա է բռնապետների անփոփոխ քաղաքական երթուղին, որը նրանց, ի վերջո, կանգնեցնում է պատասխանատվության առաջ, իսկ ոմանց էլ կանգնեցնում է գնդակահարության պատի տակ:



Մի պահ նայենք Նիկոլի հետագծին և կհամոզվենք, որ այդպես է: Միայն բարդույթավորված մարդկանց համար է կաբինետներում հայտնվելը դառնում գերագույն տենչանք: Ու շատ էլ կարևոր չէ, տվյալ գործից բան հասկանում են, թե՞ ոչ: Մեր երկրում արդեն յոթուն տարի է իրենց տկարամիտ ուղեղներով անմիտ, անհեթեթ օրինագծեր են հրապարակ հանում, որոշումներ են կայացնում և ձեռքը կրակն ընկնում: Ասել է թե՝ ամբիցիան կա, ուղեղը և կարողությունը՝ ոչ: Եվ ինչպես քաղցած գամփռները չեն հանդուրժում երբ մեկը փորձում է իրենց առջևից տանել ոսկորը, այնպես էլ նմանները թույլ չեն տալիս, որ իրենց իշխանությունից մի գրամ, մի սանտիմետր պակասի:

ՔՊ-ականները ճանկերով ցանկացածին կրզկտեն, եթե զգան, որ մի բան այն չէ: Նրանց ուժն իրենց նմաններին առավելագույնս օգտագործելու, շանտաժի ենթարկելով կախյալ վիճակներում պահելու մեջ է: Այս մարդկանց համար այլևս պատվախնդրության հարց չկա: Ինչ եք կարծում, Նիկոլը չգիտի՞, որ ինքը հիմնահատակ հեղինակազրկված մարդ է: Այն էլ ինչպես գիտի, բայց դա ևս սեփական շահերին ծառայեցնելու միջոց է՝ «**Ճիշտ է, ես ատելի եմ, ու ես գիտեմ, բայց դա ինձ նաև թույլ է տալիս իմ տերերի հրահանգները կատարել առանց կաշկանդվելու և այդ կերպ ապավինելով նրանց՝ պահպանել իմ դիրքերը: Ես այլևս չեմ վախենում հասարակության ունեզուրկ խավից, թոշակառուների անեծքներից և կասեմ ու կանեմ այն, ինչ խելքիս կփչի...**»: Բռնապետների համար նախատեսված «ձեռնարկներում» ասված է, որ ինչքան շատ խեղճացնես քո երկրի խեղճերին ու ունեզուրկներին, անտեսես ու արհամարհես օրենքները, այնքան հեշտ է լինելու նրանց վերահսկողության տակ պահելը և ուղղորդելը: Այդպես վարվել են գրեթե բոլոր բռնակալները: Այս ամենը վկայում է, թե ինչքան

հեռու կարող են գնալ իրենց հոգին սատանային ծախած ամբիցիոզ մարդիկ: Ամբիցիոզության իշխանական մակարդակի վերաբերյալ կարող ենք էլի խոսել, քանզի դրա նրբերանգները շատ են, բայց բավարարվենք այսքանով: Հիմա փորձենք քննել քաղաքական ու հասարակական մյուս մակարդակներում դրսևորվող հավակնությունների ոչ պակաս մերժելի դրսևորումները, որոնք ի հայտ են գալիս և սրված ձևերով արտահայտվում են արդեն ընտրությունների շեմին: Խոհեմ և սրտացավ գործչի համար կան արարքների թույլատրելիության սահմաններ:

Կարո՞ղ է, օրինակ, ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանն իրականությունից կտրված բաներ ասել, ամբոխահաճո ճառեր արտասանել: Բացառվում է: Կամ՝ ասենք ՀՅԴ գործիչները՝ Արթուր Խաչատրյանը, Արմեն Ռուստամյանը, Գեղամ Մանուկյանը, Լիլիթ Գալստյանը և մյուսներն էժան միավորներ վաստակելու մտասևեռումներ ունենան, չգիտակցեն իրենց ասած խոսքի իմաստն ու հետևանքները: Նույնպես բացառվում է: Նրանք սովորել, հղկվել ու կայացել են այնպիսի դպրոցում, որտեղ ցանկացած ինքնանպատակություն մերժվում է ի սկզբանե: Հայրենիքին, պետությանը և հասարակությանը ծառայելը նրանց համար գերագույն արժեք է, անվիճելի բան: Այս ամենի անունը մի բառով «**պատասխանատվություն է**»: Հիմա ընտրությունների նախաշեմին ենք, և պարզ է, որ ամբիցիոզ մարդկանց մի նոր խումբ գլուխները կբարձրացնի անհայտությունից, կստեղծվեն կուսակցություններ, որոնցից յուրաքանչյուրի թվակազմը չի գերազանցի, ինչպես ընդունված է ասել՝ մի խաշի սեղանը: Նրանք ոտքի վրա կմոգոնեն նախընտրական ծրագրեր, կարգախոսներ ու կնետվեն հանրային և քաղաքական հրապարակ, կձգտեն հասարակությանը ներկայանալ իրենց կասկածելի ինտելեկտով և կարողություններով, ինչ է թե օրենքը դեմ չէ նման գործունեություն ծավալելուն: Բայց մի՞թե օրենքն է խնդիրը: Իսկ ո՞ւր մնաց քաղաքական մշակույթը, խիղճը, պատասխանատվության տարրական զգացումը, մարդկային պարկեշտությունը: Իրենց քաղաքական դաշտ ինքնամոռաց նետողներին ուզում ես ասել. «**հարգելիներս, չէ՞ որ դուք պարահրապարակ չեք մտնում, երբ պարել չգիտեք: Ինչո՞ւ եք կարծում, թե կարելի է, լինելով այդքան անտեղյակ, անփորձ, մտածել, թե կարող եք երկիր կառավարել»:**

1999 թ. Նախագահական ընտրություններն էին, առաջատարները Կարեն Դեմիրճյանն ու Ռոբերտ Քոչարյանն էին, հավակնորդների ցանկում կար ևս 12 մարդ: Բավականին լուրջ ու ակտիվ քարոզարշավ էր, մրցապայքարը թեժանում էր օր օրի:

ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ալեքսան Կիրակոսյանը Ռոբերտ Քոչարյանին համակրում էր: Սա իմանալով՝ նրան հրավիրեցի Հանրային ռադիո՝ հարցազրույցի: Համաձայնեց սիրով: Իր ելույթում Քոչարյանի մասին ասաց. «**Պինդ տղա է, ուժեղ ձեռքեր ունի, լավ ու հմուտ հեծյալի պես կկարողանա համակարգի սանձերը ձեռքում պահել, ամբիցիաներին գերի չի դառնա....**»: Զգուշորեն հարցրի, թե ի՞նչ կարծիք ունի մյուս հավակնորդների մասին: Հասկացրեց, որ կնախընտրեր նրանց մասին բան չասել, բայց, այնուամենայնիվ չդիմացավ ու մեկ երկու բան ասաց. «**Շատերին չեմ էլ ճանաչում՝ նայում ես ո՛չ քաղաքացի է, ո՛չ գյուղացի, ո՛չ էլ մտավորական, ո՛չ մտքի խորություն ունի, ո՛չ էլ իր մասնագիտական ոլորտում է կայացել, երկրին ծառայություններ չի մատուցել: Լավ, էդ ո՞նց են որոշել, որ կարող են պետություն կառավարելուց գլուխ հանել: Դրանք երևի մտածում են՝ երկիր կառավարելն ի՞նչ է որ, լոր խփելու պես մի բան է՝ տուր ու գցիր տոպրակդ**»: Իմ այն հարցին, թե որևէ վատ բան տեսնո՞ւմ է թեկնածուների այդ բազմամարդության մեջ, ասաց. «**Իհարկե, իհարկե դա լավ բան չի: Նրանք իրենց խղճուկ եսը առաջ մղելով պետական ծանրակշիռ մարդու, քաղաքական լուրջ գործչի նշաձողն են իջեցնում: Մի քանի ճոռոմ ելույթ ունենալով երկրի առաջնորդ չեն դառնում, այդպես չի կարելի**»:

Մեր ժողովուրդը գոնե հիմա պետք է իրեն հաշիվ տա, թե ինչ է լինում, եթե կառավարման ղեկին հայտնվում են կիսատ պռատ, կամազուրկ, գործից անտեղյակ, անազնիվ, տգետ ու ամբիցիոզ մարդիկ: Մարդիկ պետք է գիտակցեն, որ հրապարակ ելած մարդկանց հիվանդոտ էգոն միայն նոր աղետներ է գուժում: Աշխարհում մեծագույն առաքելությունը Աստվածահաճո, մարդասեր արարքն է, ազգին ազնվորեն ծառայելու մարդկային ձգտումը: Եվ ինչպես մեր էպոսի դյուցազունը՝ Դավիթը, մի քանի անգամ հավատաց ու ներեց Մսրա Մելիքին, բայց վերջին զարկով երկու կես արեց նրան, այնպես էլ մեր ժողովուրդը գալիք ընտրությանը պետք է ստախոսներին ու ժողովրդի կյանքը ապականողներին վռնդի իշխանությունից, ասելով. «**Ես էի քեզ ծնել, ես էլ կոչնչացնեմ**»: ■

Լեզվական ինքնություն և թվային իրականություն

Անժելա Հարությունյան
Բանասեր, մանկավարժ

Փետրվարի 21-ը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի կողմից, սահմանվել է Մայրենի լեզվի միջազգային օր: Որպես հիշեցում այն մասին, որ լեզուն ոչ միայն հաղորդակցության միջոց է, այլև ժողովուրդների գոյության, ինքնության և մշակութային բազմազանության պահպանման հիմնասյուն: Հայ ժողովրդի պատմության մեջ այս ճշմարտությունն ունի բացառիկ և կենսական նշանակություն:

Լեզուն՝ որպես գոյատևման առանցք

Հայոց լեզվի դերը հայ ազգային ինքնության պահպանման գործում եզակի է, քանի որ դարեր շարունակ հայ ժողովուրդը գոյատևել է **առանց պետականության և անկախ պետության**: Այդ պայմաններում լեզուն դարձել է այն առանցքը, որի շուրջ պահպանվել են ինքնությունը, հավատը, մշակույթը և պատմական հիշողությունը:

Դեռևս 5-րդ դարում հայ մտավոր և քաղաքական վերնախավը գիտակցում էր, որ **լեզուն է ազգի փրկության և գոյատևման հիմնական միջոցներից մեկը**: Պատահական չէ, որ հենց այդ ժամանակ է ծագում հայոց գրերի ստեղծման գաղափարը: Հայաստանը գտնվում էր Պարսկաստանի և Բյուզանդիայի տիրապետության տակ, և գնալով ավելի օրհասական էր դառնում հայի՝ որպես ինքնուրույն ազգ գոյություն ունենալու խնդիրը:

Գոյություն ուներ ոչ միայն կրոնական, այլև **լեզվական ձուլման լուրջ վտանգ**: Թեև ժողովուրդը խոսում էր հայերեն, սակայն սեփական գիր չուներ, իսկ արքունիքի, պետական կառավարման և պաշտոնական գրագրության լեզուներն օտար էին՝ պարսկերեն, հունարեն, ասորերեն: Սա հանգեցնում էր նրան, որ աստիճանաբար թուլանում էին ազգային և պետական ինքնության հիմքերը:

Լեզուն է, ձևավորում և փոխանցում՝

- ազգային ինքնությունը,
- քաղաքակրթական և մշակութային պատկանելությունը,
- պետական ու հոգևոր միասնականությունը,
- քաղաքական կողմնորոշումը:

Այս բոլոր գործառույթները զրկված էին ամուր հիմքից, քանի դեռ հայ ժողովուրդը չուներ սեփական գիր և պետական լեզու: Այսպես առաջացավ հայոց գրերի ստեղծման կենսական անհրաժեշտությունը՝ որպես ազգային ինքնության, պետական կառավարման և եկեղեցու կայացման և պահպանման միջոց:

Բայց այսօր մեր կյանքի բազմաթիվ ոլորտներում տեղի է ունենում **նահանջ** մեր ինքնությունից, իսկ դրանցից մեկն էլ սոցցանցերում մայրենի լեզվով՝ հայատառ չգրելն է:

Սոցցանցերում մայրենի լեզվով չգրելու խնդիրը

Թվային մեր այս դարաշրջանում սոցցանցերը դարձել են հաղորդակցության հիմնական հարթակներից մեկը: Սակայն հենց այդ միջավայրում այսօր առավել ակնհայտ է դառնում մի մտահոգիչ երևույթ՝ **մայրենի լեզվով չգրելը կամ այն երկրորդ պլան մղելը**: Խնդիրը միայն լեզվական չէ. այն ունի խորքային՝ մշակութային, հոգեբանական և ազգային ինքնությունը վտանգող հետևանքներ:

Սոցցանցերում մայրենի լեզվով չգրելու հիմնական պատճառներից են.

- ✓ օտարալեզու հավելվածների գերակայությունը,
- ✓ սովորությունը, ինչն էլ իր հերթին պայմանավորված է օտարալեզու այդ հավելվածների գերակայությամբ,
- ✓ լեզվական գիտելիքների պակասը ի ցույց դնելու, լեզվական սխալներ անելու մտավախությունը,
- ✓ օտար լեզվով ստացած կրթությունը,
- ✓ բազմալեզու միջավայրը,
- ✓ սոցիալական միջավայրի ճնշումը,
- ✓ ժամանակի խնայողության պատրվակը և այլն:

Այս բոլոր պատճառների հետևանքով տեղի է ունենում մեկ պարզ, բայց վտանգավոր երևույթ՝ **ազգային ինքնության թուլացում**: Լեզուն միայն հաղորդակցման մեխանիկական միջոց չէ: Այն մտածողու-

թյուն է, հոգեբանություն, աշխարհընկալում, արժեքային համակարգ ձևավորող և ազգային ինքնության հիմնական ցուցիչ: **Մարդը մտածում է իր լեզվով, ընկալում իրականությունը լեզվի միջոցով և այդ լեզվի մեջ է կրում իր պատմական հիշողությունը:**

Նեյրոլեզվաբանությունն իր հերթին փաստում է, որ **մայրենի լեզուն ուղեղում ձևավորվում է ամենախորը շերտերում**: Այն առաջին լեզուն է,

- որով ձևավորվում է մտածողությունը,
- որով մարդը զգում է, երազում, արձագանքում այս կամ այն երևույթին,
- կապվում է հույզերի, հիշողության և ինքնության կենտրոնների հետ (լիմբիկ համակարգ):

Այդ պատճառով է, որ մարդը կարող է գերազանց խոսել օտար լեզվով, բայց **ամենախորը զգացումներն արտահայտում է մայրենիով**:

Պատահական չէ, որ օտար նվաճողները կամ այն պետությունները, որոնք իրենց ենթակայության տակ են վերցրել այլ ազգերի, առաջին հերթին սահմանափակել կամ արգելել են նրանց մայրենի լեզվի կիրառությունը կրթության, կառավարման և հանրային կյանքի ոլորտներում: Այս գործընթացը հայտնի է որպես **լեզվական ասիմիլիացիա** և պատմության ընթացքում եղել է ազգերի ձուլման ամենաարդյունավետ գործիքներից մեկը: Քանի որ մեկ բան հստակ է. **ով վերահսկում է լեզվի և կրթության դաշտը, նա էլ ձևավորում է ապագա քաղաքացու ինքնությունը**: Եվ եթե լեզուն այդքան կարևոր է պետական մակարդակում, ապա նույնքան կենսական պետք է լինի նաև անհատի և համայնքի մակարդակում:

Վտանգները

Մայրենի լեզվով չգրելու շարունակական պրակտիկան բերում է լեզվի աղքատացման, կիսագրագիտության տարածման, սերունդների միջև լեզվական կապի խզման, մշակութային հիշողության թուլացման և, երկարաժամկետ առումով՝ մայրենի լեզվի դուրս մղման հանրային ու թվային տարածքներից, ինչպես և, որ ամենավտանգավորն ու ցավալին է, բերում է աննկատ նահանջի ազգային ինքնությունից:

Այս հարցն **առավել հրամայական է Սփյուռքում**, որտեղ հայն ապրում է բազմալեզու, օտար միջավայրում: Այստեղ լեզվի չգործածումը շատ ավելի արագ է հանգեցնում ինքնությունից նահանջի, քանի որ մայրենի լեզուն հաճախ վերջին և երբեմն միակ կապն է ազգային ինքնության հետ:

Հայատառ գրելը և ինքնության հարցը

Հայատառ գրելու թեման հաճախ ուղեկցվում է ծայրահեղական ընկալումներով, ինչը կարևոր է հստակեցնել: Հայատառ գրելն ինքնին **չի նշանակում**, որ տվյալ մարդը 100 տոկոսով հայրենասեր է, և նույնքան սխալ կլինի պնդել, թե ով չի գրում հայատառ, հայրենասեր չէ:

Սակայն փաստը մնում է փաստ. **հայատառ գրելը և հայի ինքնությունն անքակտելիորեն կապված են իրար հետ**: Դրանք փոխկապակցված են, փոխպայմանավորված և միմյանց ամրացնող: Հատկապես Սփյուռքում հայ մնալու, ինքնությունից չնահանջելու կարևորագույն պայմաններից մեկը մայրենի լեզվի պահպանումն է:

Հայը, որտեղ էլ լինի, ամեն բան պետք է անի, որ սովորի հայերեն՝ ինքնուրույն, կազմակերպված դասընթացների միջոցով կամ համայնքային շրջանակներում: Իսկ եթե այդ հնարավորությունը սահմանափակ է, ապա լեզվական բացը պետք է լրացվի այլ ճանապարհներով՝

- ✓ ընտանիքում հայկական միջավայր պահպանելով,
- ✓ մշակույթին, պատմությանը, ավանդույթներին հաղորդակից լինելով,
- ✓ ազգային հիշողությունը փոխանցելով:

Սակայն այս ամենը հնարավոր է միայն մեկ նախապայմանով՝ **եթե կարևորվի մայրենի լեզվի դերը**: Ամեն ինչ սկսվում է կարևորելուց:

Այս համատեքստում խոսուն օրինակ է համաշխարհային ճանաչում ունեցող գրող Վիլյամ Սարոյանը: Թեև նա հայերեն գրել չի կարողացել և իր ստեղծագործությունները գրել է անգլերեն լեզվով, սակայն ամբողջ աշխարհին ներկայացել է որպես հայ գրող: Սարոյանն ինքն է ձևակերպել իր լեզվական և ազգային ինքնության էությունը հետևյալ խոսքերով. **«Ես հայերեն չեմ գրում, բայց աշխարհին նայում եմ հայերեն»**:

Սարոյանի ստեղծագործություններում հայը մշտապես ներկա է իր հոգեբանությամբ, հիշողությամբ, ընտանեկան կապերով, ազգային սովորույթներով ու բարքերով: Նրա հերոսների մեծ մասը հայեր են,

որոնք ապրում են հայկական միջավայրում, կրում են հայրենիքի պատմական հիշողությունը, Ցեղասպանության ցավը, սփյուռքահայի ինքնության բարդույթն ու հայրենիքի կարոտը:

Այս օրինակը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ նույնիսկ այն դեպքում, երբ լեզվի գործածումը սահմանափակ է, **մայրենի լեզուն ներսում ապրեցնելն ինքնության պահպանման առանցքային գործոն է**: Իսկ երբ այդ լեզվով ոչ միայն մտածում են, այլև այն գործածում հատկապես հանրային և թվային տարածքներում, ինքնությունը դառնում է ավելի պաշտպանված և կենսունակ:



Սարոյանը, թերևս, բացառություն է, ոչ թե մոռել, քանի որ Սարոյանը կարող էր չգրել հայերեն, բայց նա ուներ հայերենով ձևավորված զգայական հիշողություն, կրում էր մայրենի լեզվով կառուցված աշխարհընկալում: Այսինքն՝ նրա ուղեղում **հայերենը ներկա էր որպես ինքնության լեզու**, նույնիսկ եթե գրավոր արտահայտությունը այլ լեզվով էր: Մյուս բոլոր դեպքերում մայրենի լեզուն չգործածելը հանգեցնում է ինքնության քայքայման:

Ինչպես հաղթահարել խնդիրը թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում

Լուծումը պահանջում է գիտակցված մոտեցում: Անհրաժեշտ է տեխնիկական աջակցություն, կրթական համակարգի և հատկապես ուսուցիչների ու մտավորականների օրինակելի դերակատարում, ինչպես նաև մայրենի լեզվով բովանդակության ակտիվ խրախուսում սոցցանցերում:

Եզրակացություն

Մայրենի լեզվով գրելը սոցցանցերում պարզապես լեզվական ընտրություն չէ: Դա **ինքնության պահպանման, մշակութային դիմադրության և քաղաքացիական պատասխանատվության դրսևորում է**:

Փետրվարի 21-ը ոչ միայն տոն է, այլև հիշեցում. եթե լեզուն ապրում է թվային տարածքում, այն կապրի նաև ապագայում, իսկ եթե լռում և նահանջ է ապրում այնտեղ, ապա վտանգվում է ազգի ինքնությունն ու հետագա լինելիությունը:

Կոմպրադորական բուրժուազիայի անցյալն ու ներկան

Արամ Շահնազարյան
«Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր

Ժամանակակից քաղաքական գործընթացների վերլուծությունը հաճախ սահմանափակվում է առանձին իրադարձությունների, գործիչների կամ կարճաժամկետ որոշումների մեկնաբանությամբ՝ ստվերում թողնելով այն խորքային երևույթները, որոնք ձևավորում են իշխանության, տնտեսության և գաղափարախոսության փոխհարաբերությունները: Այդ բացը հատկապես նկատելի է փոքր և կախյալ պետությունների պարագայում, երբ քաղաքական փոփոխությունները հաճախ ներկայացվում են որպես ինքնուրույն ընտրության արդյունք՝ անտեսելով գլոբալ համակարգից կախվածություններն ու պայմանականությունները:

Այս հոդվածը փորձ է այդ բացը լրացնելու՝ մասնավորապես անդրադառնալով կոմպրադորական բուրժուազիային ոչ միայն որպես պատմական կամ տեսական հասկացության, այլև որպես կենսունակ երևույթի, որը շարունակաբար դրսևորվում է տարբեր հասարակական և քաղաքական իրողություններում: Կախվածության տեսության դասական մոտեցումների, ինչպես նաև համաշխարհային համակարգի վերլուծության հիման վրա հոդվածը դիտարկում է, թե ինչպես են արտաքին շահերի հետ սերտորեն կապվող տեղական էլիտաները ձևավորում քաղաքական օրակարգեր, «արժեքային» մտածողություն և կառավարման մոդելներ, որոնք աստիճանաբար հարաբերական են դարձնում ազգային ինքնիշխանության բովանդակությունը:

Ներկայացված վերլուծությունը չի հավակնում լինելու ակադեմիական ուսումնասիրություն: Այն չի սահմանափակվում տեսական մոդելների խորքային քննարկմամբ կամ նեղ մասնագիտական բանավեճով, այլ առաջարկում է վերլուծական–լրագրողական դիտանկյուն, ըստ որի, տեսական հասկացությունները համադրվում են պատմական օրինակների և ժամանակակից քաղաքական գործընթացների հետ: Այս մոտեցումը նկատի է ունենում, ոչ թե առանձին դեպքեր, այլ կառուցվածքային օրինաչափություններ՝ առանց դրանք անձնավորելու կամ ռեդուկցիայի ենթարկելու, ընթացիկ քաղաքական խոսույթի տրամաբանությամբ:

Կոմպրադորական բուրժուազիան ժամանակակից քաղաքական-տնտեսական իրականության այն սոցիալական շերտերից է, որի էությունը հնարավոր չէ հասկանալ՝ առանց կախվածության, միջնորդության և արտաքին շահերի հետ օրգանական կապերի: Ինչպես ներկայացվում է կախվածության տեսության դասական մոտեցումը՝ հասարակագետ, քաղաքատնտեսության և զարգացող երկրների գծով տնտեսագիտության տեսաբան Սամիր Ամինի և տնտեսագետ ու սոցիոլոգ, կախվածության տեսության և ծայրամասային տնտեսությունների վերլուծության տեսաբան Անդրե Գունդեր Ֆրանկի աշխատություններում, նման շերտերը ձևավորվում են ոչ թե որպես ազգային կապիտալի կրողներ, այլ որպես արտաքին կապիտալի տեղական գործակալներ: Կոմպրադորական բուրժուազիան հասարակական շերտ է ոչ այնքան ստեղծարար կամ արտադրական իմաստով, որքան գործառութային՝ որպես կապող օղակ արտաքին կապիտալի և տեղական հասարակության միջև: Նրա պատմական ձևավորումը կապված է գաղութատիրության, կիսագաղութային կարգերի և հետագայում՝ նեոգաղութային համակարգի հաստատման հետ, որտեղ տեղական իշխող խավը հիմնականում հրաժարվում է ազգային զարգացման ինքնուրույն նախագծերից և իր տնտեսական ու քաղաքական գոյությունը կապում է արտաքին կենտրոնների հետ: Այս իմաստով կոմպրադորական բուրժուազիան ոչ միայն սոցիալ-տնտեսական խավ է, այլ նաև հատուկ մտածողության, հոգեբանության և վարքագծի կրող:

Կոմպրադորական բուրժուազիայի մտային և հոգեբանական կառուցվածքի առանցքում ընկած է կախվածության ինստիտուցիոնալացումը:

Սամիր Ամինն այս երևույթը բնորոշում է որպես «արտաքին ուղղորդված վերարտադրություն», երբ տնտեսության և քաղաքականության ներքին տրամաբանությունը ենթարկվում է արտաքին կենտրոնների պահանջներին: Արտաքին ուժերից կախվածությունը տվյալ մտածողության մեջ ոչ թե ժամանակավոր պայման է, այլ գոյության բնական վիճակ: Սուվերենությունը դիտարկվում է որպես հարաբերական,

ազգային շահը՝ որպես ճկուն հասկացություն, իսկ արտաքին հովանավորը՝ որպես անվտանգության, կայունության և առաջընթացի հիմնական երաշխիք: Այս աշխարհընկալումն ամբողջությամբ համընկնում է հասարակագետ և պատմաբան Իմանուել Վալերշտայնի համաշխարհային համակարգի տեսության հետ, որտեղ ծայրամասային էլիտան գիտակցաբար վերարտադրում է սեփական ստորադաս դիրքը՝ կենտրոնի հետ ինտեգրվելու համար:

Այս մտային կառուցվածքի կարևոր բաղադրիչներից է արժեքային ցինիզմը: Ինչպես նշում էր Անդրե Գունդեր Ֆրանկը, կոմպրադորական բուրժուազիան չունի սեփական պատմական առաքելության գիտակցում, այլ մշտապես հարմարվում է ուժային հարաբերությունների փոփոխությանը: Գաղափարները նրա համար նպատակ չեն, այլ գործիք: Ժողովրդավարությունը, ազատ շուկան, մարդու իրավունքները, անվտանգությունը կամ ավանդական արժեքները գործի են դրվում ըստ քաղաքական նպատակահարմարության: Ճգնաժամային իրավիճակներում նույն շերտը կարող է նույն համոզմամբ պաշտպանել և՛ լիբերալ, և՛ ավտորիտար մոդելներ՝ պայմանով, որ վերջիններս ապահովեն կապիտալի, իշխանության և արտաքին կապերի պահպանումը: Այդ պատճառով կոմպրադորական բուրժուազիայի աշխարհայացքը հիմնականում էկլեկտիկ է, ներմուծված և ածանցյալ՝ առանց ամբողջական, ինքնուրույն գաղափարախոսության:

Արևմուտքի և հատկապես ԱՄՆ-ի հետ գաղափարական կապը կոմպրադորական բուրժուազիայի համար ունի ոչ միայն մշակութային կամ կրթական նշանակություն, այլ խորապես քաղաքական ենթատեքստ:

Վալերշտայնի ձևակերպմամբ՝ համաշխարհային համակարգի կենտրոնը հաստատում է ոչ միայն տնտեսական, այլև իմացաբանական հեգեմոնիա: Արևմտյան աշխարհակարգը կոմպրադորական բուրժուազիայի համար դառնում է լեգիտիմության աղբյուր: Նրա էլիտան հաճախ կրթվում է արևմտյան համալսարաններում, մտածում է ըստ արևմտյան խոսույթների, հետևում է արևմտյան մեդիային և սեփական հասարակությանը դիտարկում է այդ չափանիշներով՝ հաճախ օտարացած և վերևից: Այս մտածողության մեջ հասարակությունը ներկայացվում է որպես մշտապես «անպատրաստ» կամ «հետամնաց», ինչը Սամիր Ամինը բնորոշում է որպես ինքնաարատավորող ծայրամասային գիտակցություն:

Այս աշխարհայացքային հիմքի վրա ձևավորվում է նաև կոմպրադորական բուրժուազիայի գործողությունների տրամաբանությունը, որի առանցքում կարճաժամկետ շահերի և անձնական անվտանգության համադրությունն է: Գունդեր Ֆրանկի դիտարկմամբ՝ նման էլիտաները խուսափում են երկարաժամկետ ազգային նախագծերից, քանի որ դրանք ենթադրում են բախում կենտրոնի շահերի հետ: Նրանք նախընտրում են ներմուծման, ֆինանսական միջնորդության, արժութային կապիտալի և պետական ռեսուրսների վերահսկման ուղիները: Ճգնաժամերի ժամանակ այս վարքագիծը դրսևորվում է առավել բացահայտ՝ կապիտալի արտահոսքով, արտաքին միջամտության լեգիտիմացմամբ և ներքին սոցիալական դիմադրության սահմանափակմանն աջակցությամբ:

Կուբայի բռնապետ Բատիստան (կենտրոնում)

Պատմական փորձը բազմիցս հաստատել է այս օրինաչափությունը: Կուբայում մինչև 1959 թվականի հեղափոխությունը տնտեսության առանցքային ոլորտները վերահսկվում էին ամերիկյան կապիտալի կողմից, իսկ տեղական բուրժուազիան գործում էր որպես դրա շահառու և ենթակապալառու: Նրա աշխարհընկալումը համընկնում էր Վաշինգտոնի քաղաքական տրամաբանության հետ, իսկ Բատիստայի բռնապետությունը ընկալվում էր որպես կայունության ընդունելի երաշխիք: Հեղափոխության հաղթանակից հետո այդ շերտը կորցրեց իր կառուցվածքային հիմքը և քաղաքական դերակատարումը:

Նմանատիպ օրինաչափություն դրսևորվեց նաև Չիլիում՝ Սալվադոր Ալիենդեի կառավարության տարիներին: Արդյունաբերության ազգայնացումը և սոցիալական պետության կառուցման փորձերը հարվածում էին կոմպրադորական բուրժուազիայի հիմնական շահերին, ինչի հետևանքով այն դարձավ տնտեսական սաբոտաժի, կապիտալի արտահոսքի և քաղաքական դավադրությունների ակտիվ կազմակերպիչ: ԱՄՆ-ի աջակցությամբ լեգիտիմացված Պինոչետի զինվորական հեղաշրջումն ուղեկցվեց զանգվածային բռնաճնշումներով և հասարակության երկարատև տրավմայով:

Իրանում, շահական վարչակարգի տարիներին կոմպրադորական բուրժուազիան սերտորեն կապված էր արևմտյան, հատկապես ամերիկյան նավթային և արդյունաբերական շահերի հետ: Նրա տեխնոկրատական և արևմտամետ մտածողությունը խորապես օտարված էր հասարակության կրոնական և մշակութային հիմքերից: Ճգնաժամի պահին արտաքին հովանավորների վրա հենվելը չփոխարինեց ներքին լեգիտիմությանը, և հեղափոխության հաղթանակից հետո այդ շերտը քաղաքականապես վերացվեց:

Իրանի վերջին շահի թագադրության արարողությունը

Այս օրինակները կարևոր են ոչ թե որպես անցյալի առանձնահատուկ դեպքեր, այլ որպես կառուցվածքային օրինաչափության դրսևորումներ, որոնք հնարավոր է ճանաչել տարբեր աշխարհագրական և ժամանակային կոնտեքստներում: Այդ նույն տրամաբանությունը շարունակում է գործել նաև ժամանակակից գլոբալացված պայմաններում, հատկապես փոքր և ծայրամասային պետությունների դեպքում: Այս դիտանկյունից հնարավոր է ավելի կոնկրետ վերլուծել նաև Հայաստանի ընթացիկ քաղաքական զարգացումները:

Հայաստանի ներկա քաղաքական խոսույթում գերիշխող «ժողովրդավարական անցման», «բարեփոխումների» և «ինստիտուցիոնալ արդիականացման» հռետորաբանությունը հիմնականում դրսևորվում է ոչ միայն որպես ներքին քաղաքական օրակարգ, այլ որպես արտաքին լեգիտիմության ձևավորման հիմնական միջոց: Քաղաքական իշխանության արդյունավետությունը հաճախ չափվում է ոչ թե երկարաժամկետ ազգային զարգացման նախագծի առկայությամբ, այլ արտաքին դերակատարների գնահատականներով, վարկանիշներով և աջակցությամբ: Պետական կառավարման առաջնահերթությունները ձևավորվում են վարկային ծրագրերի պայմանականությունների, դոնորական օրակարգերի և «լավ կառավարման» միջազգային չափորոշիչների շրջանակում, ինչի արդյունքում քաղաքական հաշվետվողականությունն աստիճանաբար տեղափոխվում է հասարակությունից դեպի արտաքին ինստիտուցիոնալ միջավայր:

Այս գործընթացը կարելի է դիտարկել որպես կախվածության «փափուկ վերարտադրություն»՝ Գունդեր Ֆրանկի նկարագրած իմաստով, որտեղ ենթակայությունը չի դրսևորվում բաց ճնշման կամ ուղղակի միջամտության ձևով, այլ՝ նորմալացված կառավարման լեզվի միջոցով:

Ժողովրդավարությունը, խաղաղությունը, անվտանգությունը և ինքնության հարցերն այս համատեքստում ձեռք են բերում գործիքային բնույթ՝ կիրառվելով ոչ թե որպես ինքնուրույն քաղաքական արժեքներ, այլ որպես արտաքին միջավայրում ընդունելի լինելու և ֆինանսական ու քաղաքական աջակցություն ապահովելու միջոցներ:

Այս պայմաններում Հայաստանի գործող իշխանական վերնախավը կարելի է բնութագրել որպես մի քաղաքական շերտ, որը գործում է գլոբալացված կառավարման մոդելով՝ առաջնահերթություն տալով մակրոկայունությանը, վարկային քաղաքականությանը և ինստիտուցիոնալ համապատասխանությանը՝ հաճախ անտեսելով հասարակության ներսում ձևավորվող սոցիալական դիմադրությունը և ինքնիշխանության բովանդակային խնդիրները: Ինստիտուցիոնալ արդիականացումը ներկայացվում է որպես ինքնիշխանության գործառնական փոխարինիչ, իսկ միջազգային ճանաչելիությունը՝ որպես ներքին լեգիտիմության փոխհատուցում:

Այս մոտեցման շրջանակում ազգային շահը վերածվում է հարաբերական և բանակցելի կատեգորիայի, իսկ պետական ռազմավարությունը՝ կարճաժամկետ հարմարվողականության արդյունքի: Արտաքին կենտրոնների հետ հարաբերությունների կառավարումը գերակշռում է ինքնուրույն զարգացման նախագծի ձևավորմանը, ինչի հետևանքով քաղաքականությունը զրկվում է երկարաժամկետ հեռանկարից: Առանց տեխնոկրատական կախվածության այդ տրամաբանությունից դուրս գալու և ներքին սոցիալական փոխզիջման վրա հիմնված ազգային զարգացման ռազմավարություն ձևավորելու փորձի՝ կոմպրադոր մտածողությունը շարունակում է վերարտադրվել արդեն նոր, արդիականացված և ինստիտուցիոնալացված ձևերով:

Այսպիսով, կոմպրադորական բուրժուազիան պատմականորեն հանդես է գալիս որպես կայուն, սակայն գաղափարապես սնամեջ կառույց: Այն կարող է փոխել հռետորաբանությունը, ինստիտուցիոնալ ձևերը և դաշնակիցներին, սակայն ի վիճակի չէ ձևավորել ապագային միտված, ինքնուրույն ազգային ռազմավարական նախագիծ: Այն հասարակություններում, որտեղ նման մտածողությունը դառնում է իշխող, ինքնիշխանությունը հարաբերականացվում է, քաղաքականությունը զրկվում է երկարաժամկետ ռազմավարությունից, իսկ ճգնաժամերը ստանում են կառուցվածքային բնույթ: Այդ պատճառով կոմպրադորական բուրժուազիայի քննադատական վերլուծությունն այլևս միայն տեսական զբաղմունք չէ, այլ քաղաքական անհրաժեշտություն այն հասարակությունների համար, որոնք իրենց ապագան փորձում են կառուցել սեփական, այլ ոչ արտաքին օրակարգերի տրամաբանությամբ:

Մուրճ կամ զնդան
Ավետիք Իսահակյանի 150-ամյա հոբելյանի առիթով

Արերտ Մուշեղյան
Գրականագետ, հայագետ, բանասիրական գիտությունների դոկտոր

2025 թ. սեպտեմբերին զանգեց ընկերս՝ Արմեն Մուշեղյանը, և ասաց, թե Ավ. Իսահակյանի 150-ամյակի առիթով հայրիկը վարպետի ստեղծագործություններին նվիրված հոդված է գրել և ցանկանում է, որ այն հրապարակվի «Դրոշակում»: Արմենն ասաց, որ մնացել է հոդվածի ծանոթագրություններն ավելացնել, որից հետո այն կուղարկի ինձ: Մոտ մեկ ամիս անց ցավով տեղեկացանք, որ նշանավոր գիտնականն ավանդել է հոգին: Մեր օրերի լավագույն հայագետներից մեկի՝ Ալբերտ Մուշեղյանի երկու այլ հոդվածները մինչ այդ «Դրոշակում» հրապարակել էինք, ինչն առիթ էր դարձել, որ անձամբ ճանաչեմ այս զարմանալի մտավորականին ու մարդուն: Դժվար է պատկերացնելը, թե մարդուն տրված թերևս ամենաթանկ պարգևից՝ Աստծո լույսից, մանուկ հասակից զրկված մարդն ինչպես էր կարողացել ամբարել իր ներսում գիտելիքի այն հսկա պաշարը, որի շնորհիվ, օրինակ, կարող էր բարդ գիտական բանավեճերում հաղթանակած դուրս գալ բազմաթիվ աղբյուրներից վկայակոչված փաստարկների շնորհիվ, ինչպես և իր բեղուն գործունեության տարիներին ունեցած վաստակով կարևոր նպաստ բերել հայագիտության զարգացման գործին:

Անձնական ծանոթությունը զարմանքն ու ակնածանքը կրկնապատկեց, երբ տեսա, որ ողջ կյանքը ֆիզիկական խավարում ապրած 90-ն անց բանասերը ոչ թե պարզապես ճակատագրի հարվածից նեղսրտած, չարացած չէր, այլև մնացել էր անմիջական, պարզ, նուրբ հումորի զգացումով ու ներքին լույսով օժտված համակրելի մարդ և հաճելի զրուցակից: Եղել և մնացել էր անկաշառ և սկզբունքային գիտնական՝ իսկական հայ ու հայրենասեր: «Դրոշակի» խմբագրության անունից հրապարակվող այս կարճ խոսքը մեր հարգանքի և գնահատանքի համեստ տուրքն է գիտնականի ու մարդու հիշատակին, իսկ նրա գրած այս հավանաբար վերջին հոդվածի հրատարակումը մեծ մտավորականի մասին կասի ավելին, քան իմ աղքատիկ խոսքը: Ալբերտ Մուշեղյան մարդու և գրականագետի մասին են վկայում նաև ներանձնական բնույթի բանաստեղծական այն տողերը, որոնք մենք, այս պարագայում, հարմար նկատեցինք հրապարակել:

Արտաշես Շահբազյան

Ինչ որ ինձ տրվեց, շատ դժվար տրվեց,
Ես մաքառեցի առանց հոգնության,
Ու երբ որ անգամ հույսըս կտրվեց,
Իմ կամքը համառ եկավ օգնության:

Ապրեցի այսպես անհուն տենչանքով
Եվ միշտ ատեցի հոգով թշվառին.
Ու հեշտ ապրելուց ես ամեն ջանքով
Միշտ նախընտրեցի ճամփան դժվարի:

Իմաստությունը չեկավ ինձ այցի՝
Խոհեմ տեսակը խորամանկության.
Հոգուս թելերով կապված մնացի
Լուսե օրերին իմ վաղ մանկության:

Ալբերտ Մուշեղյան

1900-ական թվականների սկզբներին տեղի ունեցած իրադարձությունները նշանակալի հետ թողեցին Ավետիք Իսահակյանի պոեզիայի վրա: Այդ շրջանի նրա բանաստեղծություններն աչքի են ընկնում հատկապես սոցիալական հնչեղությամբ. բանաստեղծի սրտում ու երգերում հեծեծող համաշխարհային ռոմանտիկ վիշտը ձեռք է բերում նոր որակ ու բովանդակություն,- դա անհույս կարիքի ու զրկանքի մատնված մարդու և մարդկության տառապանքն է: Անձնական սիրո անլռելի տվայտումները ինչ-որ տեղ խլանում են այն ցավից, որ բանաստեղծի հոգում առաջ է բերում աղքատի կողոպտված հացն ու անիրավված քրտինքը: Ասենք, նրա սիրո մորմոքն էլ ինքնին զուրկ չէր սոցիալական երգերից: Հիշենք՝

Ավետիք Իսահակյան

Իսկ ես հոգնած եմ, անտո՛ւն ու մենա՛կ,
Մի աղքատ շրջիկ՝ ձեր պատերի տակ.
Ա՜խ, թե լինեի ես հարուստ տղա... (հ.1, էջ166):

1901 թ. Բեռլինում լույս տեսավ «Der Pilger» (գերմ.՝ «Թափառաշրջիկ» կամ «Ուխտավոր») խորագրով մի ժողովածու, որի երկրորդ հատորում «Ընտիր պատմվածքներ» վերտառությամբ տպագրված էր Մ. Գորկու՝ հեղափոխական ռոմանտիզմի շնչով տոգորված «Մրրկահավի երգը»՝ Ա. Շոլցի թարգմանությամբ («Der Sturmvogel»): Նույն թվականին շրջագայելով արտասահմանում՝ Իսահակյանը գերմաներեն հրատարակությունից հայերեն, ավելի ճիշտ՝ արևմտահայերեն թարգմանեց «Մրրկահավի երգը», որը բանաստեղծության բազմաթիվ հայերեն թարգմանությունների շարքում առաջին փորձն էր: Այն լույս տեսավ 1901 թ. օգոստոսին Ժնևում «Մրրկահավ» վերնագրով: Թարգմանության հանգամանքների մասին Վարպետը պատմել է գրականագետ Գուրգեն Հովնանին, առանց, սակայն, նշելու գերմաներեն աղբյուրը (տես Գ. Հովնան, Ավ. Իսահակյան, Ե., 1976, էջ 27-32):

Արձագանքելով ալեկոծվող իրականությանը, Իսահակյանի գրիչը կյանք է տալիս մի շարք շառաչուն բանաստեղծությունների. հեղափոխական-ազատագրական մոտիվներով 1905–07 թթ. հյուսում է «Արծվամանուկ», «Հին ամրոցը», «Լեռների հսկան» զրույց-լեգենդները:

«Արծվամանուկ» լեգենդում, որն Իսահակյանը ձոնել է իր լայպցիգյան շրջանի ուսանող ընկերներից մեկին՝ բանաստեղծ և բժիշկ Լևոն Աթաբեկյանին, նա ուղղակի դասակարգային կռվի կոչ է անում ճնշված ամբոխին:

Միաժամանակ նա հանգում է այն մտքին, թե միայն պայքարի սրով չի կարելի սոցիալական չարիքի ծառը կտրել. բանաստեղծի համոզմամբ կարճ ժամանակ անց հարուստների ու հարստահարվողների դասերը կարող են վերստին ասպարեզ գալ, քանի որ չարիքի արմատներն ապրում են մարդկանց հոգիներում: Ուստի միմիայն գիտակցության և գիտության «լուսավառ ճրագով» է, որ հնարավոր է խլել չարի արմատները խավար հոգիներից:

Իսահակյանը հեղափոխական պայքարի պոեզիա էր բերում մինչ այդ անհայտ բանաստեղծական չմարող պատկերներ: Նրա արծվային հերոսն ամեն անգամ, պայքարի և ցասման պահերին, իր հոգում լսում է «**կայծակնափայլ լեռնագագաթների որոտմունքը և շառաչումը ազատասեր արծվի թևերի**» (հ. 3, էջ 108): Այդպես է և ինքը՝ բանաստեղծը, որի սիրտը հափշտակել է սրարշավ արծիվն ու նետել ժայռերի բարձունքին, և նույն արծվային թևաբախումը չթուլացող ուժով կրկնվում է հայտնի բանաստեղծության մեջ.

Եվ նետեց սիրտըս վառ լազուրի մեջ,
Խրոխտ բարձունքին հզոր լեռների,
Եվ շուրջս այն օրից լրսում եմ անշեջ՝
Շառաչումները արծվի թևերի...[1]

Ընչազուրկի ճակատագիրը խորապես տանջում է մարգարե-պոետին, և այս դեպքում ցնցոտին նրա բանաստեղծական տողում շնչավորվում ու դառնում է ամբոխի դիմավոր խորհրդանիշը («Եվ ձեզ ասում եմ՝ ո՛վ դու ցնցոտի»), որին դարձյալ հաջորդում է զուտ իսահակյանական եզակի պատկերը, երբ ապստամբի ծառացող բազուկը համեմատվում է անապատում պոչի վրա ծառս եղած ոխակալ օձի հետ:

Հեղափոխական տարերքի մեջ անգամ Իսահակյանը մնում է մարգարե և իր տիեզերահաղորդ ոգու ընդվզումն արտահայտում բնության հզոր տարերքի սիմվոլներով.

- Բացե՛ք դարպասներն ձեր պալատների.
Ոգու հարության լույսն եմ ձեզ բերում.
Ես փոթորիկն եմ անապատների
Եվ օձ-կայծակը մոայլ ամպերում:[2]

Այսպիսի **դառն, դաժան** օրերում բանաստեղծ մարգարեն դեպի վեհն ու գեղեցիկը ձգտող իր ոգին ընծա է բերում ժողովրդի տառապանքին և հավատում, որ այդ **ազնիվ գործի** համար մաքառողին ժողովուրդը վարձահատույց կլինի մի օր, և դա լինելու է վեհի ու գեղեցիկի հաղթանակը.

Ազնի՛վ, սուրբ գործը չի՛ մեռնում երբեք.
Ճշմարիտն է ուժ, անկեղծն է հզոր,
Եվ ժողովրդի ցավերի համար
Տոչորուն ոգին ամբոխից մի օր
Կը գնահատվի, գիտեմ, անպատճառ:[3]

Ամբողջ սրտով բանաստեղծն արհամարհում է ստոր գաճաճի, լկտի նենգավորի բանսարկությունը, որը վեհ գաղափարի անունից ասպարեզ ելած՝ խաբում է թշվառ ամբոխին. նա բաց ճակատով է ընդունում նահատակի տատասկյա պսակը: Այլաբանական երազի ձևով Իսահակյանն իր ըմբոստ հերոսին պատկերում է կախաղանի վրա, և այստեղ դարձյալ մահվան բարձունքից մեզ է նայում **մուրճով փիլիսոփայող մարգարեն,** - (Եթե

գործածենք նախանցյալ դարավերջին Գերմանիայում տարածված արտահայտությունը), որը նահատակություն է ընդունում ամբոխի տառապանքի համար, իսկ ամբոխը մահապարտի ճակատագրին անտարբեր, սողում է նրա ոտքերի տակ.

Եվ խոսքըս մուրճն էր, և խոսքըս՝ հրդեհ,
Ես փշրում էի սրրտերը մարդկանց.
Եվ խոսքըս մուրճն էր, և խոսքըս՝ հրդեհ,
Եվ այրում էի սրրտերը մարդկանց. (հ. Է, էջ 157):

Բայց միօրինակ, հախուռն ու հոխորտ ոգևորությունը երբեք հատուկ չի եղել Իսահակյան բանաստեղծին: Բազմահույզ է նրա քնարական զեղումների ու շեղումների աշխարհը: Նրա երգերը ծնունդ են առնում ալեկոծ հոգուց, որ խռովահույզ տարուբերվում է մռայլ իրականության և սեփական շռայլ երազանքների միջև: Կյանքը՝ լի սոցիալական հակասություններով, հարուցանում էր տարամերժ մտքեր ու միտումներ: Ցարական սատրապների ձեռքով հրահրվող ազգամիջյան ընդհարումներն ու ջարդերը, փոխադարձ ատելությունն ու սարսափը խճողում էին հասարակական ներհակ ուժերի պայքարը: Այս ամենը զգայուն բանաստեղծին պատճառում են սոսկում ու նողկանք:

Ինքը՝ Իսահակյանը, 1905–07 թթ. մասնակցել է ցարիզմի դեմ ուղղված գաղտնի խորհրդակցությունների և ենթարկվել ցարական պահնորդության հետապնդման և լրտեսման, և, այդուամենայնիվ, սոցիալական հակընդդեմ խավերի պայքարը երբեմն նրան ներկայանում էր իբրև գոյամարտ, կենսաբանական գոյության կռիվ, ամենքի կռիվն ընդդեմ ամենքի:

Եվ բանաստեղծը, որ սուր էր դնում ըմբոստի քարացած բռունցքը, հանկարծ իր ձեռքից վայր է նետում այդ սուրը, որովհետև չի ցանկանում աղքատի բերանից խլել նրա արնոտ հացի պատառը.

Կյանքի կռվում ամենքը դեմ ամենքին՝
Սուր են սրրում ամենքը դեմ ամենքին:
Սուրն իմ ձեռքից՝ կռվի հանած ընկավ վար,
Ես չեմ կարող մտնել պայքար անարդար-
Խլել բերնից արնոտ հացը աղքատի,
Վառ քրտինքը ծրծել տանջված ճակատի…
(հ. 1, էջ 206):

Բանաստեղծությունը, որ սկզբնապես հենց այդպես էլ վերնագրված է եղել՝ «**Գոյության Կռիվ**», [4] նկատելի ձայնակցում է շոպենհաուերյան այն դրույթին, ըստ որի, համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցող հասարակական պայքարն անհատների կռիվն է բարձրագույն աստիճանի հասած էգոիզմի հետևանքով: Այն Շոպենհաուերն անվանում էր «**Bellum omnium contra omnes**»:[5] «Բայց ամենից բացահայտ, – գրել է Շոպենհաուերը, – դա դրսևորվում է, հենց որ մարդկանց որևէ բազմություն հրաժարվում է ամենայն օրենքից ու կարգից: Այստեղ իսկույն ևեթ ամենացայտուն կերպով ի հայտ է գալիս «**Bellum omnium contra omnes**»-ը, որ Հոբսը հիանալի պատկերել է «**De cive**»-ի[6] առաջին գլխում: Պարզվում է, որ ոչ միայն ամեն ոք ջանում է խլել մյուսի ձեռքից, ինչ որ ինքն է ուզում ունենալ, այլ նույնիսկ հաճախ ինչ-որ մեկը, իր բարօրությունն աննշան չափով բարձրացնելու համար, խորտակում է ուրիշի երջանկությունը կամ կյանքը»:[7]

Կյանքը, որպես գոյամարտ, որպես «**ամենքի կռիվ ամենքի դեմ**» Իսահակյանը պատկերել է նաև ավելի վաղ գրած մեկ այլ բանաստեղծության մեջ.

…Կյանքի գոռ կռիվ՝ կատաղի, դժնյա,
Ուր որ ամենքը ամենքի ընդդեմ
Դաշույն են սրում սիրո փոխարեն…[8]

Ճիշտ նույն կերպ է երևում բանաստեղծին բուրժուական այդ իրականությունը նաև ուշ տարիների մի հետադարձ ակնարկում՝ «անագորույն կռիվ՝ ամենքը ամենքի դեմ, ամենուրեք ոճիրներ, եղեռներ, նախճիրներ…» (հ. 5, էջ 186), և նա կրծքով ու կրքով ըմբոստանում է գոյության կռվի դաժան ալիքների դեմ, «որ այնպես զորեղ են աղքատներին փշրելու, որ այնպես գռեհիկ են դեպի մեծություններն ու գեղեցկությունները», – հետևանքը՝ սոցիալական տառապանք և բարոյական նվաստացում հավասարապես:

1908 թ. Բանաստեղծը թղթին է հանձնում էքսպրոմտի պես սեղմ ու թանձրացական իր հրաժարիմքը՝ «Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին», որ ասես «Աբու-Լալա Մահարի» լայնաշունչ քերթվածի հղացման չափածո ազդը եղավ:

Հայ գրաքննադատության մեջ քանիցս անհարկի փորձեր են արվել Իսահակյանի պոեզիան խնամքով ապահովագրելու օտար գրական և փիլիսոփայական ուղղությունների ազդեցությունից՝ հատկապես 1950-ական թվերի սկզբին մեզանում լայն տարածում գտած գաղափարաբանական վեճերի շրջանում: Ոմանք էլ, հակառակ դրան, պնդում էին, թե Իսահակյանի պոեզիայում որոշ անհատապաշտական շեշտեր արդյունք են եվրոպական գրական ազդեցության: Այդ երկու տեսակետի նպատակն էր մեծ բանաստեղծի ստեղծագործությունը տեսնել անխառն, զերծ պահել այն անհատապաշտությանը և ուղղափառ մտայնությանն անհարիր այլ «մահացու մեղքերից»:

Եվրոպական գրականության ականավոր գիտակ Ալեքսանդր Դեյչը 1944 թ., բողոքելով Իսահակյանի երկերի ռուսերեն հրատարակվելիք ժողովածուից «Աբու–Լալա Մահարի» պոեմը հանելու դեմ,[9] մատնանշում էր. «Պետք չէ, որ քննադատները պոեզիայի այդպիսի հսկային ինչ-որ «իզմեր» վերագրեն: Ավետիք Իսահակյանը ինքնատիպ բանաստեղծ է և չի տեղավորվում որևէ շրջանակում»:[10] Իրողությունն այն է, որ Իսահակյանը, ավելի քան հայ գրականության մեծերից որևէ մեկը, եղել է շարունակ գրական-փիլիսոփայական որոնումների մեջ: Շնորհիվ համաշխարհային մշակույթի գեղարվեստական յուրացման, բանաստեղծությունից մինչև ճարտարվեստ, նրա ստեղծագործությունը դարձավ հայ գրականության պատմության մեջ աննախադեպ երևույթ: Նրա կրած ու հաղթահարած ազդեցությունները, արևմուտքի և արևելքի բազմազգ գրականությունների խոր իմացությունն այն հորդ ակունքն էին, որ հարստացնելով հանդերձ, չեն սասանել այդ վիթխարի բանաստեղծական անհատականությունը: Խոսելով ինքնատիպության և գրական ազդեցության մասին,

ծերունի Գյոթեն խորին հանգստությամբ և արժանապատվությամբ խոստովանել է, որ եթե հնարավոր լիներ թվարկել այն ամենը, ինչով որ ինքը պարտական է իր մեծ նախորդներին ու ժամանակակիցներին, ապա իրենից շատ քիչ բան կմնար: Գյոթեն սրտանց դժգոհում էր իր այն կենսագիրներից, որոնք լռության էին մատնում երիտասարդ տարիներին Վոլտերից ու նրա մեծ ժամանակակիցներից իր կրած ազդեցությունը և դրանով իսկ անտեսում այն ջանքերը, որ ինքը գործադրել էր այդ ազդեցությունը հաղթահարելու և սեփական ինքնությունը հաստատելու համար:

Ինքը՝ Իսահակյանը, խոստովանել է, որ կյանքի չարալլկող հարցերի պատասխանը փնտրելու համար հաճախ ստիպված է եղել թափառել ուսմունքից-ուսմունք, կոնցեպցիայից-կոնցեպցիա. «Ես սկսեցի որոնել ճշմարտությունը, որոնել փրկությունը մեծ փիլիսոփաների, մեծ գիտնականների, մեծ մարգարեների մոտ և իմ սրտի մեջ» (հ. 5, էջ 186):

Տվյալ դեպքում Շոպենհաուերի հետ նշմարվող ընդհանրությունը համոզիչ ցույց է տալիս, որ իրականությունից խորապես հիասթափված և նրա դեմ ընդվզող բանաստեղծը բուրժուական հասարակության ահավոր քաոսի արմատը, սեփական խորաթափանց կռահումներից զատ, ջանացել է որոնել նաև շոպենհաուերյան բացարձակ էգոիզմի փիլիսոփայության մեջ: Դա վկայում է նաև Իսահակյան բանաստեղծի լայն մտահորիզոնի փիլիսոփայական ընդգրկման մասին:

Հեղափոխական ու ազատասիրական մոտիվների հետ մեկտեղ Իսահակյանին հուզել է մարդկանց ու ազգերի եղբայրության գաղափարը: Երկու բանաստեղծություն հատկապես բնորոշ ու արժեքավոր են այդ առումով՝ «Ես մի նոր զանգ եմ» և «Ազատության զանգ»: Առաջինը գրվել է 1899 թ. օգոստոսին և առաջին անգամ տպագրվել միայն սովետական շրջանում՝ 1941 թ.՝ դոց. Իվան Բեգլարյանի ձեռքով հանվելով Վրաստանի կենտրոնական արխիվից:[11]

Բանաստեղծն իրեն ազդարարում է տիեզերքի անհունից հնչող մի նոր զանգ, որ ամբոխի վրա կախված նոր ու խոր երգեր է ղողանջում:

1905 թ. ցարական կառավարությունն Անդրկովկասում հրահրում է հայ-թուրքական ազգամիջյան ջարդեր՝ հեղափոխական պրոլետարիատի վերելքը կասեցնելու և ազգային-ազատագրական պայքարը ջլատելու համար: Արյունալի մղձավանջի լուրն արագ տարածվում է Ռուսաստանով մեկ և արտասահմանում: Մամուլում երևում են լուրեր, որ ֆրանսիացի գրողների մի խումբ, Անատոլ Ֆրանսի գլխավորությամբ, շտապում է Անդրկովկաս և Հայաստան՝ արյունալի դեպքերի հանգամանքներին տեղում վերահասու լինելու համար: Նույն օրերին հրապարակագիր և թարգմանիչ Իսահակ Հարությունյանը, նկարագրելով Երևանում տեղի ունեցած ազգամիջյան ընդհարումները, այն միտքն էր հայտնում, թե ազգերի պառակտման մեծապետական ճիգերը նպատակին չէին հասնի, եթե չլինեին հասարակ ամբոխի մեջ տիրող խավարն ու տգիտությունը և, օգտագործելով մեծն Գյոթեի վերջին խոսքերը, բացականչում է գերմաներեն.

«Mehr licht!- Լո՛ւյս, ավելի լույս է»:[12]

Իսահակյանը, որ Թումանյանի նման ամեն ջանք գործ էր դնում ազգասպան ընդհարումների առաջն առնելու, ակնհայտ տեսնում էր, թե ինչ գին ուներ մարդկանց և ազգերի եղբայրության գաղափարը մի հասարակարգում, ուր ամենքը հոշոտում են իրար, ուր սոցիալական ճնշումը հասցնում է ազգային աղետի. ինչ արժեք ուներ եղբայրության և սիրո քարոզն այն հասարակության մեջ, որն ապրում էր «մարդը մարդուն գայլ է» հին հռոմեական սկզբունքով:

Այս անցքերի ֆոնի վրա առավել քան պարզ է դառնում «Կյանքի կռվում ամենքը դեմ ամենքին» բանաստեղծության սոցիալական շեշտը: Ուշագրավ է, որ նույն՝ 1905 թվականին, դրան հաջորդեց «Եղբայրության կամ թե սիրո» բանաստեղծությունը, որը, լինելով իր նախորդ բանաստեղծության տրամաբանական շարունակությունը, ավելի ցայտուն է արտահայտում կապիտալի հասարակության մեջ տիրող հակամարտ շահերն ու բևեռացումը.

Եղբայրության կամ թե սիրո
Խոսքը ես ձեզ չեմ ավետում,-
Պատգամները չարի, բարվո
Ձեր ոտների տակն եմ նետում:

Կյանքն է պայքա՛ր՝ գոռ ու դաժան,
Ճզմի՛ր մարդուն և թռի՛ր վեր.
Իրավունքը ուժն է միայն,
Վա՛յ հաղթվածին, հազա՛ր վայեր:

Տեր կամ ըստրուկ պիտի լինիս,-
Ճշմարտություն չըկա ուրիշ:
Ձես սպանի, քեզ կսպանեն,
Դու սպանի՛ր, քեզ չսպանեն:
Լուծ կամ լծկան պիտի լինիս,-
Ճշմարտություն չըկա ուրիշ:

Անիծվիս մա՛րդ, որ հույսդ է մարդ.
Բախտըդ կռվով կռի՛ր ինքդ,
Մո՛ւրճ կամ զնդա՛ն պիտի լինիս,-
Ճշմարտություն չըկա ուրիշ (հ. 1, էջ 211):

Առաջին անգամ չէ, որ մուրճն ու զնդանը, կռանն ու սալը բանաստեղծական կերպավորման առարկա են դառնում հայ պոեզիայում: Հիշենք Հովհաննես Հովհաննիսյանի «Արտավազդ» հայտնի ոտանավորը, որի մեջ կռանն ու սալը չարի շղթաներն ամրացնող, սոցիալական չարիքը խափանող խորհրդանիշ են.

Ջարկեցե՛ք, դարբիններ, կըռանը սալին,
Ջարկեցե՛ք կըռանը - շղթայքն ամրանան,
Անիծյալ արքայի կապանքն ամրանան.
Ջարկեցե՛ք, դարբիններ, կըռանը սալին:
.....
Եվ անզոր չարության քո կուռ հարվածներ
Դեռ պիտի փշրվին մեր մուրճի տակին,-
Մենք սպասում ենք դեռևս գեղեցիկ օրեր,
Դեռ հաշտ է երկինքը մեղսոտ աշխարհին:

Երկու դեպքում էլ՝ աշխատանքի այդ հնավանդ գործիքները ծառայում են սոցիալական խոր բովան-

դակություն վերարտադրելու համար: Միայն թե Հովհաննես Հովհաննիսյանի մոտ կռանն ու սալը դիտվում են միասնաբար, որպես մեկ ամբողջական խորհրդանիշ, մինչդեռ Իսահակյանի մոտ դրանք դիֆերենցված են՝ իբրև հակոտնյաներ, հասարակության հակադիր խավեր-տիրապետող ուժը և հնազանդվող զանգվածը:

«Եղբայրության կամ թե սիրո» բանաստեղծությունը որոշակի հիշեցնում է Գյոթեի «Կոփտական երգը», որի վերջին տողը՝ «Մուրճ կամ զնդան պիտի լինես», Իսահակյանը նույնությամբ փոխառել է իր բանաստեղծության մեջ:

1787 թ. այցելելով Իտալիա՝ Գյոթեն ծանոթանում է իտալացի աճպարար ու ոսկի խարդախող Ջուզեպպե Բալզամոյի (Կալիոստրո) արկածներին, որը նույն այդ թվին Պապի կողմից բանադրվեց ու բանտ նետվեց, և այդ թեմայով մտահղանում է «Մեծ Կափտա»[13] կատակերգությունը: Խրատաբանական բնույթի նրա բանաստեղծությունների շարքում հայտնի են «Կոփտական երգ» վերնագրով երկու բանաստեղծություն, որոնք բանաստեղծը գրել էր հիշյալ պիեսում օգտագործելու մտադրությամբ:

Դրանցից մեկն է հետևյալը.

ԿՈՓՏԱԿԱՆ ԵՐԳ

Եկ, ականջ դիր դու խորհրդիս-
Ջահել օրըդ թանկ է, որդիս,
Տքնիր, որ շուտ խելոքանաս,
Քանզի բախտի նժարը մեր
Տատանվում է միշտ վար ու վեր՝
Դու պիտի իջնես կամ բարձրանաս,
Պիտի իշխես ու նվաճես
Կամ ծառայես ու նահանջես,
Պարտվես և կամ հաղթող ելնես,
Մո՛ւրճ կամ զնդան պիտի լինես:[14]

38-ամյա Գյոթեն ի մի է բերում իր ապրած տարիների կենսափորձը և նոր սերնդի պատանուն խրատում զգուշանալ երիտասարդ տարիներն անպտուղ վատնելուց, քանի որ **բախտի մեծ կշեռքը** քմահաճորեն է տնօրինում մարդու ճակատագիրը: Կյանքում նրան սպասում է վայրէջք կամ վերելք, զրկանք կամ վայելք: Միայն ուսման և սեփական խելքի շնորհիվ է, որ մարդը կարող է հասնել ինքնատիրապետման և տնօրինել իր դիրքն ու դերը կյանքում: Դա այն ճանապարհն է, որով Գյոթեն առաջնորդում է իր այդ տարիների գլխավոր վիպական հերոսին՝ Վիլհելմ Մայստերին. դա այն ուղին էր, որով անցել էր և ինքը՝ բանաստեղծը:

«Մուրճ կամ զնդան» փոխաբերության մեջ, որ եզրափակում է այս փոքրիկ գլուխգործոցը, բանաստեղծը դրել է հասարակական ծավալուն իմաստ, - իշխելու և հնազանդելու, տիրոջ և ծառայի հակադրությունը:

Ինչպես երևում է «Վենետիկյան էպիգրամներից», Գյոթեն հետևյալ կերպ է մեկնում այդ փոխաբերությունը.

Այդ զնդանին ես նմանեցնում եմ երկիրը,
մուրճը՝ տիրակալին
Եվ թիթեղը ժողովրդին, որ տքնում է
նրանց արանքում:

Գյոթե

Վա՜յ խեղճ թիթեղին, երբ հարվածները
լոկ քմահաճ
Իջնում են ապարդյուն, իսկ կաթսան մնում է
միշտ անավարտ:[15]

Ուրեմն, ժողովուրդը տառապում է տիրակալի քմահաճ հարվածի տակ,- այս է բանաստեղծի կողմից իր ժամանակի ֆեոդալական տիրող իրականության դեմոկրատական ընկալումը: Մարդ անհատի սոցիալական կեցության երկվության մեջ արտացոլվում էր հասարակական հարաբերությունների ներհակ բնույթը, և Գյոթեի համոզմամբ՝ մարդուց է կախված՝ լինել հարվածող մուրճ, թե՞ ծեծվող զնդան:

Գյոթեի այս բանաստեղծությանը վիճարկված էր նշանակալից դեր խաղալ գերմանական սոցիալիստական շարժման մեջ և հակաֆաշիստական պայքարում: Գյոթեի արտահայտությունը դարձել է թևավոր խոսք և վաղուց դուրս է եկել գերմանական գրականության սահմաններից: Մաքսիմ Գորկու հայտնի ասույթը, թե ցարիզմի օրոք մտավորականությունը տառապում է **մուրճի ու սալի (զնդանի) արանքում**, - Գյոթեի խոսքի մեկ այլ բառադարձումն է:

Ավ. Իսահակյանն առաջիններից մեկն էր, որ դեռևս ներկա դարագլխին թափանցեց Գյոթեի բանաստեղծության սոցիալական խորքը: Վարպետի ձեռագրերի ֆոնդում գտնում ենք Կոփտական երգի» («Koptisches Lied») գերմաներեն տեքստը՝ արտագրված նրա ձեռքով:[16] Դա մի անգամ ևս վկայում է Գյոթեի բանաստեղծության նկատմամբ նրա ունեցած հատուկ ուշադրության մասին:

«Եղբայրության կամ թե սիրո» բանաստեղծությունը լույս տեսավ «Մուրճ» ամսագրի 1905 թ. 11-12 միացյալ համարներում:

Դեռևս 1900 թ. դեկտեմբերի 16-ին, գտնվելով Ցյուրիխում, 25-ամյա Իսահակյանը հուշատետրում գրի է առել խոհեր, որոնք զգալի չափով նախապատրաստել են հիշյալ բանաստեղծության մտահղացումը. «Ես զարկված եմ. հասարակության, կյանքի, օրենքների, պայմանների հսկայական մուրճերի տակ զարկված եմ»,- ասում է բանաստեղծը, - «այդ բոլորի հետ միասին այդ տիտանական ծանր հարվածների, ճնշումների տակ ես բյուրեղացել եմ, ինչպես ադամանդը բյուրեղանում է քարածուխի հսկայական լեռների ծանրության և ճնշման տակ»:[17]

Տիրապետող հասարակության կարգն ու օրենքն իբրև հարվածող մուրճ-այս պատկերը ստեղծագործական հասունացման երկար պրոցես է անցել, մինչև որ, տարիներ հետո վրա է հասնում իրականության ճնշման այն կուլմինացիոն պահը, երբ բանաստեղծական պատկերը չափ ու ձև է ստանում և դուրս է պոռթկում տառապած հոգուց: Ըմբոստ բանաստեղծությունը ծնվում էր ինչպես հեղափոխությունը՝ բռնադատող հասարակության հարվածների տակ:

Բանաստեղծության մեջ, հանգերգի նման իբրև պեսպիսություն կրկնված է միևնույն ներհակ գաղափարը «**Տեր կամ ստրուկ պիտի լինիս**», «**Լուծ կամ լծկան պիտի լինիս**», «**Մո՛ւրճ կամ զնդա՛ն պիտի լինես**», որին հետևում է բանաստեղծի անփոփոխ, միակ գտնված եզրահանգումը՝ «**Ճշմարտություն չկա ուրիշ**»: Այդ միակ ճշմարտության իսկական իմաստը, սակայն, այն է, թե չի կարող լինել որևէ ճշմարտություն մի հասարակարգում, որտեղ իշխում է տիրոջ և ստրուկի օրենքը,- ինչպես և տարիներ անց (1917 թ.), գրել է Հովհաննես Թումանյանը.

Սուտ էր: Ու միշտ քանի որ կա
Շահ ու գերի, ստրուկ ու տեր,
Չի լինելու երկրի վրրա
Ոչ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր...

Ձայնակցելով գերմանացի վարպետին՝ երեսնամյա հայ բանաստեղծը ցույց է տալիս, որ XX դարագլխի բուրժուական իրականության մեջ «**մուրճ կամ զնդան**», «**տեր կամ ստրուկ**» դիլեման նույնքան և ավելի ճակատագրական էր, որքան դրանից 120 տարի առաջ՝ Գյոթեին ժամանակակից ֆեոդալական-դասային իրավակարգում:

Իսահակյանին սրտամոտ են «Կոփտական երգի» հեղինակի խորհրդածումները բախտի մեծ կշեռքի վրա իջնող ու բարձրացող մարդու մասին, որի հասարակական ամպլուան պարփակված է սոցիալական կեցության երկու ծայրակետերի միջև - իշխել կամ ծառայել, նվաճել կամ նահանջել, հաղթանակել կամ պարտվել, մի խոսքով՝ մուրճ կամ զնդան լինել: Ամբողջ ստեղծագործության մեջ Իսահակյանը կարծես խոովահույզ տուր և առի մեջ է գերմանացի իմաստունի հետ, բայց նա ոչ միայն հավաստում է նոր սերնդի անփոխարինելի պատանուն ուղղված հանդարտորեն խոհուն Գյոթեի խրատների իսկությունը, այլ հրեղեն խոսքով բերում է իր պատգամները՝ ուղղված իր ժամանակի տառապած մարդուն, և նրա խոսքը ճչում է ոչ իբրև խրատ, այլ որպես կատեգորիկ իմպերատիվ:

Իսահակյանի բարոյական դիմանկարը մեծապես արդյունք է նրա հասարակական կեցվածքի - գոյության անարդար կռվից խույս տվող մարգարեն մնում էր դարձյալ անհաշտ թշնամի այն ստրկահաճության, որ հաճախ երևան է գալիս պայքարի միջոցին և սիրում է հասարակաց ճանաչման հասնել այլոց անձնազոհության հաշվին և անսկզբունք հաշտության գնով:

Իսահակյանը հավասարապես ձաղկում էր անհատի քծնանքը և «սողացող ամբոխի» հնազանդությունը. Գյոթեի նման նա ևս քարոզում էր ժողովրդին՝ կռվով նվաճել իշխելու իրավունքը. ***«Վա՜յ ձեզ, ժողովուրդ, հիմա՛ր և ստրուկ. հազար անգամ վա՜յ, որ դուք չեք զգում, չեք իմանում ձեր ստոր վիճակը... Եվ ձեզ ազատության խոսք եմ շեփորում. հառա՛ջ, դեպի ազատամարտ, գնա՛նք, խլե՛նք մեր ապրելու իրավունքը, մեր իշխելու իրավունքը, մեր ազատությունը խլենք. կորչի՛ Թագավորը, կեցցե՛ ժողովուրդը...»*** **(Հ. 3, էջ 112):** Ինքնակալության, այդ «Հին ամրոցի» դեմ ուղղված այս կոչերը նախատեսված չէին ապահով ապագայի համար, այլ Իսահակյանի ստորագրությամբ տպագրվել էին Թիֆլիսի «Ալիք» օրաթերթում 1906 թ. հունիսի 13-ին: Այսպիսով, Իսահակյանն ինքն ասերկբայորեն մուրճ էր հռչակում իրեն:

Պատահական զուգադիպությունն պետք է համարել արդյոք, որ 1909-10 թթ., երբ հեղափոխական շարժումներին մասնակցելու համար, Իսահակյանը կրկին հետապնդվում էր ցարական գաղտնի գործակալության կողմից, Թիֆլիսի պահնորդական բաժանմունքի լրտեսական «հույժ գաղտնի» զեկույցներում նրան կոչում էին «МОЛОТ» (մուրճ) մականունով:[18]

Ամեն մեծ բանաստեղծ իր հոգևոր կտակն ունի, որ ավանդում է նոր կյանք մտնող սերնդին: Գյոթեի «Կոփտական երգի» հետ մեկտեղ իբրև լավագույններից մեկը թող որ հիշվի այստեղ անգլիացի բանաստեղծ Քիփլինգի «Եթե...» բանաստեղծությունը, ուր հեղինակը հայրական հորդորով ուսուցանում է որդուն մարդ դառնալու գաղտնիքը. ասում են, թե ժամանակի երիտասարդությունն աղոթքի նման անգիր էր անում այդ բանաստեղծությունը:

Այդպես է բանաստեղծը. նվիրական խոսքը սերմի պես նետում է նա մատաղ հոգու մեջ՝ դեռևս հուսալով, որ բարու և ճշմարտի ընձյուղները պիտի զորավիգ լինեն նորեկ մարդուն՝ դիմադարձելու չար աշխարհի ժանտահոտին: Հենց այդպես էլ գրել է հուշատետրում Իսահակյանը 1900 թ. դեկտեմբերին, ասես իբրև նախաբան իր ապագա բանաստեղծական կտակի. «Սուրբ մանկիկ, սիրտդ բաց, ես գցեմ ճշմարտի սերմը այնտեղ... Քու սիրտն է միակ բերրի հողը... Տո՛ւր սիրտդ ինձ... »:[19]

Որքա՜ն էլ ցասումով է Իսահակյանը ոտքի տակ նետում **չարի և բարվո** պատգամները, բայց ընթերցողը հավատալով նրա արդար ցասումին, չի հավատում, սակայն, թե հումանիստ բանաստեղծը կարող է դրժել **եղբայրության և սիրո** իր դավանած նվիրական իդեալները:

Քննարկվող բանաստեղծությունից 13 տարի անց՝ 1918-ին, արդեն Եվրոպայում (Ժնևում) իբրև վտարանդի ապրող Իսահակյանը գրեց իր նշանա-

վոր «**Կտակը**»: Տարիների հոգեմաշ ոգորումներից կարծես հոգնած, բովանդակ մարդկության վշտով իմաստնացած Վարպետը դարձյալ պատգամում է աշխարհ եկող մանկանը բարու և ճշմարտի պատվիրանը: Իմաստունի երկայնմտությամբ, թեև ոչ խաղաղված հոգով, նա վերստին կշռում է բախտի ու կամքի, զգացմունքի ու խելքի, բարության ու բարոյական կեցվածքի հարցեր: Այստեղ մեր առջև այլևս **բախտի մեծ կշեռքին** վերիվայրող գյոթեական անհատը չէ:- «Տքնի՛ր, որ շուտ խելոքանաս»,- կյանք մտնող պատանուն խրատում է **բանականության** բանաստեղծ Գյոթեն:

Զգացմունքն է գերիշխանը,
Խելքը՝ նրա լոկ ծառան,-

պատասխանում է նրան **զգացմունքի** բանաստեղծ Իսահակյանը:

«Պիտի իշխես կամ ծառայես»,- ահա Գյոթեի համար մարդկային հարաբերությունների միակ երկընտրանքը, բայց հայ բանաստեղծն այդ հարաբերությունները սոցիալական սանդուղքից բարձրացնում է բարոյական նորմերի հարթության վրա՝

Ատելու չափ սիրի՛ր մարդկանց,
Բայց լավություն միշտ արա:

«Պիտի պարտվես կամ հաղթես», - շարունակում է գերմանացի իմաստունը: Բայց հաշտված սրտով Իսահակյանը առարկում է նրան.

Խաղերով լի այս աշխարհում
խաղդ եթե տանուլ տաս,
Զվարթ եղի՛ր, ու այդպիսով
բախտի վրա կընկնդաս:

Բանաստեղծի համար չկա այլևս «մուրճ կամ զնդան» լինելու երկընտրանքը, որ հնչում էր որպես համլետյան «լինել, թե՞ չլինել». այժմ արդեն միայն մարդու կամքն է **բախտի կոանը**, թեև կյանքը լի է խաղերով ու դիպվածներով: Ուստի լինել-չլինելու մտալլկող հարցին նա մի ուրիշ, կտրուկ պատասխան ունի՝ «**Ինչ որ լինի՛, թող լինի**», որը թեև ինչ-որ չափով թելադրված է անխուսափելիի հանդեպ ունեցած ֆատալ օպտիմիզմով, բայց գոնե չի ջլատում հոգեկան ուժերն ու դատապարտում ապարդյուն ինքնակեղեքման: Անհայտ ճակատագրի առաջ նահանջելը պարտության գին ունի, ուստի՝

Անվախ ու վեհ ղեկդ վարե անծանոթին դեմ-դեմի
Անզոջալի առաջ գնա՛, ինչ որ լինի՛, թող լինի:

Եվ վերջապես, ճշմարիտն այն է, որ գրաքննությունն իր խնդիրը դյուրացնելու համար բանաստեղծին ճգնում է դնել այս կամ այն գրական սիստեմի մեջ, բայց ո՞ւմ է հայտնի, թե դեպի ուր են տանում պոետական քմահաճ հոգու ոլորանները և էլի ինչ անակնկալ շրջադարձի առաջ չի կանգնեցնելու նրա արդեն պատրաստ թվացող բանաձևումները:

Մենք տեսանք, թե որքան բարձր գնահատանքի է արժանացել Գյոթեի «Կոփտական երգը» գերմանական իրականության մեջ՝ առաջավոր հասարակական մտքի կողմից: Ինչ վերաբերվում է Իսահակյանի «Եղբայրության կամ թե սիրո» բանաստեղծությանը, ապա այն ևս գտել է իր արձագանքը հետագա շրջանի հայ պոեզիայում, թեև մեկնաբանվել միանգամայն այլ ոգով: Այստեղ մենք գործ ունենք այն դեպքի հետ, երբ տարբեր դարաշրջաններում ապրած երկու բանաստեղծների միանման գաղափարները կարող են գնահատվել տրամագծորեն հակառակ դիքերից: Մենք ի նկատի ունենք Եղիշե Չարենցի Վենետիկյան էլեգիան: 1925 թ. շրջագայելով արտասահմանում՝ Չարենցը մարտ ամսին այցելում է Վենետիկում ապրող բանաստեղծ Ավետիք Իսահակյանին: Նա մեկ ամիս մնում է Վենետիկում, Վարպետի ընկերակցությամբ դիտում դոժերի քաղաքի հրաշալիքները: Ամբողջ ժամանակ նրանց զրույցը պտտվում էր հայ ժողովրդի անցյալի ու ապագա հարցերի շուրջը: Այդ հանդիպումների տպավորության տակ Չարենցը գրել է «Էլեգիա, գրված Վենետիկում» բանաստեղծությունը, որտեղ նա յուրովի ուրվագծել է Իսահակյանի բանաստեղծական կերպարը: «Էլեգիայում» կարդում ենք այսպիսի տողեր.

Կյանքում տեսել էր նա լոկ տերեր
Եվ բազմություններ կամակատար,
Որ ընդունակ են կյանքը կրել,
Ինչպես օրենք մի հավերժական:
Եվ նա ատել էր այդ տերերին,
Բայց ավելի՝ այդ թաբուները,
Նրանց, ում կյանքը անիծել է
Եվ դարձրել է ճորտ ու գերի:
Եվ նա ասում էր.- Երկրի վրա
Գազա՛ն է գա՛յլ է մարդը մարդուն:
Կյանքի օրենքն է հավերժական,
Որ մեկը լաթ է, մեկը՝ արդուկ:[20]

Տարիներ անց, վերհիշելով վենետիկյան հանդիպումներն ու «Էլեգիան», Իսահակյանն անկեղծ պարզությամբ հավաստել է, թե **Եղիշեի** հետ զրուցելիս ինքը նման տրամադրություններ չի արտահայտել ամենևին, և որ նա իզուր է այդ մտքերն իրեն վերագրել:[21] Սակայն Վարպետի տարակուսանքն անտեղի է. ակներև է, որ «Էլեգիայում» Իսահակյանին վերագրվող խոհերը Չարենցը ծաղկաքաղ է արել նախահեղափոխական շրջանի նրա պոեզիայից՝ նահիրական հին պոետին ստվերագծելու համար: Էլեգիայի գրեթե ամեն տողում կարելի է մատնացույց անել Իսահակյանի այս կամ այն որոշակի բանաստեղծությունը-այլ հարց է թե դրանք ինչպես են մեկնաբանված: Ի մասնավորի, վերը բերված հատվածում Չարենցը, անկասկած, աչքի առաջ է ունեցել «Եղբայրության կամ թե սիրո» բանաստեղծությունը: Իսահակյանի «Տեր կամ ստրուկ պիտի լինես» խոսքի արձագանքն են Չարենցի հիշած «**տերերն**» ու «**կամակատար թաբուները**», իսկ հասարակական հուժկու հնչեղություն ունեցող «**մուրճ կամ զնդան**»ը նրա գրչի տակ բառափոխվելով՝ դարձել է առտնին «**լաթ կամ արդուկ**»:

Բայց ինչո՞ւ միայն կամակատար թաբուներ կամ հնազանդ ամբոխ. ոչ այլ ոք, քան Ավ. Իսահակյանն է, որ տակավին ջահել հասակում նշավակում էր այս աշխարհի տիրակալներին այսպիսի հրացայտ խոսքով. «Եվ ամենամեծ ու ամենահիմար ստրուկը դու ես, ո՛վ արքայից-արքա, որ սիրով ու նախանձով իշխում ես ստրուկների ամբոխի վրա: Ստո՛ր մարդ-մարդուկ, իշխում ես ստրուկների վրա...»:[22]

Ավելի ուշ Չարենցը համոզվեց, որ թեև հեղափոխությունը ջնջում է տիրոջ և ստրուկի օրենքը, բայց իշխելու մորալը և ստրկամտությունը ժանգի պես մնում են կված մարդկային հոգիներին, և այդ ժանգառքը փարատելու համար հարկավոր է այն «**լուսավառ ճրագը**», որի մասին դեռևս 1905 թ. երազում էր Ավ. Իսահակյանի Արծվամանուկը: 1933 թ., դիմելով Գյոթեին, բայց, ըստ էության, համաձայնվելով Իսահակյանի հետ, Չարենցը հետևյալն է գրում ոգու այդ տերերի և ճորտերի մասին.

Օ՜, Ոլիմպիացի՛, այս աշխարհում երբ
Չեն լինի Ոգու տերեր ու ճորտեր-
Կհնձե կրկին բազմաբեղուն բերք,
Եվ կրկի՜ն, կրկի՜ն ուղիներում մեր
Երգի դիցուհին մեզ կառաջնորդե:[23]

1950-ական թվերին վարպետի արած մի անպաճույճ խոստովանությունն ավելի քան հստակեցնում է «մուրճի» և «զնդանի» խորհուրդը և մի անգամ ևս հաստատում, որ կես դար առաջ գրած նրա բանաստեղծության ներքին ազդակը ոչ թե մարդ-անհատի հեղհեղուկ ճակատագիրն էր, այլ հարազատ ժողովրդին վիճակված սոցիալական չարիքն ու ազգակործան աղետը. «Այն միտքը, որ ես արտահայտել եմ, թե «Մուրճ կամ զնդան պիտի լինես»,- դա ճիշտ է, որովհետև հայ մարդը տեսնում էր, որ իր աչքի առաջ ոչնչացնում են իր ժողովրդին, շահագործում և ճնշում նրան, նա պետք է մի բարկության նշան արտահայտեր: Այդ բոլորը դառնության հետևանք է»:[24] Ազգային աղետի տագնապը ստիպում է բանաստեղծին դեռևս նետել իր քարոզած մարգարեական պատգամները և Գյոթեի նման անողոք ճշմարտության խոսքն է ուղղում իր ժողովրդին՝ դու դարերով եղել ես զնդան, այժմ պիտի դու մուրճ լինես:

Թերևս գտնվի մեկը, որ այսուամենայնիվ առարկի, թե իր բանաստեղծությունն Իսահակյանը գրել է «Կոփտական երգ»-ից անկախ: Այդ դեպքում հարկ կլիներ դրան պատասխանել իր իսկ Գյոթեի խոսքով: Ֆրանսիացի մի բանաստեղծ Գյոթեին է ուղարկում իր բանաստեղծությունը. վերջինս, ուշադիր ծանոթանալով, գտնում է այն ***խորիմաստ ու հանդուգն*** գրված և միաժամանակ նկատում նրա վրա իր Մեֆիստոֆելի թողած ազդեցությունը: Եվ չնայած դրան, Գյոթեն ասում է այդ բանաստեղծության մասին. «Այն հոյակապ է, եթե գրվել է առանց «Ֆաուստը» կարդալու և նույնքան հոյակապ, եթե գրվել է «Ֆաուստը» կարդալուց հետո»:[25]

Այսպես էր և Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունը:

Հղումներ

1 ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, II, № 5:
2 Մեջբերումը կատարում ենք ըստ բանաստեղծության ինքնագրի (ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, II, № 13): Հմմտ. նաև՝ Ավ. Իսահակյան, Երկ. Ժող., հ. 1, 1973, էջ 164:
3 «Մուրճ», 1904, № 8, էջ 13:
4 Տես «Արոր», 1907 թ. Սեպտեմբերի 6, № 4:
5 «Ամենքի կռիվն ընդդեմ ամենքի» (լատ.):
6 Նկատի ունի անգլիացի մատերիալիստ-փիլիսոփա և պետական գործիչ Թոմաս Հոբսի (1588–1679) «Քաղաքացու մասին ուսմունքի փիլիսոփայական տարրերը» երկը, որում «Ամենքի կռիվն ընդդեմ ամենքի հոչակում է իբրև բնական անհրաժեշտություն:
7 A. Schopenhauer, Die Welt als Wille und Vorstellung, Leipzig, 1873, §61, տ. 392:
8 «Բանաստեղծություններ», Բաքու, 1903, էջ 38:
9 Ժողովածուն լույս տեսավ 1945թ. Մոսկվայում՝ պոեմի հետ միասին:
10 Ա. Դեյչի նամակը «Գոսլիտիզդատի» դիրեկտոր Պ. Ի. Ջագինին 1944 թ. հունվարի 3-ին (տես «Գրական Թերթ», 1975 թ. № 4):
11 «Ես մի նոր զանգ եմ» բանաստեղծության մասին «Գարուն» ամսագրի 1975 թ. № 6-ում (էջ 77-81) զետեղված հոդվածի հեղինակ Լ. Գևորգյանին անշուշտ հայտնի չի եղել, որ այդ բանաստեղծությունն առաջին անգամ տպագրվել է 1941 թ. Թիֆլիսում՝ Վրաստանի սովետական գրողների միության «Գրական Հանդես» ամսագրի № 2-ում: Ճիշտ չէ նաև այն պնդումը, թե «Ես մի նոր զանգ եմ» բանաստեղծությունը մերժվելուց հետո Իսահակյանը գրել է «Տիեզերական զանգը», այն սկսելով կախման կետերով՝ «անուղղակիորեն ազդարարելով, որ շարունակությունն է ինչ-որ այլ մուտքի»: Նախ՝ «Տիեզերական զանգը» գրվել է 1899 թ. սեպտեմբերին, իսկ «Ես մի նոր զանգ եմ» բանաստեղծությունը գրաքննության կողմից մերժվել է նույն թվի դեկտեմբերին:
Կախման կետերը «Տիեզերական զանգի» «Եվ ես ապատում և անապատում» տողի սկզբում բացակայում են թե՛ բանաստեղծության ձեռագրում (ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, II, № 20) և թե՛ առաջին չորս տպագրություններում («Անահիտ», Փարիզ, 1899, № 12, Բանաստեղծությունների ժողովածու՝ «Հին-նոր երգ ու վերքերից», Բաքու, 1902 թ., «Բանաստեղծություններ», Բաքու, 1903) և հայտնվել են միայն 1908 թ. «Երգեր ու վերքեր» ժողովածուում:
Բանաստեղծության մերժված շարվածքի լուսատիպը պահվում է Երևանի գրականության և արվեստի թանգարանում-Իսահակյանի ֆոնդ՝ II, N 2216: Բանաստեղծն ինքը դրանք դիտել է որպես առանձին և ինքնուրույն գործեր: Բացի այդ, «Ես մի նոր զանգ եմ» բանաստեղծությունն ունի գաղափարական միանգամայն ուրույն շեշտ և պետք է արժանի տեղ գրավի Վարպետի տպագիր ժառանգության մեջ:
12 «Տարազ» 1905, № 6, էջ 83:
13 Կատակերգությունը բնագրում ունեցել է երկու վերնագիր՝ «Die Grobkophta» կամ «Die Mystifizierten»: -Կոփտա–հին եգիպտական իմաստուն քուրմ: Նույն Կալիոստրոյի թեմային է նվիրված Շիլլերի «Dez Geisterseher» («Ոգեհմա») անավարտ վեպը (1787–1789), որտեղ գլխավոր հերոսներից մեկի դերում ուրվագծված է խորհրդավոր հայի կերպարը:
14 Թարգմ. գերմ.՝ Ա. Մուշեղյան, հմմտ. Գյոթե, Բանաստեղծություններ, Հայպետ.Հրատ, 1946, էջ 32:
15 Goethes werke, in yehn Bänden Bd.5, Weimar, 1957, st. 401. Թարգմ՝. Ալբերտ Մուշեղյան:
16 Գ.Ա.Թ., Ավ. Իսահակյանի ֆոնդ II, № 2124: Թերթի հակառակ երեսին բանաստեղծը կատարել է հետևյալ գրառումը «Էպոս» վերտառությամբ. «Գրավեք լավ դիրքեր ծովերի ու մեծ ճամբեքի վրա և կտիրեք մեծ դռներին: Ապրեք հազար-հազար տարիների համար և մեռեք հազար-հազար տարիների համար:
Թռեք մահը այսպիսի սիրով ու ոգեվառված ինչպես թիթեռը դեպի բոցը, ինչպես երեխան մոր գիրկը»:
17 Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Եր., 1977, էջ 273:
18 ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, I, № 324՝ «Դատական գործ» (Տես 1909 թ. դեկտեմբերի 18-ի, 1910 թ. նոյեմբերի 3-ի և նոյեմբերի 5-ի թվակիր զեկույցները):
19 Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Եր., 1977, էջ 275:
20 Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ.2, Եր., 1963, էջ 252:
21 Հ. Ղանալանյան, Ավ. Իսահակյան, Եր., 1975, էջ 17:
22 Ավ. Իսահակյան, Հիշատակարան, էջ 237:
23 Ե. Չարենց, Ընտիր երկեր, Եր., 1955, էջ 215:
24 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1975, № 3, էջ 47:
25 Eckermann. Gespräche mit Goethe. 1956, Berlin, S. 550. (Հմմտ. նաև՝ Էկերման, Զրույցներ Գյոթեի հետ, Երևան, 1975, էջ 473):

Ուրիշները ի՞նչ կ՚ըսեն
– Կրնա՞նք ապաքաղաքական ըլլալ եւ, մանաւանդ, ընդունելի՞ ուղի մըն է այդ

Էրիզ Սովէ

“Peut-on être apolitique et, surtout, est-ce une voie acceptable?” Le Devoir, 2026-01-28, Montréal

Սպիտակ տունէն ստացուող երբեմն ամբողջովին արտառոց եւ գերիրապաշտ լուրերու տեղատարափին տակ, կրնաս փորձուիլ մտիկ չընել, նոյնիսկ գլուխդ աւազին մէջ թաղել: Տարուան սկիզբէն ի վեր մասնաւորապէս տագնապայարոյց են օրուան լուրերը: Տոնալտ Թրամփի որոշումները, – եւ մեր իսկ ղեկավարներու պատասխանները, – յառաջացուցին բանավէճի ուժեղ բեւեռացում մը, որ երբեմն հրապուրիչ կը դարձնէ «մտային նահանջը»:

Ես դասատու եմ Մոնթրէալի համալսարանը, ուր դասընթացք մը կ՚աւանդեմ ընկերային շարժումներուն մասին: Վերջերս, ուսանողներէս մէկը զիս ուղղակի յանկարծակիի բերաւ՝ հարց տալով, թէ կարելի՞ է ըլլալ ապաքաղաքական: Ձարմացած, վայրկեանին չկրցայ ամբողջական գոհացուցիչ պատասխան մը տալ՝ անհանգիստ զգալով մէկ կողմէն սեփական համոզումներուս եւ միւս կողմէ դաստիարակի դերիս միջեւ:

Իրեն պատասխանեցի մօտաւորապէս, թէ կատարելապէս օրինական է, որ անհատ մը ինքզինք ապաքաղաքական յայտարարէ, այսինքն՝ թէ չէ հետաքրքրուած քաղաքական խնդիրներով, չի մասնակցիր հանրային բանավէճերուն եւ յանձնառութիւն չի վերցներ քաղաքային կեանքին մէջ: Այս կեցուածքը կրնայ բացատրուիլ բազմաթիւ պատճառներով՝ կողմնակալ վէճերէն յոգնածութիւնը, քաղաքական ընտրանիին նկատմամբ անվստահութիւնը, անկարողութեան զգացումը, կամ տակաւին անձնական որոշ հանգստութիւն մը պահպանելու նպատակով: Ուրեմն, բացարձակ անհատական տեսակէտէն, քաղաքականապէս յանձնառու չըլլալը պաշտպանելի ընտրանքն մըն է:

Սակայն, աւելցուցի, եթէ որոշ քաղաքական կողմնորոշումներ մեզ ներքնապէս կ՚անհանգստացնեն, լռութիւնը մեր քաղաքացիական պատասխանատուութիւնը լքելու ձեւ մը չէ:

Ժողովրդավարական տեսանկիւնէ մը, քաղաքացիներու մասնակցութիւնը քաղաքական օրինականութեան հիմունքներէն մէկը կը հանդիսանայ: Ինքնին հասկնալի է՝ քաղաքական որոշումները կը ձեւաւորեն պայմաններու ամբողջութիւնը, որոնց մէջ մենք կը զարգանանք, – առողջապահութեան եւ կրթութեան համակարգերը, աշխատանքի կազմակերպումը, ելեւմտականութիւնը, գաղթային քաղաքականութիւնները, բնութեան պաշտպանութիւնը եւ, ընդհանուր առմամբ, մեր իրաւունքներն ու ազատութիւնները: Եթէ կը դատենք, թէ ամեն բան լաւ կ՚ընթանայ այս մարզերուն մէջ, քաղաքական բանին նկատմամբ անհետաքրքրութիւնը կրնայ արդարանալի թուիլ:

Իսկապէս, ենթադրեալ ապաքաղաքականութիւնը շքեղանք մըն է՝ լայնօրէն վերապահուած արեւմտեան ժողովրդավարութիւններու քաղաքացիներուն: Երբ վստահութիւն կ՚ունենանք մեր ղեկավարներուն եւ տեղւոյն վրայ գտնուող հակակշռութեան մեր կառուցակազմերուն վրայ, երբ մեր իրաւունքները, մեր

անվտանգութիւնն ու մեր կեանքի մակարդակը քիչ թէ շատ ապահովուած են, կրնանք մենք մեզի արտօնել կտրուիլ քաղաքականութենէն: Այս շքեղանքը սակայն մատչելի չէ ճնշուած եւ լուսանցքայնացուած, խտրակնացուած կամ անկայունացուած խումբերուն: Անոնց գոյութեան պայմանները ուղղակիօրէն կախեալ են քաղաքական որոշումներէ, ինչ որ իրենց կը պարտադրէ քաղաքականօրէն յանձնառու դառնալ՝ ոչ թէ գաղափարաբանութեան, այլ կարիքի պատճառաւ:

Արդ, ապաքաղաքականութիւնը կը ներառէ վտանգներ՝ որքան մեզի համար, նոյնքան հաւաքականութեան ամբողջութեան համար:

Առաջին՝ հանրային բանավէճին մերժել մասնակցիլ կը նշանակէ ընտրուած իշխանութեան ձգել ազատութիւնը տալու կարեւոր հետեւանքներով որոշումներ, առանց խորհուրդ առնելու, ոչ իսկ հանրային կարծիքին տեղեկանալու պատրանքը տալու: Կրնանք ապահով զգալ՝ հաւատալով, որ մեր ղեկավարները մեզի ի նպաստ կը գործեն, որ քաղաքականութիւնները քննարկուած ու խորապէս մտածուած են, որ հաստատութիւնները իրենց դերը կը խաղան եւ արգիլումի ու հակակշռութեան կառուցակազմերը կը գործեն: Սակայն երբ, ինչպէս Միացեալ Նահանգներու պարագային, նախագահ մը բացայայտօրէն կը հաստատէ *Նիւ Եորք թայմզի*ն տուած երկար հարցազրոյցի մը ընթացքին, թէ ինք կաշկանդուած է միայն «իր անձնական բարոյականով», այդ վստահութիւնները արագ կը փլչին:

Երկրորդ, երբ ժողովուրդէն մեծ հատուածներ կը քաշուին հանրային ոլորտէն, ամենէն գործունեայ խումբերն են, յաճախ՝ աւելի արմատական կամ աւելի բեւեռացեալ դիրքորոշումներու տէր, որոնք կը գրաւեն ամբողջ տարածքը: Պատմութիւնը ցոյց կու տայ, թէ զանգուածային ապաքաղաքականացման ժամանակները կը նպաստեն ժողովրդահաճութեան, գաղափարական արմատականացման եւ երբեմն նոյնիսկ բռնապետական շեղումներու աճին:

Ներկայ շրջարկին մէջ, ուր երկարամեայ դաշնակից մը կը սպառնայ մեր ինքնիշխանութեան եւ ուր մեր ղեկավարները տենդագին կ՚որոնեն նոր գործընկերներ, երբեմն ի գին կասկածելի դաշնութիւններու, ապաքաղաքականութիւնը ինծի կը թուի քիչ խոհեմ անձնական ընտրանք մը: Ապաքաղաքական ըլլալը իրապէս չէզոք ըլլալ չէ: Լռութիւնը քաղաքական կեցուածք մը կը դառնայ՝ կամ իբր ծածուկ համախոհութիւն մը կամ իբր խորունկ անտարբերութիւն մը հաւաքական ճակատագրին նկատմամբ, այնքան ատեն որ գործադրուած քաղաքականութիւնները մեզի ուղղակի չեն առնչուիր:

Ամփոփելու համար, եթէ ապաքաղաքականութիւնը կրնայ ըմբռնուիլ որպէս անհատական յարգելի ընտրանք մը, հաւաքականօրէն կը մնայ խնդրայարոյց: Չենք կրնար յարատեւօրէն ապրիլ քաղաքականութենէն դուրս, որովհետեւ ան անխուսափելիօրէն ձեւ կու տայ մեր գոյութեան: Ազատ, արդար եւ բարգաւաճ ընկերութիւն մը յարատեւ ճիգեր կը պահանջէ: Քաղաքական անտարբերութիւնը շքեղանք մըն է, որ հաւանաբար այլեւս չունինք:

Թարգմանությունը՝ Վրէժ-Արմէնի

Յ.Գ. Կարիքը կամ մատնանշելու հանգիտութիւնները հայ իրականութեան հետ, մանաւանդ մտածող, մտաւորական մեր ընտրանիի լռութեան... (Վ.-Ա.)

ՀՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՋԱԶՆՈՒՆԻ
Ինչ պէտք է ըլլայ մեր ուղին
(հատուածաբար)

Պէ՞տք է արդեօք, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը իրան վերապահի այդ դերը ու ձգտի նորից իր ձեռն առնելու Հայաստանի պետական ղեկը: Նախադասելի չէ՞, որ մի ուրիշ կուսակցութիւն փոխարինի նրան:

Անշուշտ, լաւ կը լինէր, եթէ հայ իրականութեան մէջ գոյութիւն ունենար Դաշնակցութիւնից աւելի կարող ու աւելի ձեռնհաս քաղաքական կազմակերպութիւն: Դժբախտաբար, այդպիսի կազմակերպած ոյժ չկայ ասպարեզում և դարձեալ Դաշնակցութիւնն է, որ պիտի ճգնի անել իր լավագոյնը:

...Դաշնակցութեան հակառակորդներն ու քննադատողները չպիտի մոռանան հետեւյալը.- Դաշնակցական իշխանութիւնը՝ իր անփորձութիւններով ու թուլութիւններով, իր թերութիւններով ու պակասութիւններով, նոյն իսկ իր ախտերով հանդերձ՝ ունի մի անփոխարինելի առաքինութիւն, նա երկրի իշխանութիւնն է, կապած երկրի ու ժողովուրդի հետ անքակտելի կապերով, իր բոլոր ջիղերով, իր միսմարմնով: Նա անջատ մարմին չէ, անջատ ապրումներով, անջատ ցանկութիւններով ու ձգտումներով: Հայաստանի կեանքը՝ նրա իսկ կեանքն է և մահը՝ նրա մահը: Նա մի անբաժան օրգան է հաւաքական մարմնի, որի անունն է «հայ ժողովուրդ»,- միշտ արթուն, միշտ գործօն ու միշտ էլ շատ զգայուն: Նա կարող է չգիտենալ կառավարել, բայց նա երբեք և ոչ մի պայմաններում չի մոռանայ ու չի դավաճանի հայ ժողովուրդի դարեւոր դատը:

Ամէն մի հարուած, որ ուղղուած է հայ ժողովուրդի ու հայկական դատի դէմ,- որտեղից էլ գայ այն՝ դրսից թե ներսից, աջից թե ձախից – Դաշնակցութիւնը ընդունում է առաջին հերթին իր կրծքի վրայ: Եւ եթէ՝ մի սեւ օր՝ Դաշնակցութեան կրծքին հասցրած հարուածը մահացու լինի (ինչպէս մարգարէանում են այսօր Բոլշեւիկները), նա կլինի մահացու՝ ներկայ պատմական շրջանում՝ նաեւ հայկական դատի համար:

Չհասկացողներին այս խոսքը կարող է թալ շատ հանդուգն ու շատ էլ ծիծաղելի: Փորձեմ բացատրել:

Անհատ Դաշնակցականներ ու ամբողջ խումբեր կարող են կոտորուել, բանտերը լցուել, աքսորուել, ցրուել աշխարհի չորս կողմը, չէզոքանալ կամ անցնել հակառակ դրօշների տակ: Կուսակցական շարքերը կարող են նոսրանալ, նվազել. այս կամ այն մարմինները կարող են կազմալուծուել, կուսակցական կեանքը՝ իր ամբողջութեան մէջ՝ կարող է խանգարուել, նոյն իսկ ընդհատուել աւելի կամ պակաս ժամանակով: Վերջապէս, կարող է վերանալ ասպարէզից ու մոռացուել իսպառ «Դաշնակցութիւն» անունն անգամ:



Բայց սա դեռ չի լինի Դաշնակցութեան մահը:

Մահը կը գայ այն օրը միայն, երբ հայ ժողովուրդը կորցնի այն հոգեբանութիւնը, դաւաճանի այն սկզբունքներին, մոռանայ այն իդէալները, որոնք ծնունդ են տուել Հ.Յ. Դաշնակցութեան և ամբողջ երեսուն տարի պահել են նրան հայ մարտնչող բանակի առաջին շարքերում:

Դաշնակցութիւնը կազմուած է ոչ միայն այն մի քանի հազար մարդուց, որ արձանագրուած են կուսակցական տեսարանների մէջ. Դաշնակցութեան շրջանակները շատ աւելի լայն են ու արմատները շատ աւելի խոր: Դաշնակցութիւնը հայ բողոքի մարմնացումն է, նրա մարտական ուժը, որ ծառացել է ստրկութեան դէմ և իր իրաւունքն է պահանջում:

Ցուցակագրուած կուսակցականները չեն, որ կազմում են Դաշնակցութեան ոյժը: Ոյժը գաղափարի մէջ է, - այն առողջ, կենսունակ, հասունացած ու անխորտակելի գաղափարի – որ կազմում է Դաշնակցութեան էութիւնը և որը՝ սերունդից սերունդ՝ խոր արմատներ է ձգել հայութեան հաւաքական հոգու մէջ:

ՀՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՋԱԶՆՈՒՆԻ,

ԵՐԿԵՐ էջ 217-220 ԵՐԵՎԱՆ 2025 թ.

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ

ԴՐՕՇԱԿ